



100

7074

Scaphium affine  
Male      Duszf

49      5/16 69



11.

891.99  
Բ-37

891.99-7

# ԳԵԼԵ—ԳՈՒՂԻ

Գ Բ Ե 8

11.

Մ. Վ. ԲԱՐԵՍՈՒԴԱՐԵԱՆՑ

Հ 67885  
195

Ամբողջական

րոյ

№

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԵԽ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ

1883

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

~~1242~~

Доз. цензурою. Тифлисъ, 25-го Октября 1882  
Типогр. М. Вартанянца и К°- Троиц. пер. д.

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Հարկ չը կայ ասել, թէ քաղաքական աշխարհըն արդէն ընդունած է զուարձաբանութիւնը իբրև կեանքի օգտակար միջոցներից մին. քանզի զուարձաբանութիւնն գէթ առվալը մի կը փարատէ կը վանէ սրտամաշ մտածմունքը, կը ցըուէ հոգեկան մելամաղձութիւնները և կը մեղմէ տիսրութիւնը, մարմնական ցաւերը:

Հին ժամանակներում կայսերաց, թագաւորաց, սուլթանաց, իշխանաց, շահերի, խալիֆաների, նախարարների և մելիքների մօտ կը գտնուէին զուարձաբաններ, առակախօսներ, ծաղրախօսներ, սրախօսներ, միմոսներ և մնջկատակներ, որոց զուարձաբանութեան շնորհիւ ոչ միայն կը թեթևնալին նոցա առուր կրած դատական ծանրութիւններն, այլ և երբեմն նոցա պաշտօնական անդառնալի մահավճիռներն անգամ կը փոխուէին և լանցաւորք կ'ազատուէին կախաղանի և աքսորանքի դատապարտութիւնից:

Ղարաբաղի Վարանդալ գաւառի Աւետարանոց գիւղում բնակող Բ. Մելիք-Շահնազարի մօտ ևս գլտնուած է Պօղոս անունով մի հայ զուարձաբան, որի անունը սոյն Մելիքը փոխած է «Պլլը-Պուղի», այսինքն է խենդ Պօղոս: Նատ և շատ ցաւալի է, որ Պուղին ունեցած չէ ժամանակակից մի զրող, որով իւր խօսածներն ամբողջապէս լուս տեսնէին, իւր լիշտատակն անմահանար և մեր աղքատ գրականութիւնը ճոխանար: Աւաղ, Հայաստանում, ո՛

գիտէ, քանի քանի ալսպիսի զուարճախօսներ, առակախօսներ և սրախօսներ եղած են, որոց խօսածներն, առանց լոյս տեսնելու, յօդս ցնդած և կորսուած են։ Պարզապէս կ'երեւի, որ մեր նախնիք ընաւ կարեղութիւն տուած չեն ալս ճիւղին։  
Ըստ իմ կարծեաց Պուղու պարզ առակներն, զուարճաբանութիւններն և սրախօսութիւններն հայի համար աւելի արժէք ունին, քան թէ Եզոպոսին, Նասրասպին Հօճային, Տանթէին, Քրիլովին և Լաֆօնտէիներն, որովհետեւ հայկական կեանքից բըլիսած լինելով՝ աւելի յարմար են հայկական սովորութեանց, հայկական ընաւորութեանց, հայկական առտնին ընտանեկան կենաց, վարուց և բարուց։ Այս պատճառաւ թէ և ուշ, (Լաւ է անագան քան ոչ երբէք), սակայն հետամտելով, որչափ կարելի էր ձեռք բերել, 'ի մի վայր հաւաքեցի ծերունիներից Պուղու խօսածները, որք աւանդութեամբ մնացած էին հասարակութեան մէջ, զորս և ահա լոյս հանելով կը նուիրեմ մեր սիրելի Ազգին, յուսալով որ ամեն ոք կարող է իւր բաժին խրատական օգուտները քաղել սոյն գործից։

Մեր սիրելի ընթերցողաց և հետաքրքիր բանասիրաց մի ճաշակ մատակարարելու նպատակաւ պահպանեցի Պուղու և ընդ սմին Վարանդու գաւառի լեզուն, ոճը և դարձուածները և դժուարիմաց քառերի համար յատկապէս բառարան շինեցի գըրքիս վերջում 'ի գիւրութիւն ընթերցողաց։ Պուղու

օտար լեզուաւ խօսածները գրեցի գրականական լեզուաւ, իսկ լսելեաց անախորժ զուտըճաբանութիւնները բաց թողուցի:

Պուղին ծնած է մօտաւորապէս 1731-թուականին Սւետարանոց գիւղում, մեռած է 1810-ին և թաղուած է քարայրում, որ գտնուում է Շօշու և Արկաթալու գիւղերի մէջ տեղը:

Նկատելով որ գրականական ասպարիգում առաջին անգամն է որ մեր սիրելի ընթերցողք կը ծանօթանան Դարաբաղի գաւառական բառբառին. Նկատելով որ այս բառբառի խորթութիւններն, բառերի անկանոնութիւններն, հոլովների զարառութիւններն, դերանունների անհարթութիւններն, բայերի կրծատութիւններն ևն. մեծ գժուարութիւններ ալէտք է պատճառին կարդացողին. վասն որոյ, բաց ի բառարանից, պարտք համարեցի յօրինել նաև մի համառօտագոյն Քերականութիւն: Յուսալով որ մեր ընթերցողք ի նկատի առնելով կարող են օգուտ քաղել սորանից:

Ա.Հայ Քերականութիւնն.

### ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Գրէթէ առով սկսուած անուանց սեռականի և սրանից շինուած հոլովների սկզբնատառերն մեծ մասամբ կը փոխուին ը:

- |                 |              |                      |
|-----------------|--------------|----------------------|
| Ա. Աստուծ,      | Աստուած.     | Ակուր, Յակովը        |
| Ա. Ըստուծու,    | Աստուծոյ,    | Ըկուբին, Յակովբի     |
| Տ. Ըստուծու,    | Աստուծոյ,    | Ըկուբին, Յակովբի,    |
| Հ. Աստուծ,      | Աստուած,     | Ակուբը, Յակովբը,     |
| Բ. Ըստուծանայ,  | Աստուածանից, | Ըկուբան, Յակովբից    |
| Գ. Ըստուծանաւ,  | Աստուծով.    | Ըկուբաւ, Յակովբով    |
| Դ. Ըստուծանում, |              | Ըկուբում, Յակովբում: |

- |             |         |                   |
|-------------|---------|-------------------|
| Ա. Ադամ;    | Ադամ;   | Աղքատ, Աղքատ,     |
| Ա. Ըդամայ,  | Ադամի,  | Ըղքատի, Աղքատի,   |
| Տ. Ըդամայ,  | Ադամի,  | Ըղքատի, Աղքատի,   |
| Հ. Ադամը,   | Ադամը,  | Աղքատը, Աղքատը,   |
| Բ. Ըդաման,  | Ադամից, | Ըղքատան, Աղքատից, |
| Գ. Ըդամաւ,  | Ադամով, | Ըղքատաւ, Աղքատով: |
| Դ. Ըդամում, |         |                   |

- |              |          |                 |
|--------------|----------|-----------------|
| Ա. Անծուղ,   | Ածուխ,   | Աման, Աման,     |
| Ա. Ընծուղի,  | Ածուխի,  | Ըմանի, ամանի,   |
| Տ. Ընծուղի,  | Ածուղի,  | Ըմանի, ամանի,   |
| Հ. Անծուղը,  | Ածուխը,  | Ամանը, ամանը,   |
| Բ. Ընծուղան, | Ածուխից, | Ըմանան, ամանից, |
| Գ. Ընծուղաւ, | Ածուխով, | Ըմանաւ, ամանով: |
| Դ.           | —        |                 |

- |             |                  |  |
|-------------|------------------|--|
| Ա. Գիւգի,   | Գրիգոր,          |  |
| Ա. Գիւգիւն, |                  |  |
| Տ. Գիւգիւն, |                  |  |
| Հ. Գիւգին,  |                  |  |
| Բ. Գիւգեան, | կամ Գիւգիւնանայ, |  |
| Գ. Գիւգեաւ, | կամ Գիւգիւնանաւ  |  |

Ի վերջաւորուած լատուկ և հասարակ անուններն քիչ բացառութեամբ այսպէս են հոլովուած, և գործ ածուած՝

Սագի, Սարգիս, Թիւնի, Յարութիւն, Մեքի, Միքայէլ, Հիւգի, բեքի, գեարի (գարի) ևն.

Իսկ մի քանի լատուկ և հասարակ անուններ գործածուած են հետևեալ ձեռով։

Ո. Պուղի, Պօղոս,

Ս. Պուղուն

Տ. Պուղուն

Հ. Պուղին,

Բ. Պուղունանայ,

Գ. Պուղաւ.

Մոսի, Մովսէս, Գեափի, Դարբիէլ, Մարտի, Մարտիրոս, ձի, ջորի, տանձի, խնձորի, վարդի, (Վարդենի) գինի, Հիւնի, ևն։

ԵԶ.

Ո. Փատ, փայտ,

Ս. Փատի

Տ. Փատի

Հ. Փատը

Բ. Փատան,

Գ. Փատաւ,

Սար, ծառ, քար, հաց, ևն։

ՀԱԳ.

Փատեր,

Փտերի,

Փտերի,

Փատերը,

Փտերան,

Փտերաւ,

ևն։

Ո. Ցորեն

Ս. Ցորնի,

Տ. Ցորնի,

Ցորեններ,

Ցըրունների,

Ցըրունների։

Հ. Ցորենը,  
 Բ. Ցորնան,  
 Գ. Ցորնաւ,  
 Տորեն, տորոն, ներկ,  
 Թորոն, թորնի, թոնիր և այլն:  
**ՀԱՅՐ**

Ա. Հար,	Հայր,	Հարեր,
Ա. Հօր		Հօրանց,
Տ. Հօր		Հօրանց,
Հ. Հարը		Հարերը,
Բ. Հօրան,		Հօրանցանայ,
Գ. Հօրաւ,		Հօրերաւ:

Մար, մօր, մայր. աղբեր, աղբօր, աքեր, աքօր,  
գոյր, կնքահար, կնքահօր, կնքամար, ևն:

<b>ՈՄՆ.</b>	<b>ՈՎՆ.</b>
Ա. Մինը,	Հովն,
Ա. Մինին,	Հի՞ւր,
Տ. Մնու,	Հի՞ւր,
Հ. Մինը,	Հի՞ւր,
Բ. Մինան,	Հի՞ւրանայ,
Գ. Մինաւ կամ մնաւ:	Հի՞ւրանաւ,
Դ.	Հի՞ւրանումի

### ՄԻՒՍ.

Ա. Մեկալը,	Մըկալունք
Ա. Մըկալին,	Մըկալունց,
Տ. Մկալին,	Մըկալունց,
Հ. Մեկալը,	Մեկալները,
Բ. Մկալան,	Մեկալներն,
Գ. Մկալաւ,	Մեկալներաւ:

ՀԱԽ, ԱՄԵՆՔՆ.

ԵՐԿՈՒՔԵԱՆ, ԵՐԵՔԵԱՆ ՀԱՅԼՆ

Ա. Լոխ,	Ըրկոքան,
Ա. Լոխին,	Ըրկուքանին,
Տ. Լոխին	Ըրկուքանին,
Հ. Լոխը,	Ըրկոքանը,
Բ. Լոխան,	Ըրկուքանան,
Գ. Լոխաւ	Ըրկուքանաւ:

Երեքան, ըրըքանին, չուրեքան, չըրուքանին, վըցեքան,  
վըցըքանին, ևն:

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ (\*)

Ա. Երկու,	Երկու,	Օխտը
Ա. Ըրկունի,		Օխտին
Տ. Ըրկունի		Օխտին
Հ. Երկունը,		Օխտը
Բ. Ըրկունան,		Օխտան
Գ. Ըրկունաւ		Օխտաւ:

Ա. Երեք,	Երեք,	Օթ:
Ա. Ըրեքի,		Օւթին
Տ. Ըրեքի		Օւթին
Հ. Երեքը,		Օժը
Բ. Ըրեքան,		Օւթան
Գ. Ըրեքաւ		Օւթաւ:

Ըրեսուն, ըրըսունի, Երեսուն, քոասուն, քոըսունի,  
հարիւր, հըռուի հզեր, հզերի, հազար:

(\*) Մին թուական անունն գործ է ածուած թէ ՈՒՆ բառի եւ  
թէ ՄԻ բառի տեղ:

Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

ԵՍ

- Ա. Ես  
Ա. Իմ  
Տ. Ինձ,  
Հ. Ինձ,  
Գ. Ընձանայ  
Ն. Ընձանաւ

ՄԵՆՔ

- Մունք,  
Մեր,  
Մեզ,  
Մեզ  
Մըզանայ  
Մըզանաւ

ԴՈՒ

- Ա. Դիւ  
Ա. Քու, Քո,  
Տ. Քեղզ,  
Հ. Քեղ  
Բ. Քեղզանայ  
Գ. Քեղզանաւ  
Ն. Քեղզանում  
կամ քըշանում:

ԴՈՒՔ

- Դիւք  
Զեր  
Զեզ  
Զեզ  
Զըզանայ  
Զըզանաւ  
Զըզանում:

ԻՆՔՆ

- Ա. Ինքը,  
Ա. Իւրան,  
Տ. Իւրան,  
Հ. Ինքը, իւրան.  
Բ. Իւրանանայ,  
Գ. Իւրանանաւ  
Ն. Իւրանանում

ԻՆՔԵԱՆՔ

- Իւրանք,  
Իւրանց,  
Իւրանց  
Իւրանց  
Իւրանցանայ  
Իւրանցանաւ  
Իւրանցանում

ՄԻՄԵԱՆՑ

- Ա. Մինըմու  
Տ. Մինըմընու,

ԻՐԱՐՈՒ

- Իւրիւր  
Իւրիւր,

- |                        |              |
|------------------------|--------------|
| <b>Հ.</b> Մընթու,      | Իւրիւր,      |
| <b>Բ.</b> Մընթմուանայ, | Իւրիւրանայ,  |
| <b>Գ.</b> Մընմուանաւ,  | Իւրիւրանաւ,  |
| <b>Դ.</b> Մընմուանում, | Իւրիւրանում, |

Այսպէս գործածուած են՝ (ազատ) բառ  
 Մինըմու տոն շնեցեն։  
 (Միմեանց տունը շինեցին)։  
 Մինըմընու խալաթ տուեն։  
 (Միմեանց ընծայ տուին)։  
 Մընըմու թկեցեն։  
 (Մէկզմէկ ծեծեցին)։  
 Մընըմուանայ նղացալ ըն։  
 (Միմեանցից նեղացած են)։  
 Իւրիւր խաթըը պհես ըն։  
 (Իրարու պատիւ կը պաշեն)։  
 Իւրիւր խուսեցին։  
 (Իրարու խօսեցին)։  
 Իւրիւր տըլսմեցեն։  
 (Զիրաք ծեծեցին)։  
 Իւրիւրանայ մըշնչես ըն։  
 (Իրարից կ'ամաչեն)։

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ՆԱ

ՆՈՔԱ.

- |                     |              |
|---------------------|--------------|
| <b>Ա.</b> Էն,       | Ընտրանք,     |
| <b>Ա.</b> Ընտրայ,   | Ընտրանց,     |
| <b>Տ.</b> Ընտրայ,   | Ընտրանց,     |
| <b>Հ.</b> Ընտրայ,   | Ընտրանց,     |
| <b>Բ.</b> Ընտրանայ, | Ընտրանցանայ, |

Գ. Ընտրանաւ,

Դ. Ընտրանում;

Ընտրանցանաւ,

Ընտրանցանում:

Այսպէս են հոլովուած և հետեւալներն՝  
 Էս, ըստրայ (սա) էդ, ըտրայ, (դա), ըստրանք, ըստ  
 րանց, (սոքա). ըտրանք, ըտրանց, (դոքա), ընտրանք,  
 ընտրանց (նոքա):

Էս, էդ, էն գերանուններն գործ են ածուում  
 նաև այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, բառերի տեղ:

Էս ար խօսող մարդը:

(Սա էր խօսող անձն):

Էդ կ'ինի Կրպետին տղան:

(Դա կը լինի Կարապետի որդին):

Էն ա մեր հրեանը:

(Նա է մեր դրացին):

Էս խոտը չուրացալ ա:

(Այս խոտը չորացած է):

Էդ արտը հնձիս ըն:

(Այդ արտը կը հնձնէն):

Էն մարդն ա գեօղը:

(Նոյն մարդն է գողն:)

ՈՐ գերանուան գործածականը է միայն որ:

### ԲԱՑԵՐԻ ԽՈՆԱՐԴՈՒՄՆԵՐԸ

Է Ա Կ Ա Ն Բ Ա Ց

ՆԵՐԿԱՅ է

Ես լմ ես եմ. մունք ընք, մենք ենք,

Դիւ լս, դու ես, դիւք ըք, դուք էք,

Են ա, նա է. ընտրանք ըն, նոքա են,

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Ես ի, ես էի, մունք ինք, մենք էինք,  
Դիւ իր, դու էիր, դիւք իք, դուք էիք,  
Էն ար, նա էր, ընտրանք ին, նոքա էին.  
Այս բայն պակասաւոր է և այս շափն միայն  
գործածական է.

ԼԻՆԻՄ ԻՆԻԼ ԻՆԻԼՈՒ, ԻՆԻԼԱՒ

Ես ինիմ, լինում եմ, կը լինիմ, (\*  
դիւ ինիս, լինում ես, կը լինիս  
Էն ինի լինում է, կը լինի.  
Ինինք լինում ենք, կը լինինք,  
Ինիք լինում էք, կը լինիք,  
Ինին լինում են կը լինին.

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Ես ի, լինում էի, կը լինէի,  
Դիւ իր, լինում էիր, կը լինէիր  
Էն ար, լինում էր, կը լինէր,  
մունք ինք, լինում էինք, կը լինէինք,  
Դիւք իք, լինում էիք, կը լինէիք,  
ընտրանք ին, լինում էին կը լինէին.

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

Ես իլայ, եղայ, իլանք, եղանք,  
Դիւ իլար, եղար, իլաք, եղաք,  
Էն իլաւ, եղաւ, իլան, եղան,

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ի՛ ինիլ մի', իլէք, ինիք ո'չ եղե՛ր մի' լինիր,  
եղէք, մի' լինիք.

(\*) Տառկահայոց բարբառավել եւս նշանակեցի նոցա դիւլու-  
թեան համար.

ԱՊԱՌՆԻ

Ես կ'ինիմ, (Կը լինիմ, պէտք է լինիմ),  
 կամ ինլանկան ըստ,  
 դիւ կ'ինիս, (Կը լինիս պէտք է լինիս)՝  
 կամ ինլական ըստ,  
 Են կինի, (Կը լինի, պէտք է լինի)՝  
 ո ինլական ա,  
 մունք կ'ինինք, (Կը լինինք, ո լինինք,)՝  
 ո ինլական ընք,  
 դիւք կ'ինիք, (Կը լինիք, ո լինիք,)՝  
 ո ինլական ըք,  
 ընտրանք կ'ինին, (Կը լինին, ո լինին,)՝  
 ո ինլական ըն.

ՍՏՈՐԵԴԱՍՍԱԿԱՆ

Թա որ ինիմ, որ լինիմ, թա որ ինինք,  
 թա որ ինիս, որ լինիս, թա որ ինիք,  
 թա որ ինի, որ լինի, թա որ ինին  
 իլած եղած

Գնալ, գինիլ, գինելու, գինելաւ.

Ա, զիս ըմ, զիս ընք, զնում եմ  
 Բ, զիս ըստ, զիս ըք, զնում ես  
 Գ զիս ա, զիս ըն, զնում է

ԱՆՑԵԱԼ, ԱՆԿԱՏԱՐ,

Գիս ի, զիս ինք, զնում էի,  
 Գիս իր, զիս իք, ո էիր,  
 Գիս ար, զիս ին, ո էր,

ԱՆՑ. ԿԱՏԱՐԵԱԼ

ԳԵցէ, գեցենք, գնացի,  
ԳԵցեր, գեցէք, գնացիր,  
Գինից, գեցեն, գնաց.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Գինի, գինալ մի'.  
Գեցէք, գինալ միք, գինաք ո'չ.

ԱՊԱՌԻՆԻ.

Ալ գինիմ, կամ գինլական ըմ,  
Ալ գինիս, " գինլական ըս,  
Ալ գինի, " գինլական ա,  
Ալ գինինք, գինլական ընք,  
Ալ գինիք, " ըք,  
Ալ գինին, " ըն.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Թա որ գինիմ, թա որ գինինք,  
Թա որ գինիս, թա որ գինիք,  
Թա որ գինի, թա որ գինին:

(գեցալ ըմ գնացած եմ)

Գալ, գեալ, (\*) գեալու, գեալաւ :

Գեաս ըմ, գալիս եմ  
Գեաս ըս, ընք  
Գեաս ա, ըն

(\*) Գեաս գեաս, գեայ, գեանք, գեանք, գեան.

ԱՆՑ ԱՆԿ.

Գեաս ի, գալիս էի,  
Գեաս իր,  
Գեաս ար,  
Գեաս ինք,  
Գեաս իք,  
Գեաս ին:

ԱՆՑ ԿԱՏԱՐԵԱԼ

Եկէ,	Եկի,	Եկինք կամ Եկենք,	ԱՊԱՌ
Եկեր,	Եկիր	Եկիը,	կը գեամ
Եկը,	Եկին	Եկեն,	գեղլական ըմ ևայլն

ՀՐԱՄ

Եկ,	գեալ մի',	ԱՏՈՐԱԴԻ.
Եկէք,	գեալ միք,	որ գեամ
գեաք ո'չ:		որ գեաս ևայլն.

ՆԵՐԹՈՒԹԵԱԿԱՆ (J)

Քանդել,	Քանդիլ,	Քնդելու,	Քնդելաւ:
ա.	Քնդես ըմ:	Քնդես ընք,	կը քանդինք,
բ.	Քնդես ըս,	Քնդես ըք,	կը քանդիք,
շ.	Քնդես ա,	Քնդես ըն,	կը քանդին, կամ Քնդըլական ըմ ևն:

(1) Գրեթէ Վարտնդու գուշաւում ամենամեծ մասսմբ ներգործական բայերն կրաւորականի ձեւով են գործածուում, ինչպէս  
Հնձիս ըմ, կողիս ըմ (կապել) խուսիս ըմ եւն:

ԱՆՑԵԱԼ ԱՆԿ.

ՍՏՈՐ.

Քնդես ի, քնդես ինք, թա որ քանդիմ,  
 քնդես իր, քնդես իք, թա որ քանդիս,  
 քնդես ար, քնդես ին, թա որ քանդի,

ԱՆՑ. ԿԱՏ. թա որ քանդինք,  
 քնդեցէ, քնդեցենք, թա որ քանդիք,  
 քնդեցեր, քնդեցէք, թա որ քանդին:  
 քանդից, քնդեցեն, Սոյն պէս կը հոլովուին՝  
 Գործեմ, ազատեմ, բժշկեմ,  
 կտրեմ ևն շատ բայեր:

ՀԲԱՄ.

Քանդի', քանդիլ մի',  
 քնդեցէք, քանդիլ մի'ք:

ԱՊԱԽ.

Կը քանդիմ,  
 Կը քանդիս,  
 Կը քանդի:

Քանդուիլ, Կրաւորական

ա. քնդուիս ըմ, քնդուիս ընք,

բ. քնդուիս ըս, ա ը.ք,

գ. քնդուիս ա, ա ը,

ԱՆՑ. ԱՆԿ. օճ սարաւ արաւ

Քնդուիս ի, քնդուիս ինք,

ա իր, ա իք,

ա ար, ա ին,

ԱՆՑ. ԿԱՏ.

Քնդուեցէ, քնդուեցենք,

Քնդուեցեր, քնդուեցէք,

Քանդուից, քնդուեցեն,

ՀՐԱՄ.

Քանդուի՛, Քանդուիլ մի՛,  
Քնդուեցէ՛ք, Քանդուիք ո՛չ:

ԱՊԱՌՆԻ

Կը Քանդուիմ:	Քնդուլական	Ըմ:
Կը      "      իս:	"      Ըս:	
Կը      "      ի:	"      ա:	
Կը Քանդուինք,	"      Ընք:	
Կը Քանդուիք,	"      Ըք:	
Կը Քանդուին:	"      Ըն:	

ՍՏՈՐ.

Թա որ Քանդուիմ	
"      "      Քանդուիս:	
"      "      Քանդուի,	
"      "      Քանդուինք	
"      "      "      իք	
"      "      "      ին	

Քանդուած ա:

Քնդուելաւ ա

(Քանդուելու վերայ է)

Աշա այսպէս են կրաւորականի գործածութեան  
ձևերն:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԿՐԱԽՈՐԱԿԱՆ

ա. Տաս ըմ:	ըսես ըմ:	ուտես ըմ:	կամ օտիմ:
բ. Տաս ըս:	ըսես ըս:	ուտես ըս:	"      օտիս:
գ. Տաս ա:	ըսես ա:	ուտես ա:	"      օտի:
Տաս ընք:	ըսես ընք:	ուտես ընք:	կամ օտինք:

Տաս ը.ք. ըսես ը.ք., ուտես ը.ք., կամ օտիք  
Տաս ըն, ըսես ըն, ուտես ըն, ոտին.

ԱՆՑԵԱԼ ԱՆԿՏ.

Տաս ի, ըսեսի, կամ, ուտես ի,  
” իր, ” իր, ” ուտես իր,  
” ար, ” ասից, ” ար  
” ինք, ” ինք, ” ինք  
” իք, ” իք, ” իք  
” ին, ” ին, ” ին.

ԱՆՑ. ԿԱՏ.

Տուէ, ըսեցէ, կերէ,  
Տուէր, ըսեցեր, կերեր,  
Տուաւ, ասից, կերաւ,  
Տուենք, ըսեցենք, կերենք,  
Տուէք, ըսեցէք, կերէք,  
Տուեն, ըսեցեն, կերեն.

ՀՐԱՄ.

Տօ՛, տալ մի՛. ասի՛, ասիլ մի՛. կե՛ր, օտիլ մի՛.  
Տուէք, տաք ո՛չ ըսեցէք. ասիք ո՛չ: Կերէք, օտիք ո՛չ:

ԱՊԼՈՒՆԻ

Ալ տամ, տըլական ըմ,	կասիմ, կամ կ'օտիմ, կմուտլա-
ըսլական ըմ,	կան ըմ,
” տաս, ” ” ըս,	կ'օտիս,
” տայ, ” ” ա,	կ'օտի,
” տանք, ” ” ընք,	կ'օտինք,
” տաք, ” ” ըք,	կ'օտիք,
” տան, ” ” ըն,	կօտին.

ԱՏՈՐ.

թա որ տամ;    թա որ ասիմ;    թա որ օտիմ;  
ևն.                  ևն.                  ևն.

Ոչ միայն սոյն բայերն, այլ և շատ բայեր այսպիսի  
միակերպ խոնարհուելով, թէ՛ ներգործական են գործ  
դրուում և թէ՛ կրաւորական: Վարարազի գաւառներում  
համարեած թէ կրաւորական բայերն շատ սակաւ են գործ  
ածուում: Աճ մասամբ ներգործական բայերն են գործ-  
դրվում:

Կան նա և այնպիսի բայեր, որոնք երկու նշանա-  
կութիւն ունին. ինչպէս են՝ Առնեալ և Առնել բայերն:  
Ունեն ալն թէ՛ իր մի ունենալ կը նշանակէ և թէ՛ իր  
մի գնել սոյնպէս և առն ել բայն՝ թէ՛ մի բան առնուլ  
կը նշանակէ և թէ՛ գնել: Ահաւասիկ օրինակներն.

Առնենալ, օնիլ, առնել, առնիլ

ա, Օնիմ, օնինք,	ըռնես ըմ, ըռնես ընք,
բ, Օնիս, օնիք,	ըռնես ըս,        "     ըք.
գ, Օնի, օնին	"     ա,        "     ըն,
Անջ. Անկ.	"     ի,        "     ինք,
Առնիս ի, Առնիսինք,	"     իր,        "     իք,
"     իր        "     իք,	"     ար,        "     ին:
"     ար        "     ին	

ԱՆՑ. ԿԱՏ.

ինքկալէ, ինքկալենք, ինքառէ, ինքառենք,  
ինքկալեր, ինքկալէք, ինքառեր, ինքառէք.  
ինքկալաւ, ինքկալեն, ինքառաւ, ինքառեն:

Հ Բ Ա Մ .

ինքեալ, ինք մի՞ օնիլ, ան, և ինքառ առնիլ մի՞  
ինքեալէ՛ք, ինք չ' օնիք, առնէ՛ք, ինքառէ՛ք, ինք չառ-  
նէ՛ք:

ԱՊԱՌՈՒՆԻ

կ' օնիմ կամ ինք ըմ ունլական, կ' առնիմ ըռնըլական ըմ  
կ' օնիս > ինք ըս ունլական, կ' առնիս, ըռնըլական ըս  
կ' օնի > ինք ա ունլական, կ' առնի, ըռնըլական ա  
կ' օնինք, ինքընք ունլական կ' առնինք, ըռնըլական  
ևն. ընք ևն.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

թա որ օնիմ

թա որ առնիմ

թա որ ինքօնիմ,

թա որ ինքառնիմ

ևն ևն

Սոյն բայերն գործածուած են նաև այս ձեռվ.  
ինք ըմ ունես, ինք ըմ ըռնես, ևն:

Յուսով ենք որ մտացի ընթերցողն բայերի այս-  
շափ օրինակներով կը բաւականանայ և կարող կը լինի  
դիւրաւ իմաստասիրել, գիրքս կարդացած ժամանակ, միւս  
բայերի, անունների և դերանունների կազմութիւնները ևս:

ՆԱԽԱԳՐԱԽԹԻԿԻՆ \*

Հացը քարին ե ըրայ ըմ դնիս:

Ապեր, քերդ մըհ ար բրդիւշ ըմ ըրաւ

(\*) Աւելսրդ համորեցի նախադրութեանց, մակրացների,  
շաղկապների եւ ձայնարկութիւնների տեսակները որոշ որոշ  
եւ բառերի բացատրութիւնը նշանակել, զի արդէն բաւարանիս  
մէջ բացատրուած են նրանց նշանակութիւններն:

Ես հու ըմ, որ քու ըռ աջին խօսիմ:  
Քեզզանայ կը ման աման մարդ յօժար ա:  
Տէրը ընտրայ կշտին նստած ար:  
Քեզզ մնան գիտկան շատ ընք տեսալ:  
Ծռերի մաջ ան կրդիս ին պիւլպիւլները:  
Ըրախան իմ կոշտս բերէք:  
Իմ մաջքու մաջ զատ չկ մնացալ:  
Զեզզ նըհետ գիս ին ընտրանք:

ՄԱԿԲԱՑ

Ան ճաղ անճաղ նիկացաւ:  
Բացրի ըն թող ըրալ:  
Դէ՛ որ իտի ա, մին պատառ կաց:  
Եսուես մետք ըրէ:  
Ետըհետը կզնուած ասից:  
Էդիւց, ալէօր (միւս օր) թա որ գեան, լաւ ա:  
Էլլըհ այ մին բեն ասի՛:  
Էնչանք ըրեն որ նիհսեն:  
Էնտեհտը հի՞նչ ըսեցեն:  
Էստրանայ գէնը էլ գեան ո՛չ:  
Էսօր շատ թոռ եկը:  
Թիւն գ խօսից:  
Ինձուինձ մտըծեցէ:  
Իտի էլ կինի:  
Իսկի տուաւ ո՛չ:  
Լըհ այ որ բարանը բեցաւ:  
Խը եկ իր տըլական:  
Խը եք հետ խօսքը պրանից  
Հո՞ր ըս գիս:  
Հո՞ւնց ար գինին:  
Դո՞րդ ըն ասալ մեծերը:  
Մըհ ենկ գելական ըն:

Մ չանք խուսեցեն, լիւսացաւ:  
Որչանք ընք պրտական:  
Չուրու շէնը տարէ:  
Չուրիւ կիւ իրեք սըհաթ կայ:  
Պօ՞լ չի տարածդ:  
Իւրըւեռ գեցեն.

ՇԱԴԿԱՊ

Ա խը ինձ տուեն ո՞չ:  
Ա մմայ ընտրանք ինքկալեն:  
Դէ՛ զիւ էլ ինքունիր:  
Եայ էս ըմ քեզ տըլական, Եայ էն:  
Ընտիւր մըհար գեաս չ'ի:  
Թա՛ որ շատ ա, կէսը ինձ տօ՛:  
Խէ՞ չըն ըպրիս:  
Հի՞նչե ըս օնքերդ կախալ: } Ի՞նչ պատճառաւ:  
Բա՛ չո՞ւնց անիմ:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹԵՒՆ

Դէ՛ յղե իլեք:  
Ըխուէ՛ տեղն ար, որ քեզ թակից:  
Ըհը՛, թալակն ընկաւ աղուէսը:  
Ըներակ ձեղ ա խոխեք:  
Քեշկեայ ևս ինի ձեղ տեղ:  
Օ՛ւ, իտի էլ ա ինիս:

---

## Ն Ո Ւ Ե Բ

ՊԸԼԸ —ՊՈԽԴՈՒ ԳՈՐԾԱԿԱՀՆԵՐԻՆ ԵՒ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ.

Աղնիւ Սիրելիք.

Պուղին, որ արդէն վաղուց մեռած էր, Զեր  
օժանդակութեան շնորհիւ կենդանացաւ եւ յա-  
րութիւն առաւ։ Եւ ահա նա ինըն. Պուղին իւր  
կենսագրութեան չետ կըպատկերացնէ Զեզ նա  
եւ իւր գարու ազգային կեանքը, գատաստան-  
ների ձեւերը, գատարանների օրէնքները, գա-  
տաւորաց վճիռները, գատապարտելող պատիժ-  
ները, կղերականաց քարոզները եւ խանների ու  
մելիքների կտուավարութիւնները։

Պուղին իւր առակներով զջեղ երբեմն կը  
ծիծաղցնէ, երբեմն կ'ուրախացնէ, երբեմն կը  
տրտմեցնէ, երբեմն կը զուարճացնէ, երբեմն կը  
քարոզէ, երբեմն խրատ կը կարգայ, երբեմն ճշշ-  
մարիտ գատաստան կ'ուսուցանէ եւ երբեմն սրա-  
խօսութիւններ։ Եթէ Պուղու բեր անից արտասա-  
նուած հայհոյութիւն լսէք տեղ, տեղ, կրխնդրեմ  
որ ներողամիտ լինիք. որովհետեւ այդ յանցանքն  
իւրն չէ, այլ իւր գարու սովորութեան եւ Վա-  
րանդու բնակչաց բնաւորութեան։

Ուրեմն, սիրելի գործակալք եւ բաժանորդք,  
Պուղու յատուկ շնորհակալութեան չետ ընդու-  
նեցէք նաեւ իմ խորին յարգանքը եւ անմոռաց  
երախտագիտութեանս հաւաստին, որով մնամ  
միշտ երախտագէտ

Մակար Վ. Բարխուտարեանց

# ՊԵԼԵ-ՊՈՒՂԻ

1.

Պուղին դպրոց տարին կարդալ և  
գրել ուսանելու համար, ուր վարժապետն  
անդադար կրկնեց՝ այբ, այբ, այբ, բայց  
Պուղին չպատասխանեց։ Երբ չասելուն  
պատճառը հարցուց, Պուղին պատաս-  
խանեց։

—Վ ըժապետ, վիսես ըմ թա այբը  
սվերիմ, ասիս բէնն էլ սվերի, էս գիր-  
քը լօխ էլ կարդի։

2.

Երախայ ժամանակ Պուղին եկեղե-  
ցին տարին և «Նրաժարիմքի» միջոցին  
ստիպեցին երեսն դէպի արևմուտք դար-  
ձնել։ Պուղին պատասխանեց՝

Ես Ըստուծանայ խռով չըմ, չու որ  
Ըստուծանայ խռով ա, Էն իրեսը շոռ  
տայ։

3.

Պուղին տեսնելով որ կարկուտն,  
հեղեղն, մարախն, թրթուրն իւր ձեռ-  
քից տարեկան բերքերը կառնուն, այ-  
նուչետև կը ցանէ բողի, ստեպղին, Ճա-  
կնդեղ, սոխ, սխտոր, գետնախնձոր և հո-  
ղի տակ գոյացող ուտելիքներն։ Երբ  
սաստիկ կարկուտն կըսկսի տեղալ, Պու-  
ղին իւր սրահի տակից դէպի ամնը կը  
գոչէ. — Ընէյ, մընկեամ ըտեղան որ գեաս,  
կուրքներաւդ մին մին հատ պուք տաստ  
(Քմաստն է. ուրիշ կերպով չես կարող  
այլ ևս ինձ պատել, բայց եթէ այդ  
տեղից իջնելով և ատամներով մի մի  
փրցնելով։)

4.

Մի անուս սափրիշ Պուղու զլուխը  
ածիլելու ժամանակ կըտրած տեղերը  
թանձր բամբակ կը փակցնէ. այնպէս  
որ զլսի կէտն բամբակով կը ծածկուի:  
Կանէ Պուղին սափրիշին։

— Ուստայ, մին հիլին տօ՛, տեսնամ։ Եւ  
յետոյ վարձը ամբողջ հայելու վերայ

դնելով սափրիչին կը տայ և կամէ: — Ուս-  
տայ, ինքիալ փողը:

— Պուղի, գլխիդ կէսը դեռ որ շըմ  
ըրալ:

— Շնուրհակալ ըմ, գլխիս մին ան-  
կիւնը բենբակ ըս վարալ, էն մին ան-  
կիւնն էլ բիւրդ ըմ վարիլողական:

5.

Վի մարդ Պուղու արխալուղը (կա-  
պայ) տեղ տեղ նոր կարկատաններով  
կարկատած տեսնելով՝ կամէ.

— Պուղի, խեղդ տեղ տեղ շնուրհաւոր  
ինի:

— Ուրբմաջ տպրիս, ապեր:

6.

— Վի մարդ մեծ եռանդով կը պատ-  
մէր անկապ, անյարմար և անհաւատա-  
լի պատմութիւններ, ուր հաւաքուած  
էին մեծ բազմութիւն: Պուղին նկատելով  
որ այս պատմածները միամիտ մարդիկ  
իբրև ճշմարիտ իրականութիւն կընդու-  
նին, ծաղրական ձեռվ կը հարցանէ  
պատմողին.

— Ըպէր, ձեր ազգումք իսկի փինաչի  
(Հնակարկատ) իլամծ ա:

— Հա՛, քեզ մատաղ, իմ հար փինաչի  
ար:

— Բնտրայ մըհար լս իստի շատ կրկ-  
տուրես էս նաղլը:

7.

Ուրիշ գիւղացի մի ևս նոյն բաղմու-  
թեան մեջ ձեռքի և գլխի շարժումներով  
կը պարծենար իրեւ ամենալաւ հնձող  
և կը ճուռմաբանէր որպէս թէ օրական  
հարիւր խուրճ ցորեն կը հնձէ հանգիստ  
կերպիւ: Պուղին սորա ևս կը հարցանէ.

— Բխբրացու, (եղբայր) իսկի եալանչի  
բէհիւանութիւն ըրամծ լս:

— Իմ պապ օխտը տարի եալանչի բէհ-  
իւանութիւն ա արալ:

— Բնտոր լս խօսքաւ հեշտ հեշտ օրը  
100 խորձնը հնձիս:

8.

Վի երիտասարդ Պուղուն հետ որսի  
կ'երթայ, այն պայմանաւ, եթէ արջե  
պատահելու լինին, մահու չափ ճգնելով  
զիրար պաշտպանեն: Երբ անտառը կը

Համնին, արջն կը յարձակի Պուղու վերայ, թանթիւլով (թաթով) կը զարնէ Պուղու գըլխին, մէջքին, ուսերին և նստոյտեղին։ Պուղին իսկոյն գետինն կընկնի, իւր շունչըն բոլորովին ներս կառնու որպէս թէ մեռած։ Երջը քանիցս իւր ականջն նորա բերանին դնելով շնչառութիւնը զգուշութեամբ կը զննէ և մահացեալ կարծելով կը մեկնի։ Այս արարողութիւնը տեսած էր իւր ընկերն, որ զինքը թողլով ծառը հեծած էր, որից իջնելով կը հարցանէ։

— Աստուած սիրես, արջն ականջիդ հինչ ասից, ա Պուղ։

— Ասից թաւ էս քեզ խրատ, ըս տրանայ դէնը մինը էլ դիւ ինիս դիւ, իստի շան տղին հետ ընկեր չի դեռնաս, որ ինքը փախչի ծառը եր ինի, քեզ մինակ արջին որխումբ թողի։

9. +

Պուղին լաւ կը ծեծէ Աելիք Շահնազարի շունը, որ իւր դոնից յաճախակի կանցնէր։ Աելիքն իւր շան ձայնը ճանաչելով, սաստիկ զայրացած Պուղու վերայ՝ կը գոչէ։

— Ատայ, դիւ հո՞ւ լս, հի՞ւր տղայ լս,  
որ իմ շոնը թկես լս:

Աղայ, քու շոնը միկի շոն ա, աման  
դռնաւ անց կընալու իրաւունք օնի, ամ-  
մայ, Աելիք, դարտը էն ա, որ շէնիս  
շները քու շանան սըմբելաւ լոխ գեան,  
դռնաւս անց կենան, դէօնս շնանուց  
շինին: Աելիքն սոյն պատասխանը հաւա-  
նելով այն վայրկենից իւր մօտ կընդուի  
զՊուղին:

10.

Ո՞ի անգամ Աելիքն Աւետարանոց  
գիւղում ման գալով զանազան հարցու-  
մներ կանէր և Պուղին կը պատասխա-  
նէր:

— Ատայ, էս մարդը իսէ՞ իստի ազ-  
քատ ա:

Աելիք, խելքի լիւսը բըժնելիս հմա-  
մումն ա իլալ մըհանչալայ թա տկլոր  
դիւս գեայ, ինքն էլիւրան բեժինը ինք օնի:  
Ընտրայ մըհար միշտ ազքատ ա ըպրիս:

11.

— Ատայ, բա էս մարդը իսէ՞ իստի մը-  
րուած ա:

— Աղայ, լստրա պարութը կլիսալ ա  
(փողն սպառուած է), պլէկ (դրամ) չօնի, որ արադ ինքօնի, խմի, հարբի ուր-  
խանայ:

12.

Պուղի, էս մարդը խէ՞ գիշերը չուրու  
լիւս բեն ա ընես, քշրհանայ չուրու  
խրիւկիւնը քոն ինիս:

— Աղայ, լիւսը ծախալ ա, մթենը կա-  
լալ:

13.

— Ատայ, էս մարդը խէ՞ իստի կռուա-  
րար, անամօթ և անիրես ա:

— Աղայ, իրեք տէօնիւմ թուրքացալ  
ա, երկու տէօնիւմ ճիւհիւտ ա դեռալ  
ծաղիկն էլ շատ ա դիւս տուալ, երե-  
սին մորթին մաշկալ մեռունը քերալ,  
տարալ:

14.

— Էս մարդին տօնը լաւ ար շինուած,  
խէ՞ ա քանդալ, նորը մինայ շինիս:

Մելիք, պարութը շտացալ ա, Խըր-  
ճելի տեղ չի գտալ, տոնը քանդալ ա,  
թազայ շինիս, որ փուլը խրկանայ:

15.

— Էս մարդը խէ՞ ա մչանք ճելի  
ճելի խուսէս, որ խօսքերը խկի իմնւաս չի:

— Ըստայ չընին եայը ինկիլիզի պու-  
ղուատայ ա շինուած և թիւնդ քցա-  
խում միսուած:

16.

— Ատայ, բա էս հի՞նչա՞ն ա, որ խտի  
շատ ծանտըր ծանտըր ա խուսէս:

— Մելիքը ապրած կենայ, էս մարդի  
չընին եայերը թիւլացալ ա, չախմախ-  
սազին ուղարկի, մին քանի չաքիւ ճիւի,  
նորը մինայ ըլքպստրակի արնիւմ մըխի,  
որ լւանայ:

17.

— Ատայ, ախր էս մարդն էլ պեազի  
պեազի շատ ուրախ ըմ տանաս, պեազի  
պեազի էլ շատ և շատ տրտում:

— Հիսու որ խմիս ա, քեֆը քեօք ա  
ինիս, նոր հրսանիք արած տղի մնան  
ուրախովթիւն ա ընես, հիպու որ քեֆը  
թուղիս ա, թազայ փեսան մեռած հար-  
սի մնան սուգ ա բռնես:

18.

Մի օր խուռն բազմովթիւն հաւա-

քուած էր Ամարասու դաշտը: Ժողովուրդն վարելահող կը պահանջէր, իպրահիմ խանն չէր տար, Մելիք Շահնազարն կը ջանար ժողովուրդը խանին չետ իրաւախոհ անել սակայն անյաջող ելք ունեցաւ: Վերջապէս Պուղին նկատելով. որ ժողովուրդն շփոթելով երկիւղեց՝ իւր արդար իրաւունքը չէր կարող ստանալ, Մելիքն անկարող էր ճարտարութեամբ բացատրել ժողովրդեան իրաւունքը և խանի պարտաւորութիւնը, իսկոյն գնաց, մի երկար ձող առած եկաւ և իւր տեղը կանգնեց: Խանն հարցուց.

— Պուղի, ի՞նչի համար բերած ես այս երկար ժայտը:

— Խան, բերած եմ որ սրանով քո խելքն էլ չափեմ, Մելիքին խելքն էլ ժողովրդեան խելքն էլ:

— Ի՞նչ պատճառաւ:

— Այն պատճառաւ որ ժողովրդին հող պէտք է տաս, որով թէ ինքն կառավարուի և թէ քեզ կառավարէ: Այն պատճառաւ որ ժողովուրդն համարեա թէ լեզու չունի, որով չկարողացաւ պաշ-

տպանել այն անկապտելի իրաւունքը,  
զոր յաւիտենական հրովարտակաւ իրեն  
տուած են Աստուած և բնութիւնն:  
Այն պատճառաւ, Մելիքն, որ ժողո-  
վրդեան լեզուն էր, չկարողացաւ յայտ-  
նել ձեզ այն մեծ օգտակարութիւնը,  
զոր կը պահանջեն ձեր և ժողովրդեան  
կենսական շահերն:

Խանն իսկոյն հողերը ժողովրդեան  
կը տայ մշակելու յարգելով Պուղու գործ-  
նական փաստաբանութիւնը:

19.

Մելիքի դատաստանին ներկայացան  
երկու կանայք, յորոց մին կը պնդէր  
ասելով.

Մելիքը ապրած կենայ, էս հաւը իմն  
ա: Իսկ միւսն ընդհակառակն կ'երդ-  
նուր ասելով.

— Ես ինիմ էն Աստուծը (Աստուած  
վկայ) էս հաւը իմն ա, ես ըմ թոխար  
դրալ:

Մելիքն մնաց երկբայութեան մէջ,  
զի վկայ բնաւ չկար: Պուղին յօգնու-  
թիւն հասնելու փութալով կամէ.

— Աղայ, էս հաւը մին դորդ խօսող  
շհաս օնի, իրան բիւնը:

Մելիքն այս խօսքից ոչ ինչ շհաս-  
կանալով հաւը կը տայ այն կնոջ, որ  
իսկապէս տէրն չէր: Երբ միւս կինն  
տխուր կը մեկնէր, որպէս թէ արդարու-  
թիւնն բոլորովին մեռած լինէր երկրիս  
վերայ, Պուղին կանչեց՝

— Կացէք, կացէք պատառ, այաններ,  
կացէք: Շուտով հասաւ, հաւը առաւ,  
Մելիքի և կանանց հետ գնացին փողո-  
ցը, հաւը թող տուին, որ գնալով իւր  
սովորական բունն մտաւ. զի արդէն միժ-  
նանալու վերայ էր, հաւն տիրող պա-  
ռաւինն էր: Պուղին կոչեց: — Մելիք, տը-  
նաս ըս, բիւնը հունց լաւ շհատ ա:

20.

Պուղին ձուածախին կը հարցանէ.

— Ձուին քանի՞նը մին փնձըպատի  
(15 կոպ.) ըս տաս:

— Ութասունը:

✓ — Թանկ ա, թա որ հարիւրը տաս,  
ինք կոնիմ:

— Մելիքը քսան հզեր (20000) փնձա-

պատ օնի, ութասունը մին փնչապատի  
ինքօնիս, հի՞նչ կինի:

Պուղին չպատասխանէր, փոքր ինչ  
կը հեռանայ, ձուածախի ոտքն սահելով  
կընկնի ձուերը ամրողջ կը ջարդուին և  
ինքն կըսկսի սաստիկ լալ:

— Ատայ, քանի ձու կար թաքնիդ  
մեջ, ասի, որ ութասունը մին փնչըպա-  
տաս փուլը տամ, լաց մի' ինիլ:

— Պուղի, քմատաղ, գիտաս չըմ  
հեսապը:

— Ատայ, դիւ, որ քու ձեռքաւդ  
հմազարած ձիւին հեսապը գիտաս չըս,  
Միլիքին փուլը, որ հմազարալ շըս, հունց  
ըս գիտաս քսան հզեր փնչապատ ինիլը:

21.

— Պուղի, պսակիդ հրամանը առալ  
ըս:

— Մելիք, առաջ ըսեցին « Ձհաս ա »:  
Ձորիս ոռւշւաթ առին, ընտեհար իրանք  
իրանց խուսիլաւ ըսեցեն.

Մարալ Ձորի,

Ոսկի մատանի,

Ակնը Եամանի.

Հեռու ազգականի,  
Հրաման տուր, տանի:  
Կոյս կուսին կ'առնի:

Ոխտը բորտը անց ա, հանես ա, դէ  
Տրմնագիրը գիրենք, իրան տանք, տանի:  
Պուղու պսակելուց մի տարի յետոյ  
Ամարասու վարդապետներից մին նոյն  
ջորին չեծած Աւետարանոց կերթայ  
գործով, Պուղին տեսածին պէս ջորին  
առնելով կ'առէ.

Մարալ ջորի,  
Գեալուստդ բարի,  
Հրսանիքս արի,  
Հընցաւ մին տարի,  
Հայր սուրբ, ձի ճարի,  
Գինաս դէ՛ բարի:

Ջորին չուրու մըշենկ օխտը Տրամնա-  
գիրի գինը դիւս ա բերալ. Ջորին Պու-  
ղուն ա հանես:

22.

Վի մարդ գիւղից դուրս Պուղուն  
կը հարցանէ  
— Ես գեառնը տուողն ասից. «Ժա  
որ թիւլ անիս (թող տաս) դիւ ըս

մոնղլական, թա որ տոն տանիս, կնեկդ  
ա մոնղլական»։ Մըհենկ հունց անիմ։

— Ոչ թիւլ կանիս՝ որ դիւ մեռնիս,  
ոչ տոն կը տանիս՝ որ կնեկդ մեռնի։  
Մին լաւ կրակ վառի, մորթինք, օտինք,  
դիւն էլ սաղ կը մնաս, կնեկդ էլ։

23.

Մելիքն այցելութեան կերթայ իպ-  
րահիմ խանին. ուր Պուղին տեսնելով  
որ նոյն իսկ խանն ծուռ դատաստան  
կ'անէ և անիրաւ վճիռներ կ'արձակէ.  
իսկոյն կ'երթայ, մի ձուլիչ կը բերէ, զոր  
խանն տեսնելով կը հարցանէ.

— Պուղի, այս մարդը ինչի՞ համար  
բերած ես։

— Խան, խելքդ հնացած է, այս վար-  
պետը բերած եմ, որ սորից ձուլէ։

Խանն զգալով իւր սխաները՝ Պու-  
ղուն կը յանձնէ դատել յետագայ դա-  
տերը։

24.

Բէկ կարծուած մի թուլք յափշտա-  
կած էր հայից մի ձի, զոր տէրն ճանա-  
չելով՝ կը թախանձէր Պուղին, որ առնէ

իրեն տայ վերստին։ Պուղին կոչեց։

— Այ թուրք, էս ձին քո՞նն է։

— Այո՛, իմն է։

— Ուրեմն գնա և թամբը վար առ  
և մի լաւ քորիր։

~~ԵՐԵՎԱՆԻ~~ Երբ թուրքն կը մօտենայ, ձին գըծ-  
կամակութեան և անհնազանդութեան  
խորթ շարժումներ կ'անէ։

— Այ թուրք, գու յետ գառ, ահայ,  
գու գնա։

~~ՀՕԴԻ~~ Հայն մօտեցածին պէս ձին կը քըծ-  
նի, ուրախութեան և հնազանդութեան  
ցոյցերով կը հնազանդի հային։ Զին կը  
տան վերջապէս հային։

25.

Ներկայացան և մի հովիւ և մի հայ.  
յորոց առաջինն կը պնդէր թէ այս հո-  
վուական շունն իմն է, վերջինն թէ  
իմն է։

— Հովիւ, շանդ անունը տալով կան-  
չէ և առ ու գնա, կը հրամայէ Պուղին։

Շունն բնաւ չհնազանդիր։ Խսկ Երբ  
հայն յանուանէ կը կանչէ, շունն նորա



ետեւից կ'երթայ, որով անկասկած կ'ի-  
մացուի որ շունն հայինն էր:

26.

Մի յայտնի գող թուրք յափշտա-  
կած էր թուրք մսագործի մօտից ար-  
ծաթի դրամներ, վկայ բնաւ չկար: Պու-  
ղին դրամները եռացեալ ջրի մէջ թա-  
փել տուաւ, երբ իւղը ջրի երեսին յայտ-  
նի երեւեցաւ, խանն վկայեց որ դրամն  
մսագործինն է, զոր տուին նորան:

27.

Երկու թուրք և երկու հայ մի կով  
և մի եղն առած ներկայացան դատարան:  
Տասն անձինք երդմամբ վկայեցին որ այս  
անասուններն թուրքաց են:

—Ես ձեր վկայութեան կը հաւատամ  
անկասկած, բայց եղան և կովի վկայու-  
թիւններն էլ պէտք է միանան ձեր վր-  
կայութեան հետ, ասաց Պուղին և հրա-  
մայեց կովը և եղնը նախ տանիլ թուր-  
քի գիւղի մօտ թողուլ և ապա հայի:  
Այս արարողութեան որ խանն ևս ներ-  
կոյ էր, տեսաւ որ անասուններն բնաւ  
թուրքի շենը չմտան, իսկ հայի շենի մօտ

բաց թողածին պէս անասուններն բառաշելով ուղղակի գնացին նոյն հայի տունն:

28.

Խանն զարմացած կոչեց.

—Պուղի, դու որ այսչափ խելօք ես, ուրեմն մարդիկ ի՞նչ պատճառաւ են քեզ պել անուանել:

—Խան, մարդիկ նորա համար իմ անունը խենդ դրած են, որ ես իրանց խենդ չանուանեմ:

29.

Մելիքի հրամանաւ Պուղին Վզտամ կ'երթայ գործով, ուր գիշերն իւր ձին կը գողանան: Վնմիջապէս դառնալով խանին կը դանդատէ, որ կ'ասէ.

—Ինչի՞ արթուն չ'մնացիր, որ ձիդ պահպանէիր:

—Եթէ ես իմանայի, Խան, որ դուք քնացած եք, անշուշտ ես արթուն կը մնաի և իմ ձին չեր գողացուիր:

—Խանն իսկոյն մի լաւ ձի կը նուիրէ Պուղուն:

30.

Յօշու գիւղի միջից անցնելու ժամանակ Մելիքն սաստիկ կը զայրանայ երկու մարդոց վերայ, որք արբած լինելով ոտքի չկանգնեցան դինքը պատուելու:

— Մելիք, անմիջապէս կը կոչէ Պողին, էս մարդիկը էս սչաթիս իսկի Աստուծ պատուես չըն, քեզ ին պտուուլական. իսկի Ըստուծանայ վիսես չըն, քերզանայ ին վիսլակա՞ն, իսկի Աստուծ տսնաս չըն, քեզ ին տսնլակա՞ն: Ուէ գրլուխտ կախի, ծանտր կաց, պատիւդ պահի, յղիդ գնա:

31.

Պուղին մի քանի աւուր բացակայութիւնից յետոյ երբ տուն կը վերագառնայ, կը տեսնէ իւր կինը, որ Հաւերը մորթած, լաւ կերակուրներ պատրաստած, անկողնոյ մէջ իբրև հիւանդ պառկած և հինգ կոյս աղջիկներ իւր ոտքերը կը տրորեն:

— Ա կնեկ, էս հի՞նչ սալթանադ ա:

— Ա մարդ, տարին մին օր պլոթիւնըս բռնիս ա, հիւընդնաս բմ, որ իստի չանիմ, լւանալ չըմ:

Պուղին անկեղծ ցաւակցութիւն յայտնելով, խիստ քաղցրութեամբ կը վարուի և յետեւեալ շաբթու մէջ երկու անդամ կինը սաստիկ կը ծեծէ խենդաւանալով։ Վինն զայրացած կը հարցնէ.

—Ա, մարդ, էս հի՞նչ օյին ա, որ գըլուխս ըս բըիս:

—Ա, կնեկ, իմ ջանս քեր մատաղ շէքէթը էրկու տէօնիւմ, պլոթիւնս բռնիս ա, չուրու քեզ թկես չըմ, լնաս չըմ։

—Ա, մարդ, քու պլոթիւնդ իմ պլութիւնան թիւնդ ա, վիսես ըմ թա մին օր էլ առի թիւնդ բռնի, թկելաւ ինձ սպանիս։ Ա, մարդ, եկ ես իմ պլոթիւնս թող տամ, դիւ էլ քու պլոթիւնդ։ Կը համաձայնին։

32.

—Պուղի, կնեկս ինձ շատ ա ջողասլ տաս (խօսքով դիմադրել) հո՞նց անիմ։

—Վելիք, լեզուին ըւածին մին պատ քաշիլ տօ, որ լիւզուն էլ կարայ ոչ անց կենայ։

33.

— Աելիքն ապրած կենայ, կասէր մի  
այրի կին, 100 ձիւ (ձու) ըմ տուալ էս  
մարդին, որ Թաւրիզան ինձ մըհար մին  
խլզացու Ֆ կեազ չիթ բերի, վեց տարի  
ա անցկացալ, բերալ չե: 100 ձիւն վեց  
տրնումը վեց հարիւր հաւ կը գեռնար:  
Արչենկ, խնդրես ըմ, վեց հարիւր հաւի  
գինը վեց վեց շահան (Յ կպ) ինք օնիս  
ինձ տաս (ընդ ամենն 16 ո. 50 կպ):

— Խոճա Ամարտի, էս ասած ձիւն  
ինք ըս կալալ:

— Աելիքը ապրած կենայ, ինք ըմ  
կալալ:

— Դէ գինի (գնա) փուլերը տօ՛: Յետոյ  
Պուղուն դարձնելով խօսքը կը հարցանէ.

— Ատայ, էդ հի՞նչ կշեռը ա:

— Աելիք, քու խելքդ, պուաւին խել-  
քը, խոճին խելքը կշռեցի, իրեքը մին  
իստիլ եկը ոչ:

— Ատայ, խէ, պլացալ ըս, թա գի-  
ժուալ:

— Քու խելքդ թիթև ա ընտրայ  
մըհար, որ հըրցնես չես թա ձիւն էփած

ա իւա՞լ, թա չում. խոճին խելքը թի-  
թև ա, որ էփած ձիւն կերալ ա,  
ըսես չի թա ձիւն էփած ար. պռաւին  
խելքը թիթև ա, որ հարիւր էփած  
ձիւան մին ճոտ էլ դիւս չի գեալ: Էս  
պռաւին հախը 100 ձիւի գին ա, իւրան  
տուէք, գինի (գնայ):

34.

—Պուղի, իմ հար մեռալ ա, սգա-  
ւոր ըմ, թա որ էգուց աչքիս ըրեաս ոչ,  
5 չուալ կորեկ կը տամ քեզ—կ'ասէ Մե-  
լիքն մի օր:

—Աղայ, էգուց գեալ չըմ ձեր տոն:  
Երբ վեճակի բոլոր քահանայք հա-  
ւաքուած հանդերձ բազմութեամբ ժո-  
ղովրդեան կը կատարէին եկեղեցւոյ գաւ-  
թում հանգուցելոյն կարգը, և ահաւա-  
սիկ Պուղին Մելիքի հինգ բարակ շների  
վերայ մի մի զոյգ չուալ ձգած, փորերը  
տափակ չուանով ամրապնդած, ջորու  
կարաւանի պէս իրարից կապած և վեր-  
ջինի պարանոցից մի փոքր զանգ կա-  
խած երեցաւ. բոլոր քահանայք և ժո-  
ղովուրդք ծիծաղեցին, երգեցողութիւնք

խանդարեցաւ և Ա'ելիքն յառաջանալով  
Պուղուն ասաց քարկացած.

— Ատայ, ես քեզ ըսեցէ՞ ոչ թա է-  
դուց աշքիս ըրեւաս ոչ:

— Ա'ելիք, իմ հար, իմ մար քեզ  
մատաղ, կղնուիլ մի՛, խոխերքս սոված  
կտրուես ըն, եկալ ըմ կորեկը տանիմ,  
դէ՛ մին մարդ զբկի գեայ, չափի, ինձ  
տայ, լիւս դեռնայ քու հօր հիւգին:

35.

\* Ա'ելիքի հօր տապանաքարը ձգելու  
ժամանակ քարն կը ծուուի և Պուղու  
մատներն կը վնասուին: Պուղին կը կոչէ.

— Ա'ելիք, լիւսահիւգի քու հար հունց  
որ սաղ ժմանակը մարտիմաղար ար,  
մոնելան ետը էլլրհայ մարտիմզրութիւն  
ա ընեա:

36.

Ա'իանգամ մելիքն սպատուական գի-  
նի կը խմելը, Պուղին ասաց.

— Աղայ, թա որ մին պատառ էլ  
ինձ տաս, քու հար ըրբւոթիւն ա գին-  
լական: Ա'ի քաժակ խմելից դկնի կը կո-  
չէ՝

— Աղայ, քու հար յղելաւ: Վեբաժակ ևս խմելով:

— Աղայ, մուտացալ ա: Վիւս ևս կը խմէ:

— Ատայ, հսան ոչ:

— Աղայ, մին պիծի պատառ ա մնացալ, հսնելաւ ա, էն ա հա, հասաւ: Վիքաժակ ևս խմելով կասէ.—աղայ, քու հարդոխքին ու ըրբըւութեան մէջ տեղը ոտ ա կացալ: Երջին Ա անգամ ևս խմելով կը կոչէ, —ը՞՞ը:

— Ատայ, իմ հար ըրբւութիւն զինից թա դժոխքը:

— Աղայ, մին թրնփոց եկը, գիտաս չըմ ըրբւութիւն ընկաւ, թա դժոխքը:

37.

Պուղին մի առաւօտ սովորականից շատ առաջ գընալով զՄելիքը կարթնցնէ:

— Ատայ, Տի՞նչ կայ, որ իստի քշերաւ քշոհանայ եկալ ըս:

— Մելիք մին արագ ըմ տեալ էս գիշեր:

— Հի՞նչ ըս տեսալ, նազլ ըրա՛:

Ըրազում տանաս ի քու հար մին

մղթւորի մաջ ընկած, իմ հար մին ըն-  
ծղւորի մաջ:

Իմ հար մելիք ա, հարկաւ մղթւորի  
մաջ կ'ինի:

Աղայ, ախր մին բան էլ կայ, որերան  
դիւս ին գեաս, մինմնու լիւզ տաս:

38.

Որսի գնալիս Պուղին, որ մի կորեկ  
հացի կէսը կերած էր, միւս կէսով այն-  
պէս ուժգին կը զարկէ մի նապաս-  
տակի, որ անմիջապէս կընկնի, զօր Պու-  
ղին մորթելով կ'ասէ.

— Մելիք, էն հու ա ըսես որ կորեկ  
հացը լաւ բեն չի. համ հաց ա, համ  
եարազ (զէնք): Տեսե՞ր ըլպաստրակը  
հունց փրլըփալի ըսաւ:

39.

Անտառի ստորոտում վայրենի վա-  
րազ խոզն կը յարձակի Պուղու վերայ,  
որ հրացանը կը կրակէ, գնդակն կը  
շեղի. Պուղին կը յաջողի ցաթկել և  
վարազի վերայ հեծնել որ սաստիկ շփո-  
թած ուղիղ ճանապարհով սրընթաց  
կը վագէ:

— Ատայ, վախիս ո՞չ, վախիս ո՞չ:

— Մելիք, Գեանջայ ըմ գինիս, թա  
որ գիր օնիս, ինձ տօ՛ տանիմ: թա որ  
իստի գինիմ, տվըրոննին՝ գեանջայ ըմ:

— Պուղի, էդ խէ՞ խոզ ըս եր իլալ.  
կը հարցնեն տեմնողներն:

— Շահը շատ կզնուալ ա մեր ազգին  
երայ, հրամայալ ա, որ Հայերը ըստրա-  
նայ գէնը էլ ձի չի եր ինին, խոզ եր  
ինին:

Վարազն շատ վաղելուց կը դադարի  
գիւղի մօտ, Պուղին երկսայրով թռքերը  
կը խառնէ և վար իջնելով կ'ասէ.

— Մելիք, էս շատ լաւ գեռաւ համ  
ձիով տոն եկի, համ որս ըրի:

40.

Ուրիշ անգամ որսորդութեան ժա-  
մանակ Պուղին կը վերաւորուի մի մա-  
տակ արջեց, բժիշկներն կը պատուիրեն  
լաւ ընպելիքներ գործածել: Երեք օրից  
վերջը Մելիքն այցելութեան երթալով  
կը հարցանէ.

— Ատայ Պուղի, հունց ըս մը չենկ:

— Մելիք, զորմի էն արջին հօրը, բեշ-

կեայ շերեթը մին տէօնիւմ ինձ իստի  
քլոլար, դիւ էլ ամանօր ինձ իստի շան-  
պանիր (շանպանեայ), մաճառ (մատեր)՝  
պուրտըկաթնը (Պոյրդոյի գինի) խմցնիր:  
Ունպրումն իստի լաւ գինիներ խմած  
չըմ:

41.

\* Մի անգամ Պուղին մատուակ կը  
լինի և հասարակութեան կը հարցանէ:  
—Այ ժղովուրդ, հո՞ւնց ըք ուղես,  
բատուծեւուր ածիմ (լցնել) թա հիւ-  
գեւուր: (Աստուծոյ պէս լցնեմ, թէ ար-  
դարութեամբ):

—Ըստուծեւուր Ըստուծեւուր, կո-  
չեցին միաձայն:

Պուղին ոմանց բաժակն մի կաթ,  
ոմանց երկու կաթ, ոմանց կէս, ոմանց  
ամբողջ կը լցնէ և կը տայ:

—Ատայ, էլլըհայ պլացալ ըս, էս խէ-  
ըս իստի ընես:

—Վելիք, դէ ժղովուրդն ասից Ըս-  
տուծեւուր ինի, Աստուծ լոխին էլ մին  
չա փաւ չիտաս, մինին շատ ա տաս, մի-  
նին խրեկ, մկալին առի խրեկ: Ես Ըս-

տուծանայ հարուստ մարդ շըմ, հունց որ  
Աստուծ տաս ա, ես էլ ինտի ըմ տառ:

42.

Ատայ, էգ հի՞նչ ըս ընես պուղի:  
—Մելիք, աղօթք ըմ ընես:  
—Խըխո՞ցդ մըհար, թա հիւգւիդ:  
—Հիւգիս էլ ըմ մուռացալ, խոխեր-  
քը էլ պելերը շոացալ ըն, աղօթք ըմ  
ընես, որ Աստուծ ընտրանց խելք և ի-  
մոտոթիւն տայ:

—Ատայ, մին պատառ էլ քերզմհար  
աղօթք ըրա:

—Մելիք, էս սհաթիս ես քերզանայ  
խելունք ըմ: (Մելիքն նոյն միջոցին արբած  
էր):

43.

Մելիքի որսական շներից մին կը  
սատկի. Պուղին տեսնելով որ նա շատ  
և շատ կ'ափսոսայ և կըտիրի, կատե.

—Աղայ, շահի մնան մելիք հայրդ  
մեռաւ, իսկի ախուվուշ չըէր, շանդ մը-  
հար շատ ըս ախուվուշ ընես, ինտի ա-  
րբւաս, որ քու հար մին շոն էլ չար եի-

ժիս, մին շան մշանք էլ խաթըր չօնար  
կշտիդ:

44.

Նետեեալ օրն շինի քահանային սև  
հագուստը հագած Պուղին կ'երթայ Մե-  
լիքի մօտ:

— Ատայ, էս սև շորերը հո՞ր ըս զե-  
ցալ, ա պլըկատար:

— Ատակած շանը, մեղայ, վիսճան-  
ուած շան սուգը պհելու մըհար, իլլեկին  
(ժողովուրդ) էլ ասալ ըմ, որ լոխ էլ սև  
գենան, սուգ բռնին:

45.

Մելիքն Պուղու վերայ շափազանց  
կը բարկանայ այս մասին և Պուղուն  
հարցմամբ կ'ասէ.

— Ետայ, հի՞նչ պատիժ տամ քեզ:

— Մելիք Շհնազար, սև բեղկը (բողկ)  
հալ էփիլ տօ՛, օտիմ, ըստրանայ իւիլ  
պատիժ իսկի ինիլ չե:

Երբ կը բերուի, Մելիքն իւր գաւա-  
զանը ձեռքին կը կանգնի Պուղու գլխի  
վերայ և բռնի կերցնելով կը հարցանէ.

— Հը, կոտկու տղայ, համը հունց  
ա ՚ուղ ա:

— Մելիքի, սկի էփած արջի թրեք չըս  
կերալ:

46.

— Ետայ, մին պատառ խոնարհոթիւն  
անիս, հի՞նչ կ'ինի:

— Եղայ, սուտանան իմացալ ա որ  
խոնարհոթիւնը Ըստուծու դուր ա  
կեաս, էշ ա դոնաս գինիս մին վրժատան  
առաջ ոտ կնաս: Մունթերը դիւս ըն  
դոնաս, հենգ հենգ, վեց վեց եր ինիս,  
շատ չըչըես: Սուտանան մին քանի հետ  
ձկոիս ա, եր կնաս, տմնաս ա որ ինիս  
չի, ինքը իւրան ըսես ա. «Շատ խոնար-  
հոթիւնն էլ մին մրդոթիւն չի»: Հագին  
ցեց ա ունես, զողոալաւ գինիս, խոր  
գետին մաջ թղնիս, խոխերը խղդիս,  
կուտրես:

47.

Պուղին տեսնելով որ մի տարի շատ  
հարսանիք կը լինին, նուագածուաց (զո-  
ռնայ զաւալ) խումբը կը հրաւիրէ: Շե-  
փորի ձայնին կը հաւաքուին բոլոր ժո-

զովուրդն և Աելիքն, որ կը հարցանէ.

— Ետայ, գիւռ ոչ հասած աղջիկ օնիս, ո՛չ հասած տղայ, էս հի՞ն շղուռնըղաւալ ա:

— Աելիք, տեսէ որ աման տան զուռնայ ըն ըծես, պար գեաս, իմ սիրտս էլ օղից, էս էլ բերիլ տուէ: Դէ՛ Աելիք, հղբարիլս եկալ, տունը քունն ա, զորմի քո հօր, էս սրհաթիս բերիլ տօ՛մին կարաս դինի, 400 լաւաշ հաց, 2 աշառ (արջառ), 4 ոչխար, 5 լաք բրինձ, մին լաւքեփ անինք, ղաւախերին փողերն էլ կը տաս, կը գեռնայ մին լաւ հրանիք:

Աելիքն Պուղու սիրոյն ամենն էլ կը կատարէ:

48.

Պուղին, որպէս թէ Աելիքի կողմից, ճաշի կը հրաւիրէ վարանդայ գաւառի բոլոր քահանաները: Հետևեալ օրն երբ քահանայք կը լցուին, գործից անտեղեակ Աելիքն կը հարցանէ Պուղուն.

— Ետայ, էս տէրտէրները հո՞ր ըն իստի լոխ էլ եկալ:

— Աելիք ըսօր բա «Ենառակ որդուն» տօ՞նը շի:

— Հայ, ատայ ըսնակի տօն ա:

— Եկալ ըն, քու տօնախմբութիւնդ  
շնորհաւորին, ԱԵԼիք:

49.

ԱԵԼիքն իւր զուարձաբանին վերայ  
ոաստիկ կը զայրանայ այս մասին և  
իբրև պատիժ երկու օր ոչ հաց տալ կը  
տայ և ոչ կերակուր: Երկու ամսից  
յետոյ Պուղին զԱԵԼիքը ճաշի հրաւերե-  
լով կասէ.

— Եղայ, խոտերը կնանչած, ծառերը  
ծաղկած, վարդերը բեցուած, բիւլքիւլ-  
ները խուսես, գեառն մորթած, փլաւը  
տէամ դրած, գինուն կարասը եր կա-  
լած, ամմայ քե՛ֆ ընք ընլական, հա՛:

Աի քանի ժամից զկնի ԱԵԼիքն կը  
կոչէ.

— Ե Պուղ, խորակեր բերիլ տօ՛, օ-  
տինք:

— Էս սրչաթիս, ԱԵԼիք:

— Ատայ, կըսօրան երկու սրչաթ էլ  
անց ա կացալ, դէ խորակեր բերիլ  
տօ՞ է՛:

— ԱԵԼիք, շատը գինից, խրեկը մը-

նաց, մին պատառ էլ սապր ըստհանելու ա:

— Ե, կեատայ, Պուղի, օրը մթնիս ա,  
խէ՞ չըս բըրիս:

— Աղայ, առի մին պիծի պատառ ա  
մնացալ.

— Ետայ, մարդ ըս, մարդի որդի ըս,  
իւրկիւնան ժամը առւին, դեռ խորէակ  
չի տուէր մեզ, ես հի՞նչ օյին ա, սոված  
սպնեցեր մեզ:

— Աղայ, բա ես էրկու օր հո՞նց գը-  
մացէ սոված, դիւ մին օր գըմնաս չըս:

Բոլոր հանդիսականք անօթի մեկ-  
նեցան:

### 50.

ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱՊԱՐՆ ԳԱՆՃԱԿԻ Կ'ԵՐ-  
ԺԱՅ իւր զուարձաբանի հետ, ուր հայոց  
եշխաններն հետևեալ հարցերը կառա-  
ջարկեն և լուծում կը պահանջին:

— Պուղի ինչից է, որ քաղաքիս  
մէջ ուտելու միաը շուտ շուտ թանկա-  
նում է:

— «Սա պահեսցէ զմեզ յամեանայն  
փորձութենէ» կը պատասխանէ Պուղին

իւր աջ ձեռքի բժժամատը և ցուցամա-  
տը իրար քսելով:  
— Խնդրում ենք, որ էդ խօսքը պար-  
զես:

— Եման բան պարզըսուի՞ս ա, որ ա-  
սիմ: Դասապները խօսք մին ըն ընես,  
Խանին ոռւշաթ տաս, մեսը թանկ  
ծխես:

51.

— Խանը դողերը բռնել է տալիս,  
մի քան օր պահում և առանց պատ-  
ժի էլիթող տամ: Մրա պատճառն ի՞նչ  
է:

— Այս պահեսցէ զմեղ յամենայն փոր-  
ձութենէ:

52.

— Խանը մի քանի մարդասպան  
թուրք բէկեր բանդարկել տուել էր կա-  
խելու համար, երկու երեք ամսից յետոյ  
պատռով բաց թողեց անպատիժ:

— Այս պահեսցէ զմեղ յամենայն  
փորձութենէ:

53.

Չորս դողեր մեծ դժուարութիւ-

նով բռնեցին և բանդարկեցին, որոնք  
յափշտակել էին հասարակութենից կին.  
աղջիկ, ձե, ոչխար և ամեն հարատու-  
թիւն։ Առցանից զատ սպանել էին շատ  
անմեղ հայ և թուրք և քանդել էին  
շատ տուներ։ Ճառչին (մունետիկ) էլ  
երեք օր միմեանց վերայ անուններով  
կանչեց։ «Ուրբաթ օրը կէսօրին մեծ  
չինարե (կաղամախի) ծառից պիտի կա-  
խուին մարդասպան աւագակներն Մհա-  
մատ, Օսման, Իպրահիմ և Մուստա-  
փան։ ով որ ցանկանում է, կարող է  
տեսութեան գնալ»։ Են ուրբաթ օրը  
Խանը խալաթներով, սպարզեներով բաց  
թողեց էն գողերը, որ գնան պակառ  
մնացած չարութիւնը և սպանութիւն-  
ները ամբողջացնեն։

— Այս պահեսցէ զմեղ յամենայն  
փորձութենէ։

54.

Երբ Իշխաններն կը մեկնեն Պուղու  
մօտից, սորա համբաւը արդէն լսած լի-  
նելով, կը ներկայանան մի քանի աղ-  
քատ մարդիկ և զանտղան հարցեր կանեն։

—Պուղի, քեզ մատաղ երբ դատարան ենք գնում, մենք իմանում ենք, որ արեգակի պէս արդար ենք և իրաւունքն մերն է, սակայն Հարուստները միշտ դատարանում արդարանում են և մաքուր եղի, ձէթի նման ջրի երեսն դուրս դալիս: Լս ի՞նչից է:

—Առվան արդարասցուք յամենայն յանցանաց:

—Մենք նաշի (անգրագէտ) մարդիկ ենք, գրաբար չենք իմանում, պարզ տատ:

—Հինչ տեղ փուլը խուսես ա, իրաւունքը իւրան ըն տատ, հինչ տեղ փուլը կնչիս ա (ձայն հանել) աման մարդ ընտրայ հրամանն ա կտրես (կատարել). փուլի հրամանը ետ չի դառնալ:

55. +

—Պուղի Հարուստների աղջիկները դեռ փոքր փոքր պսակում են, տանում, իսկ մերերն մեծանում են, տանը մնում: Արան պատճառը ի՞նչ է:

—Պատճառը փուլն ա, Հարուստներին աղջիկները թէ կուղ սիրուն էլ չեն ինում, թաւար դուշի (շահին, որսի

թուչուն) մընան երրա ըն տաս, տնես  
փուլի մըհար, փուլի՛ քեասիպներին  
աղջիկները թէ գուզ հրեշտակ էլ ինին,  
էլլըհայ օղող չինիս, սապապն էն ա, որ  
փուլ չինի՛ս փուլ:

+ 56. †

X — Պուղի, քեզ մատաղ, բա էսպէս  
օրէնք կը լինի՛, էսպէս դատաստան կը  
լինի՛, էսպէս կեանք կը լինի՛:

— Խեղճ մարդիկ, ժմնակիս օրէնքն  
էլ փուլն ա, դտատանն էլ, խղճմտանքն էլ

+ 57.

Մելիքն Պարաբաղ վերադարձած  
միջոցին թարթար գետը յորդած տես-  
նելով՝ դիտմամբ զՊուղին գետի ափի  
վերայ կը թողու, որ ձի չունէր, և ինքն  
իւր մարդիկներով յԱւետարանոց կը  
դիմէ: Տուն հասածին պէս կը կոչէ.

— Վատայ, Պուղի դիւ ի՞ն ես, ջի՞ն  
ես: Ատայ, գետաւը հո՞նց անցկացեր  
և հի՞պ ըստեղ հասեր:

— Վդայ, դիւ ինձ անտէր թողեցեր,  
Վստուծ ինձ տէրութիւն ըրաւ, քերզ-  
անայ Ճելի բերաւ:

58.

ԱԵԼԻՔՆ իւր խենդ եղբօր արած յիմարութիւնից ձանձրացած՝ յաճախակի կասէր բարձր ձայնով.

— Ես փշացածը մեռաւ էլ ոչ թա պրծալ ինք, մին հաւայի կիւլայ էլ ծը փիս չի, թա մունք էլ պրծնինք, ինքն էլ պրծնէր:

Պուղին, որ ամեն օր կը լտէր այս տրտունջը, ԱԵԼԻՔԻ եղբայրը կը կանչէ և, որպէս թէ թովչութիւն ուսուցանելու համար, երեք անդամ նորա բերանում կը թքնէ և թուքը կլել կը տայ \*):

ԱԵԼԻՔԻ եղբայրն կը կոչէ ուրախութեամբ.

— Ըստրանայ զէնը էլ վիսլական չըմ, չինչ տեղ օձ տեսնամ, բռնլական ըմ օֆսունչի ըմ դեռալ:

(\*) Թուքը թովիչներն (օֆսունչի) այլոց թովչութիւն սովորցնելու ժամանակ նոցա բերաններում երեք անդամ կը թքնեն եւ թուքը կլել կըտան: Որպէս զի եթէ ասենաթունաւոր օձն անդամ խածնելու լինի, չթունաւորուի եւ չմեռնի:

Ամարասի դաշտում մի օձ բռնել  
ջանալով, որից կը թունաւորուի և  
կը մեռնի: Մելիքն երբ եղելութիւնը  
կ'իմանայ, սաստիկ բարկացած կ'ասէ  
Պուզուն.

—Ատայ, դիւ օֆսունչի՞ր, որ խը-  
բեցեր, իմ աղբեր սպնեցեր:

—Աղայ, Ըստուծու օրը ինիծելաւ  
ըսես իր. «Էս փչացածը մեռաւ էլ ոչ  
թա պրծալ ինք»: Դէ մեռաւ, պրծէր,  
էլ հի՞նչ ըս շնուրհակալ ինիլու տեղ  
մուլբշոթիւն ընես:

59. \*

Վորընծայ քահանան Մելիքի եղբօր  
եկեղեցւոյ կարգը կատարելու միջոցին  
շատ կը կրզկրայ, Պուզին լուսարարին  
կ'ասէ.

—Ատայ, մին պատառ բենբակ տար,  
կսթեղին ձեթումը թաթախ ըրա, բեր  
տէրին աչքերը քսի, որ լաւ լիւս տայ,  
ճըլլի ճելլի կարգի:

60.

Այսնորընծան, խւզաբերից աւետա-

բան կարդալու ժամանակ, քանիցս կը կրկնէ «ասէ ցնա, ասէ ցնա», Մի պառաւ իմանալու փափաղով կը հարցնէ.

— Հի՞նչ ա ըսես, ատէր, քեզ մատադ, հի՞նչ ա ըսես:

«Քահանային կողմանէ Պողին կը պատասխանէ.»

— Չոռը պինչդ ա ըսես, քաւթառ, սէասդ կտրի, տէրը քռսունքան նոր ա դիւս եկալ ինքը գիտաս ա թա հի՞նչ ա ըսես, որ քեզ էլ ասի, թա հինչ ա ըսես:

### 61.

Մի խնջոյքում՝ հրաւիրելոց մին Պուղուն ծածուկ կասէ.»

— Աստուած սէրիս, էս մին փնշապատը (15 կպ.) ինք կալ քթիս երրայ խօսիս ոչ լիւկաց մին պատառ հալալ գինի խմիմ: Հիպու որ տնագ ըս ընես, շատ ըմ կոտրուիս:

Պուղին երբ կը տեսնէ, որ շատ գինի խմելուց քիթն չափազանց կարմրած է, դրամը նետելով բարձրածայն կասէ.»

— Արտի, ինք կալ ոռոշաթ տու-

ած փնձապատդ, քթիդ հալը հալ չեր  
էլ կրես չըմ տաղ անիլ:

62.

Պուղու տան մեջ բաւական մարդիկ  
գինի կը խմեին, որք միաբերան կը կո-  
չեն.

— Էս շան տղու տղայ Պուղու գի-  
նին հունց լաւ գինի ա:

Պուղին ևս մի գաւաթ խմելուց յե-  
տոյ կասէ.

— Դորդ որ լաւ գինի ա, էս շան  
տղի տղերբը հունց լաւ գինի ըն ճըն-  
չես:

63. +

Վելիքն կընթրէր, Պուղին սաստիկ  
անօթի կանգնած էր:

Պուղի, վլաւը որ մըհաւի մահ նչետ  
ուտես ըս, հունց լաւ ա ինիս:

— Վելիք, իմ փորս սոված վեց վեց  
ա ընես (սաստիկ անօթի է), էդ մըհաւը  
եա լստեղ, եա Շխերին ձորումը, ինձ  
մըհաւ մին ա, քանի որ ես ուտես չըմ:

64.

Վելիքն կը ճաշէր, բայց փասեանի

և կաքաւի փափուկ մսերը թողած, ոսկորները ախորժակով կըկրծէր:

—Պուղի, Մելիքը խէ՞ փափուկ մըսերը թողած ոսկուրները ա կրծկուրծես. կը հարցանէ մի գիւղացի ցած ձայնիւ:

—Վեծամեծ մարդիկ սովորած ընինիս, ընտրայ մըհար մեսը թողած ոսկուռն ըն կրծկուրծես: Վեր Մելիքնէլ ոսկուռայ ա հազ ընես:

† 65. \*

Մի գանգատաւոր կը բողոքէր Մելիքին ասելով.

—Ես թիւնի (Յարութիւն) ապօրը պիծի աղջիկն ըմ օզալ մեծնն ըն փսակալ երբաս: Իրեար հենց ա լըհայ շտարար ինի, մշանք չիչոտ, ծկծակուտ ա:

—Ատայ, պսկելիս խէ՞ ելշեցեր ո՛չ, էդ հիւգեսր բան ա, կթղթկոսին պետումայ զինիս:

—Աղայ, պսկելիս իրեար ինտի պենդձածկուած ար, որ կրացէ ոչ տեսնալ:

Պուղին միջամտելով կ'առէ.

—Ատայ Մուքի, (Վիքայէլ) ես ի-

նիմ էն Ստեղծուղը, լաւը լրայ էդ ա,  
քերայնայ կրման էլ ուրիշ սիրող չինիլ  
էլ ոչ երսուուլայ վախ օնխա, ոչ թոր-  
քայ:

Մարդն այս խօսքերով համոզուելով  
կինը այլ ևս չարձակէր:

66.

Մի նորուս սափրիչ երկու ժամում  
հազիւ թէ կարողացաւ ածիլել Պուղու  
գլուխը և երեսը: Վանի անգամ՝ որ սա  
ձանձրութեան և անհանգստութեան  
շարժումներ կ'անէր, նա խսկոյն կ'ասէր.

— Մի պատառ համբերի, քէր մա-  
տաղ, մի պատառ համբերի, ընը, էս ա  
պրծալ ըմ:

Այս սափրիչն ԱԵլիքի վերաբերեալ  
մի գործ ունէր, զոր Պուղուն յանձնե-  
լով թախանճեց կատարել:

Վանիցս որ կ'երթար և կը հարցներ  
իմանալու, Պուղին կը պատասխանէր.

Մին պատառ համբերի, քէր մա-  
տաղ, մին պատառ համբերի, խրեկ ա մի-  
նացալ, ընը էս ա պրծալ ըմ:

67. +

Սելիքի կողմից Պուղին կը ներկա-  
յանայ թաւրիզում Պարսից հոգեռոր գըլ-  
խին, որ կլկլակ (նառկիլէ) կը ծըխէր:  
Պուղին կը յանդիմանուի Շէյխ-Խալամից  
իբրև շափաղանց շուտ շուտ խօսող:  
Ապասաւորն դալով կլկլակը կառնու և  
վերը ռաֆի վերայ դնելով կը հեռանայ,  
մի կրակ ընկնելով հոգեռորականի գլխի  
ամենաթանկագին շալի վերայ, զոր Պու-  
ղին տեսնելով ամենածանր եղանակաւ  
կ'ասէ թուրքերէն.

—Երկնքից մի՝ կրակ ընկամաւ Շէյխ-  
ին լամի՝ գլխի՝ թիրմայ շալի՝ վերայ.  
Թիրմայ շալը այրեց, այրեց, այրեց:

Շէյխ-Խալամն երբ զգաց գլխին տա-  
քանալը, անախորժ խնձրմահոտը և տե-  
սաւ ամպանման մուխը, փաթաթոցը  
իսկոյն գլխիցն առնելով շպրտեց և  
Պուղու վերայ զայրացած ասաց.

—Ինչի՞ համար շուտ շուտ չ'ասացիր  
որ ամենապատուական շալս այրեց, փը-  
չացաւ:

—Ուրը մարդ, դուք հրամայեցիք

ինձ ծանր ծանըր խօսիլ. մանաւանդ  
վախցայ որ շուտ շուտ խօսիմ, կրկին  
յանդիմանուիմ ձեր սրբութիւնից:

+ 68.

— Այն քաղաքի մահմետական գլուխ-  
ներն զուղուն կը հարցանեն և պատաս-  
խանը կը պահանջեն:

— Հայերն ի՞նչ պատճառաւ Մուհեմ-  
մատը թողած Քրիստոսը են պաշտում:

— Այն պատճառաւ որ Քրիստոս  
Աստուած է. իսկ Մուհեմմատն մար-  
գարէ:

— Ի՞նչ փաստով կարող ես հաստա-  
տել Քրիստոսի աստուածութիւնը:

— Ձեր Պուրանի փաստով, որով-  
հետեւ Պուրանում գրուած է. « Քրիս-  
տոս յարութիւն առաւ և երկինքն համ-  
բարձաւ ». Իսկ Մուհեմմատի մարմինն,  
ըստ որում մարդ էր, էս աշխարհում  
մնաց, Մագգէում, ուր դուք ուխտի  
կերթաք:

+ 69.

Մի քանի պարսիկներ կը հարցնեն.  
— Պուղի, մեր հոգեորականներից կը

Հարցանենք թէ ի՞նչ է պատճառը որ  
մեր մեծ Վարդարէն Առուհիմատն թուր-  
քաց Համար արդիլած է, որ չխմեն գի-  
նի, արաղ և ողելից ըմպելիներ: «Նոքա  
միայն կասեն. «Նա արդիլած է»: բայց  
թէ ի՞նչ պատճառաւ արդիլած է, չը-  
գիտեն և չեն խօսեր:

— Ձեր մարդարէն փորձով իմացած  
էր, որ թուրք աղգերն քաջ են, առանց  
գինի խմելու արդէն կ'անէն շատ ան-  
կարգութիւններ, և մարդասպանութիւն-  
ներ, և եթէ ոգելից և արբեցուցիչ հե-  
ղուկներ ևս խմելու լինին, բոլորովին  
հրէշ գառնալով զերար կըսպանեն և  
մարդկութեան ու աղգութեան շատ  
վնասներ կը հասցնեն: Ահա այս պատ-  
ճառաւ արդիլած է:

70.

Երբ Պուղին Աւետարանոց կը վե-  
րադառնայ, մի թեհրանցի թուրք կը տես-  
նէ, մի ձի բերած էր Վելիքի վերայ  
ծախելու, զոր չափազանց կը գովեր:

— Ահմատ, ձիդ շահը տեսան, կը  
հարցանէ Պուղին:

— Ե. յո' Շահն էլ տեսաւ, բոլոր  
շահզատաներն էլ:

— Ուրեմն, եթէ ձիդ գովածիդ չափ  
լաւ է, ինչո՞ւ համար թահը անից մինչև  
այս տեղ չծախուեցաւ և Երասխն էլ  
անցնելով այս տեղ հասաւ:

71.

Ո՞ի պարտատէր յաճախակի կը  
գար և Մելիքը ձանձրացնելով կասէր.

— Մելիք, իմ՝ խոխերքս քեր մատաղ,  
Աագի (Աարգիս) ապերը ինձանայ 10 թու-  
ման (12 մնթ) փուլ տ փոխ կալալ, մե-  
ռալ, տղեքն էլ աղքատ ըն, իրանց հօրը  
պարտքը տաս չըն. ինդրես ըմ, ինքօնիս  
ինձ տաս:

Մելիքն դատաստանը Պուղուն կը  
յանձնէ: Պուղին մի թուղթ գրելով  
պարտատէրը իւր հետ կ'առնէ և եկե-  
ղեցին տանելով թուղթը կը դնէ մի  
ննջեցեալի աջ ձեռքում, որ նոր մեռած  
էր և 'ի լուր գանգատաւորին մեռելին  
կ'ասէ բարձր ձայնով.

— Ո՞սի (Ո՞սվէս) ապեր, ես գի-  
տասս ըմ որ ըսօր դիւ էն դիւնեայ ըս-

Հսնըլական. Էս գիրը Սագի ապօրը  
տաս, ասիս, որ Պուղին ըսես ա. «Ճալե  
Հալպէաթ» Մարտուն 10 թուման փու-  
լը էգիւց զըշերհանայ զարկի: Ըստու-  
ծու սէրին, ասի՛, Ճելլի զարկի, մեր եա-  
խան Մարտուն (Մարտիրոս) ճեռքան  
ըզատի, որ ինքն էլ պրծնի, մունք էլ:

72.

Ո՞ի մարդ սաստիկ կը թախանձէր  
Պուղուն, որ իւր նորածին երախային  
կնքահայր լինի: Պուղին կը պատասխանէ:  
— Ա անէս (Յովհաննէս), ես ինիմ  
էն Եստուծը, իմ խոխերքս էլ ուրիշի  
ըմ խտտել տաս:

73.

Շատ խելացի կարծուած մի մարդ  
լողալու ժամանակ Երասխում խեղդ-  
ուած էր: Պուղին գետեղըքի վերայ նրա-  
ած մի երկար փայտով ջուրը կը խառնէր:  
— Ճինչի՞ ըս շոռ կեաս, Պուղի, Հար-  
ցոց անցորդ մի:

— Մին շատ խելունք մարդի:

— Խելունք մարդիկը ցմաքումն ըն  
ըպրեա:

— Ճ.մնակիս խելունքները ջրումն ըն  
ըպրես:

74. +

— Ես գետը իմէ վշշաս չե.

— Վլաւան կատուն մոկնը չե բռնեա.  
Հիպու որ կլաւուցը լսես ըն, մոկները  
փխչիս ըն: Երասխըն էլ վշշաս չե, որ  
շատ մարդ բռնի, կօլ տայ:

+ 75.

— Արասխը շատ ա խո՞ր, թա տա-  
յագ ա:

— Կի մըտ, չափի, աես խո՞ր ա, թա  
տայագ:

76.

— Պուղի, հւատայ ըսօրի գինձ ըս  
կերալ, խելքդ պկասալ ա:

— Ինտի ա ըրւաս, որ շատ գինձ ու-  
տելաւ խելքդ պկասալ ա, էդ պկասած  
խելքաւդ ուզիս ըս թա ինձ խելք սր-  
վըցնիս: Չուրու մըչենկ գինձ ըս կերալ  
դէ գինի ըստրայ դէնը ջրըկուտեմնը կեր,  
որ խելքդ պկասածը տեղը գեայ:

77. +

— Պուղի, խելքադ մին պատառ

ինձ փոխ տաս, Տիրնչ կ'ինի:

— Եղբայր ծիւգի քու հար էլ, ու փոխ  
կալաւ, բընցրուց, կարից ոչ թա փոխը  
ետ տայ, լըհայ պըրտական մեռաւ:

† 78.

— Ատայ, Պուղե, Հենց ըս լըհայ Ի ս-  
տուրծաշունչը ըուաջին դրած, տրըցւո-  
ցը օրէնք սկօցնող երպսկապոս ինիս:  
Ես քեզ ըսեցէ, ինձ ծիծաղցրո՞ւ, թա  
ինձ տրացու շինի:

— Ուելիք, քերդ մնան տրըցէն ինձ  
մնան երպսկապոսը դեռ շատ ա: Դէ դեօ-  
տիդ պենդ կապի, որ շատ ծըծ զելան  
ճղմղենքերդ կտորին ոչ:

79.

— Ուին երպսկապոս իրան ձեռնա-  
դրած տէրին քննութիւն ա ընես, թա  
տեսնայ իսկի քան ա գիտաս:

« Նորըծայ, Քրիստոս աշխարհիս  
վերայ քանի՞ տարի ա մնացալ: » « Օա-  
ռադ ըմ, որ Քրիստոս ըս հրցնեա: »

« Ատայ, քանի՞ Քրիստոս ա եկալ  
աշխարհիք: »

80.

— Աին վրդապետի մունթը շատ ու-  
շունցատու ար, վրդապետը ուրխումը  
մին քար դրաւ, որ ասի թա ուշունց  
տայ, լիզուն քարին նիկեայ, խրատուի:  
Աին սելուսու օր վրդապետը մին շէնաւ  
անց կենալիս, մին թաղայ հարս ձեռ-  
քաւ ա ընես, թա «ոննը կացէք»: Վր-  
դապետը ուրխնաս ա, որ թոռին երե-  
սան կը պրծնի, կը նստի, հաց կօտի:  
Հարսր դիւս ա գեաս, ձեռքաւ ընես թա  
«գէ գինեցէք»: Առանթը հըրցնես ա.  
«ա հարմնը, բա մեզ հինչի՞ մըհար էս  
շմփշմփալի թոռին տակին ոննը ըրէր»:  
— Իմ ըսկեսուր ասել ա թա, «վրդա-  
պետ ընցնելիս թա որ հաւ թոխսը դր-  
նիս, ջոտերը լոխ էլ քեաքլեկ դիւս կը  
գեան»: ըստրայ մըհար ձեզ ոննը ըրէ:  
Հըյրըսուրը ասալ ա. «ատայ, զէ  
քարը ուրխաղ դիւս կալ կրունորաց էս  
չանք ըսկիտարանըը բւկանայ»:

81.

— Աելիք, մին տէր հրաննքի մըհար  
աման բեն առած տոն գինալիս Յեխ

ձորումը գեօղերին ձեռքն ա ընկնիս,  
Ըդամայ մնան տկլուրցնես ըն, մին հա-  
լաւ ա մնաս գեցը, մին փոխան։ Տէրը  
հալաւն էլ տաս ա, ըսես. «ա գեօղեր,  
դիւք ինիք ձեր Աստուծը, լիւ կացէք  
էս փոխանը գեցս կենայ, քհանայ մարդ  
ըմ, ինձ խյտառակ միք անիլ, էն մնա-  
ցած բաները ձեզ հալալ ինի»։ «Զե,  
ինիլ չե, էդ էլ պէտումա հանիս»։ Տէրը  
մաքաւ ըւտարանը պրընպարան ա ընես,  
ընտեղ գտնիս ա, որ Քրիստոս ասալ  
ա, «թա որ խլեղդ օղին, հալաւդ (շա-  
պիկ) էլ տօ»։ Տնաս ա որ ըւտրանումը  
փուխանին մըհար բան չե կայ գրուած,  
չին կտըկրանին մէջն ա շու գեաս,  
Դաւութ մըզրին էս խօսքը գտնիս. «Ընդ  
սրբոյն սուրբ եղիցիս, ընդ առըն անբծի՝  
անբիծ եղիցիս, ընդ ընտրեալսն՝ ընտրեալ  
եղիցիս և զթուրքսն (թիւրմն) կործանես-  
ցէս»։ Տէրը մին մեծ ձօղի ա եր ունիս,  
չորս գեօղերը սպնես, շորերը գենաս,  
ձիերը մինմնուանայ կպուտես, տոն գի-  
նիս։ Ծըցակինը, չիպու որ տոնաս ա,  
ըսես ա, «փառք քեզ Քրիստոս, տէրս

մին ձիաւ գինեցալ ա, հենգ ձիաւ եկալ:»

82.

— Մելիք, մին մարդ մին էշ ա ունես (գնել), չորս տարի բնցնես: Մին օր քաղաքը գինալիս քոնը տնես ա, էշան որ ա գեաս, ծառան կպիս, քոն ինիս: Գեօղերան մինը նոխտան իւրան գլուխն ա գցիս, էշին տեղը նստես, մնացածները էշը գնիս ըն քղաքում ծխելու մըհար: Մարդը քունան զիւրժնաս ա, էշին տեղը մին երիտասարդ մարդ տանաս: «Այ էշ էս հունց իլաւ, որ մարդ գեռեր»: Էշը պտախնես ա.- «Իմ բարի տէրս, ես մին տէրի տղայ ըմ: իմ հօր ճողապ տուէ, ինձ շատ շատ թակից և ինիծից հենգ արնան ժմնակին էշ շինից: Հիպու որ զիւ գլուխդ տափին գրէր, էն սլհամին հենգ տարին թմամից, մարդ գեռէ»: «Ետայ, աղատ ըրէ քեզ, երկաց գինի, հօրդ հնագանդ կաց, որ էլ քեզ ինիծի ոչ, էշ շինի»:

83.

— Մելիք, մարդը քաղաքն ա մտնես, որ մին էշ ինքօնի, իւրան էշը տանաս

ա, որ ծխես ըն, (գողերն էին): Եւ  
տէրը Ճննչիս ա, դլուխը տէռնը փեշ-  
կերը քսիս, զոզուաս, ուրխոմիւն ընես:  
Տէրը ըսեսա էշին. «ա շան տղայ, ա պել  
անիծած, կրացեր ոչ մին օր մարդ գե-  
ռած կենաս, էլլըշայ ճողապ տուէր,  
Տէրը քեզ ընիծեց, էշ գեռեր: Հը, օ-  
զում ըս փուլ խարճիմ, քեզ ինքօնիմ,  
էլլըշայ մարդ գեռնաս, թիւլ անիմ: Էղ  
ինիւլ չի: Ոչ տեսանես Եգիպտոս:

84.

—Եղայ, Ա. Սրգեսայ շէբթումը մին  
տէր մին աղջիկ ա մկրտես, տոն բրիս:  
Տնատէրը հրցնես ա. «ա տէր, ըղջկանս  
անումը չի՞նչ ըս դրալ: Ա Սարգիս ըմ  
դրալ Արզուման»: Ե. տէր, քու տոնը  
Եստուծ չի քանդի, ախր Ասրգիս անուն  
աղջիկ կ'ինի»: «Արզըման, զեռ ըռ ջնակդ  
ա, դիւ գիտաս չըս Ա. Սարգսինպա սումը  
ծնածին անունը Ասրգիս կը գնին, կ'ողի  
աղջիկ կո՞ղի տղայ:

85.

—Պըլը Պուղի, գլօխս տէանկեասար  
ըրիր, պօլ ա:

— ԱԵԼՔ, խրեկ ա մնացալ, պրծնելաւ  
ըմ: Մին նորընծայ տէր ջուպը 50 բեկ-  
լայ ա դրալ, որ օր մին հատ թող ընե-  
լաւ. Օ ատիկը կուրցնէ ոչ: Տրակինը ջուպը  
կրկտելիս բեկլան տսնառա, իւրան իւ-  
րան ըսես, «իմ էրկու աչքս քուռանայ,  
տէրս բեկլաւ ա ծոմ պըհեա»: Գուպը  
չուրու բերանը բեկլաւ լցնիս ա, տէրը  
աման օր թող թող ա ընես, գլխիս չի:  
Ժղովուրդը ըսես ա, «ա տէր, աման շի  
ներքում զատիկ ըն ըրաւ մեր զատիկը  
հի՞պ ա գերլական»: — «Ժղովուրդ, թա որ  
իմ բեկլին հսապին եշինք, ըստարի ձրդ-  
մըհար զատիկ չկայ, չուրու մին տարի  
մեծ պաս պէտում ա պահիք:

86.

— Մունթերը մին օր իւրանց վըր-  
ժապետին հրցնես ըն. «վրժապետ, «որո-  
գայթ» հի՞նչ ասիլ ա»: Պտսխնես ա.  
«վրրվիթալ»: Մին քանի օրան ետը մուն-  
թերը բառարանին երշիս ըն, վրժապետին  
ըսես. «ախր մունք եշալ ընք, թալակ  
ասիլ ա որոգայթ»: Վրժապետը ըսես  
ա, «ատայ, դէ՛ թալակը ընկնողը, ոտքը

որ կոտրի, կը վրայ էլչի, բա սկի Աս-  
տուծ ձեղ մին պատառշնորհք չիտուալ»:

87.

—Մելքը, մինը գինիս ա [թե] քանումը  
վեց տարի կնաս, տոն եկած ժմանակը  
հարը հրցնես ա. «Բատի (Ծաղաասար),  
սկի Փարսի (պարսկերէն) սվերալ ըս»:  
—Ա, ապեր, սվերալ ըմ»:

«Ուղտին հի՞նչ կ'ասին»:—Եպեր, ուղար  
շատ մեծ ա, ըտի շատ մեծ մեծ բաները  
սվերալ չըմ»: «Մըջեմնին հի՞նչ կ'ասեն»:  
—Էդ շատ ա պիծի, ըտի շատ պիծի  
բաները սվերալ չըմ»: «Դէ, գլխին  
հի՞նչ կասեն:—«Ուար»:

—«Վզերի՞ն:—«Արախոտ»:

—«Մրբի՞ն:—«Արաւել»:

—«Պղերի՞ն:—«Արըյադի»:

—«Բրանի՞ն:—«Արածակ»:

—«Շչքերի՞ն:—«Արալուսամուտ»:

—«Շնկուջների՞ն:—«Արըպտրչան»

—«Վզի՞ն:—«Արակոմթ»:

—«Բժժին հի՞նչ կ'ասեն—«Արնով»:

Հարը ասալ ա, «ատայ, ըտի փարսի  
ես էլ ըմ գիտաս:

— «Եպեր, զէ կուրին հի՞նչ կ'ասին:

— «Սութտամ կէօլայ»:

— «Գեօրդնուկի՞ն: — «Լոքտամ կեօլայ»:

«Խլեզնի՞ն: — «Ըուտամ քօլայ»:

88.

— Իրեք լաւ կրդեցած տիրէցու հընկեր ըն գանաս, մին տեղ ըն գինաս, սվուծնաս, ուրիշ ուտելու բեն չըն գտնես, մին ձիւ ա ճրուես սուհլ ըն ընես, վճռես, թա չու որ մին լաւ բեն ասի, ձիւն էն օտի: Մինը ձիւն իրան կողմը քշելաւ ըսես ա. «Ղազարէ՛ արի՛ եկ արտաքս»: Մինն էլ եր ա ունես, քչուալաւ իւրան ըուաջին դնես, ծծղելաւ ըսես. «Լուծէ՛ք զդա և թողէ՛ք երթալ»: Ին մինն էլ եր ա ունիս, բրանումը դնիս, ուտելաւ ըսես. «Մուտ յուրախութիւն տեառն քո»:

89.

— Ապեկատար, պէյնս փոլ ըծեցեր, պոլ ա, սէասդ կտրի՛, երկաց, կորի՛, քաշուի՛:

— Մելիք, հմբրոթիւնը կեանք ա, իրեկ ա մնացալ, պրծնելաւ ըմ: Մին

տէր, մին մօլլայ, մի ճիւտի (հրէի) վըր-  
դապետ մին տան ղոնաղ ըն ինիս, մին  
աման փլաւ ըն բրիս: Ես ըրեքան մին  
տեղ ըսես ըն: « Ես փլաւը մին մարդ-  
անձաղ կը կուշտրցնի, եկէր քոն ինինք,  
երկենանք, հու որ լաւ արազ տեսած  
ինի, փլաւը էն օտի»:

Հիպու էն երկունը քոն չըն ի՞նիս,  
տէրը երա կնաս, փլաւը գիղիս, ել-  
լըհայ քոն ինիս: « Ա ըշտանայ ճիւճիւտը  
ըսես ա. « Մօմէս մրգրին գերրած դրախ-  
տը գեցէ րազումս, ինտի՛ բեներ կերայ,  
ինտի՛ բեներ խմեցի, որ ասուի չե կեալ»:  
Թուրքը ասալ ա. « Ա ուշամմատին ըր-  
քւոթիւնը գեցէ, Տի՛նչ փլաւներ տեսէ,  
Տի՛նչ կերակուրներ, Տի՛նչ շարպէթներ,  
Տի՛նչ Տիւրի, Տի՛նչ փարի . . . »: Տերն  
էլ ասալ ա. « Բ րազումս տեսէ որ  
Ճղանայ մինը երկինքն ա գինեցալ,  
մին էլ դրախտը, տեսէ որ էս ու-  
թաղումը մինակ ես ըմ մնացալ փլաւը  
ինքկալայ, կերայ»:

ա դառալ, ըռւըտհանայ գինալիս տան  
հարսնը ասալ ա. «Եղբեր, սոված գինալ  
մի՛, մին պատառ կաց, հաց թխիմ,  
կեր, ընտեհտը գինի»: «Քանի որ հարսը  
սաճաւ հաց ա թխալ, դոնաղը թէազայ  
պանրաւ կերալ ա: Աաճին երայ մընա-  
ցալ ա մին եօխայ, տան խոխերքն էլ սա-  
ճին չորս անկիւնաւը չուրսըլիւլէօր շա-  
րուած, վեզերը ծռած երշիս, որ մին  
պատառ էլ իւրանք նըհար անին:  
Հարսին սիրտը նիկացած հրցնես ա.  
Ուր կերթաս, միւսաֆիր աղեեր»: «Գիս  
ըմ Ա. Կրապետ, աքեր»: «Ի՞նչի համար  
կերթաս»:

— Իշտահ չօնիմ, գիսըմ թա Ա. Արը-  
պետան իշտահ օգիմ»: «Քրիստոսի սի-  
րոյն էղնի, յետ գառնալուդ ուրիշ գե-  
ղով գնաս»:

— Ատայ, Պուղի, ղորմի քո հօր, պոլ  
ա, էլ կրես չըմ դիմանալ, թա որ ինձ

սիրիս ըս, Եր կաց գինի, մին պատառ  
տինձանամ:

—Մելիք, հոնի (անցեալ) տարուան  
հիւգիդ սէրիս, էս մինն ա մնացալ, ա-  
սիւ գինիմ:

Հաթեցէ (Հաթերք գիւղացի) մին  
մարդ գիս ա, իւրանց հասած արտումը  
մին ճեանձաւ ընելիս ձի տսնաս, շատ  
վիսես ա. հեռու ոտ ա կնաս, ըսես: «Ա,  
դիւ հի՞նչ ալիմիլաթ ես, վար իտի  
զնջղած կոնդաւ ես անում. պո՛, պո՛, պո՛,  
պո՛, ինձ կօ՞տս (զիս կուտե՞ս): Մելիք, ձին  
կոնդաւ ա ընես էլլըչայ, մարդը քիւլաշ  
ա ընես (վախնալ) ւրուեռ գինիլաւ  
էլլըչայ ըսես, պո՛ պո՛ պո՛ պո՛ «այ ալի-  
միլաթ, մեր Քեօվիսան էլ կօ՞տս»: Զին  
էլլըչայ ճանձաւ ա ընես, մարդին քամա-  
կը ոսան ա ընես, ւրուեռ փիսչիլաւ  
ըսեռ ա, Պո՛, պո՛, պո, պո՛, այ ալիմիլ-  
աթ, մեր շէնին խալխը լոխ էլ կօ՞տս»:  
Զին կոնդաւ ըրածին պէս Գեասպէար  
պուք ա ընես, չուրու Հաթերք մին փրխ-  
չիս, իլլիկին իմաց տաս: Ժղովուրդը  
գեաս ա, արտան մօտի սուլ, ընես, մը-

ջրներան մինը ըսես. առ «Ըստրայ մրդագիւլ կ'ասեն, թա վար սպանենք ոչ խնչնու մըհալը լոխ էլ կոտի դէ. արտին չորս ընկիւնան կրակ տուէք»։ Մելիք, ձի տեսած չըն իլալ գիտացալ ըն թա ձին ճանավար ա։ Հիպու որ ձին խանձուալ ա կրական, ստակալ ժղովուրդը ասալ ա. «Վար Մակի (Մկրտիչ) ապերը ենար, մրդագիւլը մեզ ուտլական ար, մեր կեան ըզատից, Մակի ապօրը ճկոմեջին մին քուռամեխ որտանք, հու վար տեսնայ, ճնանչի, վար գիտնական ա»։ Մելիք, լըհայ որ քուռամեխը որընտաս, գիտկանը մռնես ա, ժղովուրդը լոխ մին տարի սուգ աընես։

91.

— Մելիք, մին մարդա իլալ, անունը Տրտըքէշ, շատ մտըծելան մին շէքէթհաց չ'ուտես։ Կնեկը մին գեաւաթ բըրդիւշ ա ընես, բըրիս, մարդին առաջը

դնիս, ըղաչանք, պղատանք ընես, որ  
օտի : | քշա որ գըթէօլը եր չ'ունիս թա  
օտի՞, (երբ դրգալը կ'առնու ուտելու), մի  
մարդ հերթան (երդիկ) ձէն ա տաս,  
«Տրտըքէշ աղըեր, ախը մեր էշը մին  
քոռակ ա ցնկնալ, յագի չօնի»: Տրտը-  
քէշը կնկանը ասալ ա. «ա՛խ, քար օտիմ  
ես քացախ օտիմ, զահըըմար օտիմ, էգիւց  
էն քոռակը մըծանայ, տանին փատի, յշ-  
ցումը ցխին մաջին որընկնի, հընչայ ըն-  
բռնըլական, եր օնին, որ յագի չ'օնի: Ինձ  
ասում ես հաց կեր. էլ հունց օտիմ.  
դէ՛, բրդիւշը եր կալ, տար, իմ հացա  
հարամ ա, ոչ գրշերը հալալ հաց օնիմ,  
ոչ ցիրեկը»: — «Ե, մարդ Աստուծ սիրես,  
հաց կեր, ուրիշին ցաւը տէարդը քեզ  
չեն տուալ քեզ հի՞նչ»: Տրտըքէշը էլ-  
լըհայ հաց չուտես:

(91.)

Պուղին կերթայ Ամարասու կա-  
թողեկոսից կոնդակ կ'առնէ գիւղերը շըբ-

չելու և պատթաւոր կերպիւ հանգանակութեամբ ամուսնացնելու իւր որդին: Երբ կոնդակը կըստանայ, կաթողիկոսին տալով զայն կ'ասէ.

— Հիւգեռուր Տէր, քո տուած թողթը մն կարդի՛, տեսնամ:

Կարդալը աւարտելուց յետոյ կ'ասէ.

— Հիւգեռուր Տէր, դէ՛ մին ուղորմոթիւն ցնծա, քու ձեռքադ մին սվթայ անիմ:

— Ետայ Պուղի՛, կոնդակ խնդրեցեր տուինք, էլ ի՞նչ ողորմութիւն ես պահանջում:

— Հիւգեռուր Տէր, ախր դիւ, որ քո տուած կոնդակը կըգեցեր, էութիւնը իմացեր, ուղորմոթիւն չըս տաս, դիւ որ քո գերրած գրին որխին երշիս չըս, օրիշը իսկի չի եշիլ:

Ա երջապէս կաթողիկոսն կըստիպուի Պուղուն ողորմութիւն տալ իւր կոնդակը յարգելու համար:

ման գալից յետ կը դառնայ, Ա՞ելեքի  
շներից մին սաստիկ կը ծեծէ:

— Ըտայ, էղ շոնը հո՞ր ըս թկես, կը  
կոչէ զայրացած Ա՞ելեքն:

— Ա՞ելեք, էրկու էրկեան ամիս ա  
զրպէօթիւն ըմ քաշալ սերտս օզէս  
ար Ղըբբաղի շան սէաս լսել վաթանը  
մչանք քաղցր ա, մչանք քաղցր ա, որ  
շանը սէասն էլ համուղ ա թըրւաս: Ըն-  
դրայ մըհար թկեցէ. որ վթանիս շանը  
սէասը լսիմ:

93.

Մի օր Պուղին Ա՞ելեքի հետ եկեղեցի  
գնացած էր, ուր սա նրան հարցուց.

— Ըտայ Պուղի, ախր որ զոլայ եր-  
շխս ըմ; էս պատկերը լըհայ ինձ ա երշխս:

— Ա՞ելեք, դիւ էլ պէտում ա իտի  
ինիս, էղ պտկերին մնան աման ժմանակ  
աման զոլայ աչքդ Հայոց ազգին երրայ  
պէտում ա պահիս: Աչքդ, սերտդ, մետ-  
քըդ պէտում ա քու ազգիդ երրայ ինիս

94.

Պուղին մի օր կ'ասէ.

— Ե, կնեկ, ծմակումը լաւ համուզ  
տանձ ըմ տեսալ մին չուալ տօ՛, գի-  
նամ, լցնիմ, բերիմ:

Երբ տանձն հաւաքած, չուան լցրած  
կը գայ, մի աղբիւրի վերայ հաց կ'ուտէ,  
և մի փոքր կը քնանայ, մի ուրիշ ծմա-  
կաւոր գալով. Պուղու տանձը իւր չուալի  
մէջ կը փոխադրէ և իւր սալորը Պուղու  
չուալի: Պուղին տանձը շալակած տուն  
կը վերադառնայ և խնդագին կ'ասէ.

— Ե, կնեկ, մին տանձ ըմ բերալ մին  
տանձ ըմ բերալ, լքհայ որ բրանումդ  
չըս գնիս, դանդի մընան հըլիս ա:

Կինն չուալը պարպելով կը կոչէ.

— Ա, մարդ, Աստուծ քու խըսեաթդ  
թակի, գինեցալ ըս թթոյ, զողուան  
շըւէօրը հւաքալ, բերալ, ըսկս ըս տանձ  
ըմ բերա՞լ:

Եյս անակնկալ եղելութիւնը Պու-  
ղին իմացածին պէս կը կոչէ զարմացած.

— Ը կնեկ, զորմի քո հօր, մին լաւ  
եշի, տես, ես Պուղի՞ն ըմ։  
— Հա, Պուղին ըս, ա մարդ։  
— Ը կնեկ, թա որ ես Պուղին ըմ,  
տանձ ըմ հւաքալ շըլէօր չըմ հւաքալ։

95.

Մի բարեկենդանի Մելիքն հասարա-  
կութեան հետ բացօթեայ տեղ ու բախու-  
թիւն կ'անէր, երեք աւանակներ գալով  
կը քծնէին և քըսքսելով կ'անցնէին։  
Մելիքն կը հարցանէ.

— Ա տայ Պուղի, էս չնչան ա, էշերը  
հինչ տեղ մարդ ըն տսնաս, գինիս ըն  
քսուես, յըղցաւ գինալիս էլ հեռու  
տեղան գեաս ըն նի քսուիս։

— Բա հո՞նց Մելիք ըս, որ էդ էլ  
չըս գիտաս։ Եշերը հիպու որ տսնաս ըն  
մունք իրանց սիրիս չընք, մըզանայ  
նղընաս ըն, լեզու չօնին թա գենգէատ  
անին, գեաս ըն ցխոտ, թզոտ, մոխրուտ  
փալանը մեր թէամիւզ շորերը լքսիս,

Եավաշ եավաշ մեզ ըսես. «այ մարդիկ,  
ախր Քրիստոս ձըզանայ մեծ ար, մեր  
ազգը պատուից, յարգից, մըզելքայ նս-  
տելաւ Երրուսաղամ գինից. գիւք մեզ  
հի՞նչու չըք սիրիս: Հսկացե՞ր, Ա՞ԵԼիք:

96.

—ՄԵԼիք, քանի որ Քրիստոս է-  
շերին ազգն էլ ա պատուալ, մունք էլ  
էս էշերը պատուինք, ասելով Պուղին  
երէք սուրահի գինի էշերին, բերանները  
բանալ տալով, բռնի կը խմացնէ: Էշերն  
մի օր և մի գիշեր շարունակ կը զողոան:  
Պուղին կ'ասէ.

—ՄԵԼիք, քե՞ֆ քե՞ֆ էշերին քե՞ֆն  
ա. մին տես հունց ըն զողոալաւ շերազ  
պայաթի ըսես:

97.

—Ետայ Պուղի, որ իտի էշերը սիրիս

ըս, մին գործ օնիմ; թա որ տեսնաս  
(կատարեա) քեզ մին ըշըբոռակ ըմ  
տլական:

— Մելիք, դիւ սաղ ինիս, ինձ մըհար  
համ քոռակ ըս, համ էշ, համ տայ-  
չայ, համ ձի, համ էլ օղտի գեօղռակ:  
Դործդ կը տեսնամ:

98.

Մելիքն Պուղուն կ'ասէ.

— Ատայ, էգիւց քշրհանայ իմ կոշտա  
գեաս, Գեանջայ ըմ զրկլական:

Պուղին հետևեալ օրն կէսօրին կ'ե-  
րեի, Մելիքն կը հարցնէ.

— Ետայ, ես քեզ ըսեցէ ոչ էգիւց  
եկ, Գեանջայ ըմ զրկլական:

— Մելիք, գինեցալ ըմ, եկալ:

— Ատայ, գիր կար, պէտում ար  
տնիր. գիրը էս ա հրեա:

Պուղին նամակը առնելով Գանձակի  
խանին կը տանի և պատասխանը առնելով  
կը վերադառնայ կրկին Վետարանոց:

— Ատայ, Պուղի, զարմացած կասէ  
Մելիքն, Գեանջան մօտի՞ ա, որ իստի  
Ճըլըճելլի գինիս ըս գեաս:  
— Մելիք, լըհայոր Շօշու անց ըս  
կընաս, Գեանջայ ա, էլչի:

99.

— Պուղի, ախր մեր էրկու էշերը սան-  
ձու ըն դեռալ, իրեք պայթալ ընք բերալ,  
կրացին ոչ թա սղբցնին:

— Մելիք, ես կը սղբցնիմ: ասելով  
Պուղին կերթայ Մելիքի մեծ կարասը  
կը բանայ, մի մի կուլայ գինի կը լցնէ  
աւանակների բերանը և կը լաւացնէ:  
Յետոյ կ'ասէ.

— Մելիք, ես մեռնիմ, հունց հաքիմ  
ըմ:

— Ատայ, ես ինիմ Մարաս, էն  
սուրբ կաւաք (Յակովիայ և իրաւա-  
փառայ ուխտատեղին) վկայ, ինկիլիզի  
հաքիմ ըս դիւ:

— Մելիք, դէ, կրասին գինան բերիւ

տօ՛, որ մունք մին լաւ խմինք, որ է-  
շերին մնան սանձու չը դեռնանք, հա-  
քիմ փուլին էլ ետքչետը կըտաս:

100.

Երբ գինին կը բերուի փասեանի և  
կաքաւի տաք տաք խորովածով միասին,  
Պուղին փրյալաները գինով կը լցնէ և  
լուրջ ձայնով կ'ասէ.

— Ա'ելիք, խմի՛, խմինք պօղ էշին,  
ու էշին կենացը:

— Ետայ, զորդ որ պել ըստ ատայ, ես  
ճափայ ըմ քաշալ գինի ածալ թա  
էշերին կենացը խմի՞ս:

— Աղայ, զորմի էշերին հօրը, թա  
որ էշերը սանձու դեռած չ'ինին, Տզա-  
փայտ վկայ, ինձ ոչ գինի կը տայիր, ոչ  
կարասը եր կոնուար, ոչ էլ մրհաւի,  
կը ըեի մսաւ քեֆ կը նինք: Քէշկեայ  
օրը մին էշի սանձու բռնար, օրը մին  
կարաս երունելաւ աման օր իստի քեֆ  
ընէինք:

Այս միջօցին աւանակներից մին կը զռուայ. Պուղին անմիջապէս փըյալաները նորից լցնելով կ'ասէ.

—Մելիք, զռուողը պօղ էշն ար, ը՛չը, սև էշն էլ զռուաց, դէ՛, ինձ թաղիս, Ա'ելիք, էշի հրսանիք ա, խմի՛ խմի՛նք. յետոյ բարձր ձայնով կ'ասէ.

—Պօղ էշ, քու կենացդ, սև էշ քու կենացդ. Ըստուծ շնուրհաւոր անի, շոպաշ, այ շոպաշ. Ա'ելիք, պար ըմ գեաս, շոպաշ տօ՛:

101.

Եյս ձայնի վերայ Ա'ելիքի կինն, որդիքն և աղախիններն ներս մտնելով Պուղու պարելը կը տեսնեն և երկու թուման (2 ոք. 40 կպ.) դրամ կը տան: Պուղին խօսքը Ա'ելիքի կնոջ դարձնելով կ'ասէ.

—Ծղակին, շնուրհաւոր հարսանիք, աչքդ լիւս, խերաւ, բարաւ հրսանիք ինի: Ծղակին, մին էրկու էշի սանձուն

կտրելաւ էրկու թուման փուլ ինքալէ, թա որ Մելիքի սանձուն բռնէ, կտրիմ; Հարիւր թուման հքմափուլ ինքոնիմ: Եպա Մելիքին դառնալով կ'ասէ.

— Աղայ, ես քերզ մըհար էրկու զահմաթ ըմ քաշալ. համ հքմոթիւն ըմ ըրալ, համ զւլոթիւն. էրկու թումանը էրկւ ուստի խրէկ ա:

102.

Սոյն միջոցին մի քանի մարդիկ գալով Մելիքին կը գանգատեն, դատաստոնը քուղուն կը յայձնուի: Ռոաջինն կ'ասէր Պուզուն ՚ի լուր Մելիքին.

— Ե, Պուզ քեր մատաղ, հրեանս փիս մարդ ա, օրը չուրիւկին մեզ ուշունց ա տաս, պըշապուռ, պեյմրաթընես, նհախ տեղան իռեւ ընես, ինձ թկես, կտուրտես. ոչ հալալ հաց օնիմ: ոչ հալալ ջուր, ոչ տնջոթիւն: կնեկս էլ ընտրայ ձեռքան պրծնելու սիրհար փախալ ա, հօրը տոնը գինեցալ: Մըհէնկ

խնդրես ըմ՝ դիէք Աստուծ, տըւէք դիւ.  
ինձ ըզատիս ընտրայ ձեռքան:

— Իրեք բեն կայ, որ մինը ուզես ըս,  
ըրա. Եայ տոնդ ծախի, դիւս եկ. Եայ  
էս տոնը ծախի, դիւ ինքալ, Եայ դինի  
շէնին գլխին նորըմինայ մին թաղայ  
տոն շինի. Էն ժմանակ դիւ էլ կ'զա-  
տուիս, կնեկդ էլ, հրեանդ էլ:

7

103.

### Երկրորդն կ'ասէք.

— Խս իմ աղբեք ա. մինմնուանայ  
դիւս ընք եկալ (բաժանուել ենո), աման  
բեն բեժին ընք ըրալ, միշացալ ... մէջ-  
տեղը մին տաշտակ, ոչչ ինքն ա եր ու-  
նես, ոչ ինձ տաս. Հրեւնց անինք:

— Եայ տաշտամկը ծխեցէք, փուլը  
մաջան կէս ըրէքու, Եայ մին խեղճ ըզ-  
քատի տուէք, տանի ձեր հօր հիւգւին  
մըհար ընլնցնի:

— Ոչ իրատի ա ընես, ոչ ինտի:

— Դէ՛, ո՞ դինեցէք, տաշտակը մաջան

կէս ըրէք կացնաւ, կէսը դիւ ինքկալ  
կէսը իւրան տօ՛:

104.

Երրորդն կ'ասէք.

— Իմ մար կնկանս նըշետ պրըշիս  
չե, կնեկս մօրս Ճողապ ատաս, իմ մար  
էլ կզնուիս առշունց տաս. թկը մըշակ  
ըն ինիս, հալալ հացս հրըմցնես:

— Ատայ, եայ կնեկդ խրատի, կապը  
քաշի (զըսպէ). եայ դիւս ըրաս, եայ մօ-  
րադ ջոկու՛:

105.

Մի քահանայ խիստ կոպիտ ձայնով  
և անախորժ եղանակաւ կ'երգէք «Որ  
պատուիրան» բկ. շարականը, զոր վեր-  
ջացնելից յետոյ Պուղին նոյն քահա-  
նան եկեղեցուց դուրս կոչելով կ'ասէ.

— Ետէք, թա որ Նէրանս Ծնոր-  
հալին իմանար որ էս շրականը դիւ

պէտում ա ըսիր, իմ հար շոն գեռնայի  
թա շինար (յօրինէր):

106.

Նոյն քահանան մի առաւօտ աւետարան կարդալու ժամանակ մոմակալ դպիրը բարձր ճայնով կը յանդիմանէր, էշ, տւանակ, արջ անուանելով, որպէս թէ մոմը լաւ չէր պահէր: Պուղին կ'ասէ:

— Ե, տէր, թա որ Միլիքին խուտը դիզերն էլ բերինք, ռաջիդ նիկցնինք, էլլըհայ իտի ըս կրդլական: Նըհախ տեղան ժամումը տրըցւէն ուշունց մի՛ տալ, պըյապուռ պէյսարաթ անիլ քըյանում իշեղ չի կայ. ոչ ճրագն ա մեղաւոր, ոչ տրացուն:

107.

Եմարասու կաթողիկոսն Միլիքին այցելութիւն եկած միջոցին Պուղուն կ'ասէ, ծիծաղելով.

— Ըստայ, ՊԸԼԸ-Պուղե, Մարալ ջորին  
խէ՞ իմ վարդապետան յետ ես առալ:  
— Օստայ ըմ սուրբ աջիդ, դէ  
Դիւ ինձանայ ոռոշւաթ ինքկալեք, իւս  
էլ քու վրդապետան ոռոշւաթ ինքկալէ;  
Պետալ պետալ, չըխար, կետար (փո-  
խարինաբար կը հաւասարի): Ունան մըր-  
գարան էլ ինտի ա ասալ, ասալ ա թա.  
«Հու որ քու ջորին ոռոշւաթ ինքօնի  
դիւ էլ ընտրայ ջորին ոռոշւաթ ինք-  
կալ \*):

առ այս սանիս օստանու մըրաթը —

աղձնիք հմային ազն փակը այ մի

108.

աղք սան աղձնիք նի ան մոս սանի

— ՊԸԼԸ-Պուղե, լաւ քարոզեչք կը

լինիս, եկ քեզ վարդապետ ձեռնադրեմ:

— Հիւգւոր Տէր, ես առանց ուրժ  
նուելու (ձեռնադրութեան) Միլերին  
մըհար համ անվեպար վրդապետ ըմ,  
համ, երաբսկապոս, համ կթզքկոս:

(\*) Մակուէս մարդարէի խօսքն է: «Ակն ընդ-  
ական եւ ատամն ընդ ատաման»:

109.

— Պըլը-Պուղի, ատայ, դու որ այս-  
չափ խելօք ես, Ե՞նլիքը ի՞նչ պատճառաւ  
քո անունդ պել է դրել:

— Ծառադ ըմ, ընտրայ մըհար, որ  
ես իւրանանայ շատ խելունք ըմ:

110.

— Պուղի, Վստուած սիրես. մին քա-  
նի լաւ կեափ արա, ականջ դնենք:

— Հիւգևուր Տէր, ծառայ ըմ քեզ:  
վիսես ըմ, թա իմ կեափերս Քեզ դուր  
չե գեան:

— Քո կեափերը շատ դուրական են,  
սկսիր:

‘Եոյն միջոցին Ս. Կաթողիկոսին կը  
ներկայացնէ իւր ատենադպիր սարկաւա  
գն բաւականի գրրուած թղթեր, զորս  
կաթողիկոսական կնքով կնքելով կը վեր-  
ջացնէ, ուր և Պուղին լուրջ կերպիւ կ'ասէ.

— Հիւգևուր Տէր, խնդրես ըմ, մին

մեօհը էլ իմ ճկատիս կոխի, որ ուրիշ  
մարդի չետ փոխս չընկնիմ: չիւն որ մին  
օր գեցէ, տանձ քղեցէ, բերէ տոն, տանը  
տանձը շըլեօր ար գեռալ:

111.

—Ետայ, դէ սկսի՞ր:

—Հիւգեռուր Տէր, մին աղքատ տէր  
ա ինիս, փիլունը ծիւ ծիւ դեռած, փուլ  
չիլալ թա փըլիւնացու ինքօնի: Տրա-  
կինը ինկլիզի խելք ա բնըցնես, իւրանց  
իրեք մեծ մեծ շուները խուզես, բիւրդը  
գիզիս, մնես, չինիս, գեռուրծես, մին լաւ  
փելուն կրես, տէրին տաս: Տէրը որ-  
խնաս ա, մին քանի տարի կոըվրուես,  
փելունը մշուիս ա, տրակինը տէրին մը-  
հար շալվար ա կրես, քիւհնացած շալ-  
վարան էլ սև էշին մըհար չիւլ ա շե-  
նիս: Հիպու որ տէրը էշին չիւլը ծոռւած,  
փորն ընկած տանաս ա, էս ոտնաւորն  
ա ըսես գերլուխ թփհրելաւ.

«Ե կիտի հա՛ ո՛վ, ժամանակ, ժա-  
մանակ:

«Արին ժամանակ շուն էիք շատ հա-  
շան,

«Արին ժամանակ է հրեշտակները վե-  
րաբերեցին իջան,

«Եյժմ էլ կացել ես սև էշին ջոխ-  
տակ փչան:

112.

— Վտայ Պուղի, ես լաւերն իմ ձեռ-  
նադրում:

— Հիւգեռութ Տէր, զորդ ա, լաւերն  
ըս ձեռնադրիս, Եզրին ջանին քցիս:  
Քու ձեռնադրած վթրդպտներան մինը  
ըստեղ քարոզ տուաւ ասից. «Քրիստոս  
ասում ա թա որ մին երեսիդ թխեն,  
էն մինն էլ դէմ արա»: Ես խօսքը մետ-  
քը ի պահալ թաւրիզ զինալիս չորս  
թորքի ջանկ ընկէ, մինը ըրեսիս մին  
լաւ ծեփից, էն մինն էլ դէմ ըրէ, ըն-  
տրայ էլ ծեփից, գլուխս դէմ ըրէ, ծե-  
փից, մէջքս դէմ ըրէ, ծեփից, դէօշ  
դէմ ըրէ, ծեփից: Եսուես միտք ըրէ,

ըսեցէ: « Քրիստոս իստի անխղճմոանք  
բեն չի ասիլ, մեր վրդպետները Ըւտրանին  
մին իրեւնն կրգեցալ: Քրիստոս աման  
անասունի մին մին եարադ ա տուալ որ  
ինքը իւրան պըհանի տիւշմանի ձեռ-  
քայ: Եզանը, գիւմաշին պօղէր ա տուալ  
գիւլերան պհպնուիս ըն. շանը, գիւլին,  
արջին, ըռիւծին, դփլանին, ըզուէսին,  
չղալին, կատուին Ճիներ, ղեյներ ա տուալ  
որ ուզիս ըս թա մուտանաս, Ճիներաւ,  
ղըյներաւ քեզ ծիւ ծիւ ըն ընես. էշին,  
ձիին, ջորուն ուզիս, թակիս, ըռաջան  
կծիս ա, քըմական քացի տաս. օձին,  
լոկին, խլեզնին, քըըթնթուշին կեռեք  
ո տուալ որ ուզիս ըս թա մուտանաս,  
Եեռեքները ինտի մին ղընջղես ըն, որ  
իւելադ իլիմ իլիմ փխչիս ըս, թակար  
շուշին, թառլան ղուշին, լաչին ղուշին,  
ըկուեին, գչղակին, ղուզղունին, չղանին  
կտոց ա տուալ դրանցանաւ իւրանց  
կեանքը պհպնես ըն: Լն պիծի, մէջ  
քը բերակ մղըըճանճին խարտ ա  
տուալ, գէ տղայ ըս, մին մուտաց, ինտի  
խրտես ա, ինտի խրտես ա, որ տղտղու-

րես ա, սրտիդ գթոլը նի ա կնաս (սիրտը կը կսկծացնէ): Գեազաններին, ընըսուններին, թոչուններին, սզուններին իստի եարադ տուող Աստուծը մարդին ասիլ չի թա. «Թող քեզ թակին, կուտրատին, պլոկին, տոնդ, տեղդ քանդին, հինչ որ օնիս, ձեռքադ ինքօնին, քեզ տկլաւրցնին. ասիլ չի լիւ կաց քեզ սըպտնին, խոխերքդ անտեր, եթիմ, սոված, ծարաւ, տկլոր մնան՝ կնեկդ ըրբւերի մնայ, շուրու իւրան մահը մշանք լաց ինի, սուդ անի, որ տչքերը քուռանայ, խոխերքդ մնան ոջլուտ, հանծուտ, եղտուտ, վիզը ծռած, պրոնկնած, անտէր, ընտէրու (անտէրունջ)»: «Քրիստոս ասալ ա թա. «Որ մին իրեսիդ թխին, էն մինն էլ դէմ ըրած, որ թխողը իւրան ըրածան մհանչի, էլ թխի ոչ: Քրիստոս ասալ չի թա դիւ դինի, սրսադի մնան քեզ սպանիլ առո՛»: Հիւն որ Քրիստոսի դեռ մին իրեսին ին թխալ ինձ մնան էրկու իրեսին, գլխին, մէջքին, տէօշին, ալուին, ուսերին, տունդին թխալ չին, էլ դմացաւ ոչ, ձելի ըրաւ իւրան պըհ-

ալնելու մշար ասից» «իմ իրեմիս հի՞նգ  
չու մըհար ըս թիսես, ախը ես մինչըս  
թիւն չըմ ըրալ»: Այս վայսն պիտի ն  
Հիւգեռուր Տէրածառայրմ, ըսեցէ  
կրկղթիւնաւ «Ե թիրքեր, անը Աստոււ  
ծը կը սէրիք, ձեր արիւնը ինձ մի քսեք,  
զլսաս հռացէք, քշուեցէք ինձանայ  
ձեռնը երկալիք, ինձ զօռաւ զաննլու  
մի շենիք, լիւ կացէք, ես իմ յղես գիւ  
նիմ»: «Հայ կեաւուր, հալաւ խուսինըս  
հալայ ճողապըս տաս մեղ» ըսեալաւ  
մըհակները քշեցեն, ջանիս ընկեն, իրեքը  
հիւնի շումազաւս սպնիցէ, զամաս էք  
փորերը կուխեցէ, սրտըգթոլը, ձիկըր-  
պանդերը խոնըխալթիշ ըրէ, մին թարս  
հոգոց ըսելաւ թաւրիզ գեցէ. մինը փա-  
խաւ, ձեռքաս պրծաւ: Այս վայսն պիտի ն  
Հիւգեռուր Տէր, Հայոց երպսկալու-  
ները, վրդապետները տէրտէրները, սր-  
կաւագները տրացուները իստի քարոզ-  
ներ, տալաւ, մեր Ազգին, Աստուծանաւ,  
Բւտրանաւ, խաչաւ ժղուվրդին աչքը  
վիսցըն, միտքը միուրեցեն, ձեռքերը  
թիւլցրեն: Ըսեցեն «աման բեն մեղը

ա, հրեղէն կրակին մաջը կընկնիք, Աստուծ ձեր գլխին քար ու կարկուտ կը թափի, մարդի թիւանկ չե երայ անիք, թորը, զաման զինան դիւմ չօնիք, գինեցէք, զաապի ոչխարի մնան առանց խուսելու ձեզ կտորին՝ ջնջին, որ ըրբւոթիւն գինիք, Ըստուծու իրեաը տեսնաք»: Թուրքերին միւշտէիտ, ախունդ, զազի, մոլայ, տէօվաիշ իմնալաւ որ Հայոց Տիւգըւրականները իստի քարոզներ ընտաս իւրանց ժղովոդին, իւրանք էլ իւրանց ժղովովոդին քարող տուին. Քրիստունէին ապրանքը ձեզ հալալ ա. գիւղացէք, թնիցէք, սպնեցէք, կնեկ, աղջիկ, խոխայ, ըրախույ, փուլ, ապրանք տէօվաթժ իւլեցէք, կերէք, քեֆ քշեցէք»: Ըստրայ մըհար զգլալաշ, թաթար, լէզկի, օսմանլու, քիւրտ, աւշառ եարազները սրած, ղուզղունի մնան Հայաստան հասան վանքերը, երղեցիքը, քաղաքները շէները քրոքանոդ ըրէն, ժղովուրդը որը կուտրեցեն, որը ետիր տարեն, որը թուրքցրեն, որը ծխեցեն, փուշացաւ, գինից, Հայաստան պլիշակ դեռու, մեր

ազգին տոնը քանդուից: Դեռ չուրու  
էս ըսօր, դեռ չուրու էս սրհաթն էլ  
իստի փորձանքները մեր ըշխարհան պը-  
կսես չ'ինիս:

Հիւգեռը Տէր, տանամ ըս, որ մեր  
Տիւգըւրականները իստի քարոզներ տա-  
լաւ մեր ազգին տոնը քանդալ ըն,  
ազգին մէջքը կոտրալ ըն. Հայութեան  
անունն ա մնացալ բեսուն բեժին Հայան  
իրեք բեժինն ա մնացալ. քսանօխտը  
բեժինը փուշացալ ա: Հիւգեռը Տէր,  
Տինչ որ չուրու մըհենկ ըրէք, պօ՛ ա,  
պօ՛ ա, պօ՛ ա, պօ՛ ա, պօ՛ ա: Ըստրանայ  
դէնը լաւ կրդցրէք. Ըստրանին էրկու  
իրեսն էլ դաս տուէք, իմաստուն կար-  
գաւորներ շատցրէք որ: Տեչօլմասա  
(գոնէ). մըհեկսայ ետք մեր ժղուվրդին  
լաւ լաւ քարոզ տան, ժղուվրդին խղճ-  
մտանքին փոշը դիւս օնին, ժղուվրդին  
սվրցնեն. որ ինքը իւրան կեանքը պչե-  
լաւ Ըստուծու օրէնքը քանդած չինիւ  
խղճմտանքին թխած չինիլ ուրիշի վր-  
նաս տուած չինիլ: Ես էլ ըմ մին պա-  
տառ ըստարան կրդեցալ. Քրիստոս

ըսես ա. «Են աման ըենը՝ որ ուզիս ըք  
թա մարդիկ ձեզ անին, դիւք էլ ըն-  
տրանց ինտի ըրէք. չիւնոր օրէնքն էլ  
էն ա մըրգարէութիւնն էլ» (Մատ. 12)  
զլ. 12): Ես խօսքը Քրիստոս մինակ մեր  
աղգին մըշար չըսես, աման աղգի, աման  
մըշար էլ ըսես ա, աման աղգի, աման  
մարդի մըշար ա ասուած: Ես խօսքին  
մետքը ես իստի ըմ իմնաս. «Քրիստոս  
աման մարդի հրցնես ա. «դիւ ուզիս ըս  
օրիշը քեզ ուզրմոթիւն տայ, պատիւ  
անի, զոնազ անի, նեղը ընկած տեղդ  
քեզ քէօմէակ անի»: — Հա, ուզիս ըմ:  
«Գիւ էլ ուրիշին ուզրմոթիւն տօ՛ պատիւ  
ըրա, նեղ տեղը քէօմէակ ըրա: Ոիւ ուզիս  
ըս, որ օրիշը քու տոնդ կտրի, փուլդ  
տանի, քեզ սպանի, խոխերքդ եթիմ  
թողի, բոլոր իլած, չիլածդ գիւղանայ,  
թլանի, տանի»: — Ձէ՛, ուզիս չըմ: «Գէ՛  
որ իտի ա, դիւ էլ ուրիշին տոնը կտրիս  
ոչ, փուլը տանիս ոչ, օրիշը սպանիս ոչ  
խոխերքը եթիմ թողիս, բոլոր իլած  
չիլածը գիւղանաս, թլանիս, տանիս:  
Էմմայ թա որ օզիս ըս օրիշը սպանիս,

անպատճառ դիւ էլ ուզեմ ըս, որ ու-  
րիշան սպանուիս էսա արդարութեան  
օրէնքը»: — Զէ, Քրիստոս, էս ետի ասած  
խօսքի իմ բենիս եկը ոչ, ես զօրպայ  
ըմ, Քերօղի ըմ, ամլան ըմ: Ես պէ-  
տում ա օրիշը սպանիմ, գերզովթիւն  
անիմ, թլանիմ, տուները քանդիմ: Իմ  
կեանքս էլ սազ սալամաթ մնայ, օտիմ,  
խմիմ, քեփ քաշիմ: «Դէ որ իտի ըս  
ուզիս, դէ որ դիւ ուրիշն կեանքը  
կտրել ըս ուզիս, օրիշն էլ իրաւունք  
օնի քու կեանքդ կտրել քունը գիւղա-  
նալ թլանիլ տունդ քանդիլ, քեզզ  
մնան անիլ: Զիւն որ ես ասալ ըմ: «Են  
աման բենը, որ ուզիս ըք, թա մարդիկ  
ձեզ անին, դիւք էլ ընտրանց ինտի  
ըսէք»: «Աման բեն» ըսելաւ պարզ ասալ  
ըմ, թա բարի օզիս, բարի կըստանաս,  
թա չար օզիս, չար կըստանա»:

113.

— Պուղի, ես քեզ ասացի կեանի  
արա, թէ եանշաղի նման քարող տուր:

— Հիւղեռը Տէր, առաջ խօսքը Դիւ  
բեցեր, ըստեցեր. «Ես լաւերն եմ ձեռնա-  
դրում», Երկուինձինն էլ շատ ցաւ ու-  
նեցողը շատ կը խօսի, շատ տէարդ ու-  
նեցողը եանշաղ կ'ինի. Հայոց ազգի  
ցաւերը, տէարդերը, Հայոց Տիւղիւրական-  
ներին վնասակար, տնաքանդ քարոզները  
ինձ եանշաղ ըն ըրալ ցաւի, տէարդի  
տրըթրալ ըն: Դէ մեր ցաւերը, տէար-  
դերը քեզ ասինք ոչ Տիւղ ընք ըպա-  
կան:

— Մելիքին ազեղ արել վկայ, Պու-  
ղի, Աւետարանի էս խօսքերքը շատ  
լաւ մեկնեցիր. Եթէ բոլոր Աւետարանը  
էսպէս մեկնես, կատարեալ մեկնիչ կը  
լինիս:

— Մելիքին թռվահակ արել վկայ  
ինի, Մլիքին ծռուած պորտը, քաշալ  
կատարը վկայ ինի, Ըւտարանը քու  
վրդպտներան լաւ կը մեկնիմ, անունս  
պել ա դիւս եկալ վիսես ըմ թա մար-

դիկ իմ մեկնութիւնս ընդունին ոչ:  
Լաւար ԱԵԼԻՔԻՆ էրկու աշքը դիւս  
պրծնար, Հինչ իմ անունս պել դիւս  
գեար:

115.

—Ատայւ ես քեզ սպնլական ըմ,  
դժոխքը զբկիմ ինձ պըյապուռ, պեյ-  
սրաթ ըրիր Արբազանին կշտին:

—ԱԵԼԻՔ տռանց սպնելու ես ինձ  
կը գինիմ. ըմսական քանի՞ փրնչապաթ-  
փուլ կը տաս ինձ և տրեկան քանի  
ձեռք շոր: ԸՆՇ՝ Էս ա դիս ըմ:

116.

—Պուղի նստի՛, նստի՛. քանի՞ տարե-  
կան ես:

—Ճիւղեռը Տէր, թա որ ԱԵԼԻՔԻՆ  
ձեռքան ըստարի էլ սազ պրծնիմ քը-  
ռասուն տրեկան պէտում ա ինիմ. թա  
որ դիշերներն էլ թաւանինք (Հաշուենք)

ութասուն տրեկան ըմ, թա որ մըշենկ  
մեռնիմ, ըրեսուն իննը տրեկան ըմ:

117.

— Կինդ քանի՞ տարեկան է, Պուղի:  
— Հիւզեռ Տէր, կնկանս ոննը  
ծանոր ա. թա որ խոխան բրիլիս մե-  
ռաւ ոչ, ըրեսունը մին տրեկան կինի:

118.

— Քանի՞ զաւակ ունիս:  
— Թա որ էն նոր ծնլացուքն էլ  
Սիլիքին ուղութքաւը սաղ մնայ, հենկ  
ըրախայ օնիմ:

119. +

Սոյն միջոցին Ըմարասու գործակալ  
վարդապետն մի կին, անքարոյականու-  
թեան յանցանքով բռնուած, մի շուա-

Ե մը ձգած և չուալի բերանը պինդ  
կապուած, ծեծել կը տար: Կի՞՛ը ամեն  
մի փայտի հարուածը ընդունած ժամա-  
նակ ցաւագին ձայնով կը գոչէր:

— Տոնդ քանդուի վրդապետ, կնե-  
կըդ մեռնի վրդապետ, խոխերըդ կը-  
տօրուին վրդապետ, հիւգիդ սուտանայ  
տանի, վրդապետ:

Պուղին կը պատասխանէ.

— Ա րդապետին տոնը էն օրին ա  
քանդուալ, որ վանք ա մատը կընեկը  
չեթերած՝ մեռալ ա, ողերքը չի ծնած  
ժաղուալ ըն:

Եյս խօսքի վերայ ու Կաթողիկոսն  
և Մելիքն շատ ծիծաղելով կնոջ ազա-  
տութիւն կը տան:

Մի ծպտեալ ոռւս զօրական Մելի-  
քարանն զիմելով թախանձանօք ձի կը  
խնդրէր հեծնելու և Շուշի գնալու-  
իմանալով որ ոռւսերէն խօսող և իմացող

չկար, ձեռքի շարժումներով կ'իմացնէր  
որ վարձքով ձի կ'ուղէ: Ա երջապէս  
կարծելով թէ կարող էր գոնէ կոպիտ  
ուստերենով հասկացնել, կ'ասէ:

— Տաշի, տաշի. (տաճ, տաճ):

Պուղին կը պատախանէ, փոքր  
ինչ հեռի կանգնած նոյնպէս ձեռքի  
շարժումով.

— Վնուծահար, կացին չի կայ, հո-  
րագ չի կայ, հինչաւ տաշիմ:

— Ոկարէյ, սկարէյ, (շուտ շուտ):  
— Փատը տաշից, տաշեղը շոգրոնց,  
մնաց կսկարէնքը, որ փլաւ էփի, օտի:

— Բատի՛ սուտա, (այս տեղ եկ):  
Տիւլկեար ուստայ, Բատին շենումն

չի, զինեցալ ա Գեանջայ:  
— Եք տի չորտ. (ոյ սատանայ):  
Չոռը կենայ քու պկադ, քո հօր  
քո մօր պկան:

— Աելիք, տանաս չըս, ուստայ Շատին առ ուզես, Հորագ առ ուզես, կացին առ ուզես. կսկարէնք առ ուզես. ինտի առ ըրւաս, որ տոն աշխնիլ տլական։ Ոերտը, երխնբիլաւ առ ուզես. մին լաւ փլաւ է-փիլ տօ', օտի, գինի։

122. +

Ա Ե, պիմախառապ ովրաք Ա ուր սրբ Ջուսին մեկնելից անմիջապէս վերջը մի եւրոպացի հնախոյզ՝ հիւր կը գայ Մելիքին և Պուղու համբաւը լսելով՝ երեք առաջարկութիւն կ'անէ ձեռքի շարժումներով և գոհացուցիչ պատասխան կըստանայ։ Հնախոյզն առանց խօսելու մատով գետնի վերայ մի կարտկնածէ գլոր գիծ կը քաշէ, Պուղին շրջագիծը միջից կը կիսէ նոյնպէս մատով առանց խօսելու։ Եւրոպացին ձեռները իրարու մօտեցնելով մի գլոր գունդ կը ձեացնէ. Պուղին նոյն գունդը շրջապատող առելի մէծ կամար։ Հնախոյզն միայն ցուցամատը կը բարձրացնէ. իսկ

զուարձապանն իւր երեք մատները:  
Հիւրն խնդագին կը կոչէ.  
— Ա իւա, վիւա Պուկի (կեցցէ՞, կեց-  
ցէ՞ Պուղին):

Հնախուղի ընկերն հետաքրքրու-  
թեամբ կը հարցնէ գաղղիերէն լեզուաւ.  
— Ի՞նչ կը նշանակէին այդ նշան-  
ներն և շարժումներն:

— Ես ասացի, աշխարհքս այսպէս  
գլոր է. Պուղին պատասխանեց թէ.  
կէսն ջուր է: Ես ասացի, երկրագունդս  
օդի մէջ սահմանուած է. Նա ասաց,  
տիեզերքով և երկնային կամարներով  
շրջապատուած է: Ես ասացի, Եստուած  
մի է. Նա ասաց. մի Եստուածութեան  
մէջ երեք անձինք կան, Հայր, Որդի և  
ո. Հոգի: Եյս պատճառաւ գովեցի  
իւր արժանաւորութիւնը:

Ա. Կաթողիկոսն և Մելիքն Պու-  
ղուն կը հարցնեն.

Պուղի, նա ի՞նչ ասաց, դու ի՞նչ  
պատասխանեցիր:

— Ին մին պիւլչօր խաղ քշելաւ  
ասից՝ մին սինի փիլաւ կայ, կոտի՞ս, ըսե-

յէ, կէսը կոտիմ: Են ասից. մին աման  
էլ յաւ քեանագ կայ, էն էլ կոտիմ.  
բանցէ, անոր ծածկի սառչի ան շուրու  
փիլաւը օտիմ: Են մին մաննաւ ասից.  
աշքդ կը Տէանիմ: Ես էլ իրեք ման-  
նագ բանցէ, Յէրկու աչքերդ կը Տանիմ:  
քէթդ էլ պուք կը տամ, խելունք կացնւ.  
— Ատայ, Պուղի, ըսօր շատ ըս հմր-  
ձակ խուսիս:

— Մելիք, ինձանայ շատ իւիլ հմր-  
ձակ խոսողներ էլ կան. հարբածները,  
պելերը, գիժերը, սարսաղները, յան-  
կարծ հրուստացածները, Կթղթկոսին  
գեատաները, շահին աշպազները, խանին  
եասաւուները, քեովիսաներին գղերները  
ինձանայ շատ իւիլ հմրձակ ըն խուսէս:

123. +  
Պուղին Մելիքի Էշերից մին առած  
կ'երթայ Վուխու վեճակի Մեծ Ուօ-

կիւթլու գիւղն ցորէն բերելու, (վասն  
զի՞ Վարաբաղ սով կը լինի և հիւր կը  
լինի մի մահտեսու տան մեջ: Վահտեսին  
Պուղու էշը շատ լաւ տեսնելով, հիւրի  
քնանալից յետոյ, երկաթները կը տա-  
քացնէ և էշին չորս ոտքերը կը տաղէ:  
որպէս զի առաւօտուն անասունն չկարո-  
ղանալով շարժիլ, իրեն մնայ: Վահտե-  
սին այս գործողութիւնը կատարելուց  
յետոյ մինչև լուսանալը բարձր ձայնով  
սաղմուս կ'ասէ և կոչնակը զարկածին  
պէս կը կ'անչէ.

— Վ ոնաղ եղբայր, երկաց, ժամ  
գինանք, աղօթք անենք:

Պուղին, որ վերմակի տակից ամեն  
բան դիտած էր, կ'ասէ.

— Մուղտուսի, ոչ Երօուսաղամ կը  
գինիմ, ոչ էշին ոնները կը տղտըրիմ,  
ոչ ճղճղալաւ սաղմուս ըսելաւ ուրիշին  
քոնը գլխին հարամ կ'անիմ, տեանկա-  
սար կ'անիմ, ոչ էլ ժամ կը գինիմ: Ըստած դ  
ընդունելի պաշտօն, պտարագ ինի:

Երբ մահտեսին տուն կը դառնայ,  
կը տեսնէ որ իւր ձին Պուղին համե-

տած (փալանած), ցորէնը կը բեռնէ,  
իւր պատւից վախնալով բնաւ չխօսիր:  
Պուղին ձին առնելով իւր Ճանապարհը  
կը շարունակէ

125.

— Ե. Պուղ, Հո՞ր ա պօղ էշը, ես հո՞նց  
ձի ա:

— Մելիք, Ժմանակը փոխուալ ա,  
մշեկսայ էշերը, որ իւրիւկիւնը գիւմումը  
կպե՞ս չըս, ըսւտհանայ եր ըս կնաս,  
տմնաս ձի դեռած:

126.

Ե. Խեն «Գոհութիւն» ասուած ժամա-  
նակ Աւետարանոցի դպրապետնիւր շապի-  
կը հանելով, խռովածի պէս զայրացած,  
դուրս կ'ելնի. Երբ Պուղին մի օր պատ-  
ճառը կը հարցանէ, նա կը պատաս-  
խանէ.

— Բնտրայ: մըհար ըմ դիւս գեաս,

որ Այժմ զըկոսին անու մը Մելիքին անուու  
մը ժմարաբտէրին անումը պատարագումը  
յիշիս ըն, իմ անումը յիշիս չըն, որ  
աման պատարագ ընելաւ մջանք շապիկը  
գեցած կրդիս ըմ:

Պուղին կ'ասէ.

— Բատի, Ես գեռ, շապիկդ գեց,  
կարդի, ես յիշել կը տամ քու անումզ:  
Երբ պատարագն կը վերջանայ,  
Պուղին վերի կարդացող երախայոց  
կ'ասէ.

— Ե, խոխէք, ըստրայ դէնը «և քա-  
շանայիս, որ զպատարագս մատուցանէ»  
ըսիլան ետը, ըսեցէք, «և մին կռան  
տրսնը հենգ լաւաշ զիզող դպրապետ  
Բատուն, որ աման պտրագի կէսումը  
շապիկը հնես ա, փիշիս»:

Դսիրապետն կը խոստանայ այլ ես  
շապիկը կիսատ չհանել, միայն թէ իւր  
անունը բնաւ չյիշատակուե:

— Պուղի, ախր Մելիքին աղջիկը տղիս  
մըշաբ ուղիս ըմ, տան շի:

128.

Արնեկս ինձ հետ պօզ պօզ ա ընետ.  
Հո՞նց անիմ (անհաղանդ է), կը հար-  
ցանէ մի ուրիշն,

— Ատայ, խէ՞:

— Ա Պուղ, հրուստի աղջիկ ա, իւ-  
րան մըհար փուլ ա բերալ, տնամաջ ա  
բերալ, գեատայ ա բերալ. Էլ կղակիս  
եղշիս չի: Բա հո՞նց անիմ:

— Դիւ, փուլ, տնամաջ ըս օղալ կնեկ  
ուղելու տեղ, աղջիկ բրելու տեղ քու  
տան մըհար մին մէծ թագուհի ըս  
բերալ. ըստրանայ գէնը ձեր տան մէջ,  
կնկանդ առի պիծի գեատան գիւ ըս:  
Էն քու մարդն ա, գիւ ընտրայ կնեկը,  
էն աղայ ա, գիւ գեատայ ըս. չուրու  
մեռնիլդ ընտրայ մըհար գեատութիւն  
պէտում ա անիս:

129.

Մի ուրիշն կը հարցանէ.

— Պուղի, քեր մատաղ բա ես հո՞նց  
անիմ: հրուստի աղջիկ ըմ օղալ աման

տարի էրկու ծեռք թէազայ շոր առ-  
գիս, ես էլ աղքատ մարդ ըմ, զօռս պտես  
չի, թա առնիմ:

Դիւ էլ գինի՛, տարանը մին գիւ-  
մաշ, մին եզնը ծխելաւ կնկանդ մըհար  
շոր ըթա. օտիլը, խմիլը, գենալը լաւ  
պահի՛: Թա որ անիս ոչ, կնեկդ ուրիշե  
փուլաւ աման բեն կ'անի՛:

130.

Մի ուրիշն Պուղուն կը հարցնէ.

— Փեր մատաղ, ախր աղջիկս մըծա-  
ցալ ա, տանը մնացալ օզող չի կայ:

— Մէալքիւմ (Մելքոն), շուրու մը-  
հենկ դռնաւդ մննող, աղջիկդ իսկի օ-  
զող իլան, թա ոչ:

Ե, Պուղ, հենկ մարդ եկին, ուզեցեն,  
տուի ոչ:

— Խէ՞ տու էր ոչ:

— Պէցի, թա լաւ մարդի տամ, իմ  
հաւան կացած տղին տամ, էն էլ գի-  
նից, օրիշ աղջիկ օզեց:

— Զորսան մինը հաւան կացած,  
տուած պիտիր. դէ գինի, մշեկսայ դէ-  
նը հու որ օղե, էլ եշել մի՛, տօ՛, որ  
աղջեկդ մնայ ոչ խեղճ, անմիսիթ ար:  
Առի լաւ կ'ինար, որ ժմակին ըղջկանդ  
հրցնիր, էն չորսան որը հւնիս ար, ըն-  
տրայ հետ պսակուար:

131.

Այս բոպէին իպրահիմ խանից զր-  
կուած չորս սպասաւորներ ներս կը մտ-  
նեն և կ'իմացնեն, որ Պուղին պիտի տա-  
նեն կախելու: Կինն կ'ասէ՝

— Ա մարդ, զորմի քո հօր, մին չը-  
ւան տար, գեալիս մին պատառ փատ  
բեր, թորենը վառիմ, հաց թխիմ:

— Ես մի՞ն. կ'ասէ Պուղին և մար-  
դոց հետ տանից կը հեռանայ:

— Իսկ երբ Խանին կը ներկայանան,  
կ'ասէ նա.

— Տարէք, շուտով կտխեցէք կախա-  
ղանից:

— Ես երկու, կ'առէ զուղին և  
թուրքերէն բարձր ճայնով կը կօչէ, — եր-  
կուսին խելքեր մին է: — Ո՞ր երկուսի զուղի դարձնել տա-  
լով կը հարցնէ.

— Խան, կնոջս խելքն ու քո խելքն  
մի աստիճանի են:

— Ի՞նչպէս:

— Ահա այսպէս. ես կախուելու և  
մեռնելու կը գայի, կինս փոխանակ լա-  
լու և սգալու՝ ծիծաղելով ասաց. «այ  
մարդ, չուանը տար և վերադարձիդ մի  
շալակ փայտ բեր, հաց պէտք է թխեմ»:  
Խսկ դու, առանց հարցափորձի, առանց  
դատաստանի, առանց ստուգիւ իմանա-  
լու թէ՝ ես եմ այդ յանցաւորն, թէ  
ուրիշն է, անմիջապէս վճռեցիք. «տա-  
րէք, շուտով կախեցէք կախաղանից»:  
Այս պատճառաւ երկուսիդ խելքն ես  
մէկ է:

Պուղին ոչ միայն կ'աղատուի, այլ  
և մի ընտիր նժոյդ պարզեւ ընդունելով  
կ'երթայ գիւղն:

132. ~~132.~~ բայց բար նիս  
սխոփ ո՛ւ զայ ո՛վ զան արդ առաջ ո՛վ  
այս — Ետայ, բա ես հսկացէ, թա քեզ  
տարալ ըն, կախին. մըշենկ դիւ իստի  
խանի ձիալ ը՞ս գեաս:

— Մելիք, Պուղուն աղան, որ Շնա-  
զարն ինի, Համ կը կախին, Հոմ կը  
խաչին:

— Ետայ, լակոտ, ինձ հաւան չըս,  
ելլըհայ իմ խաթրիս ա քեզ սաղ բեց  
թողալ քէօհէան ձին էլ տակդ քա-  
շալ, առօք փառօք քեզ ետ զրկալ:

— Մելիք, քաշալ կանտազդ վկայ  
ինի, քու խաթրաւդ շըմ ըղատուալ, էս  
ձին էլ խալաթ ինքկալալ կնոջս աղեղ  
խաթրաւն ըմ ըղատուալ, խանին ձին  
էլ խալաթ ինքկալալ:

— Ետայ, դէ որ իտի ա, թա որ զի-  
նիս, Վանլու, Վաման խանին տանը  
մին զիշեր զոնաղ զեռնաս, սաղ, սալա-

մաթ գեաս, քեզ բեսուն թիւման փուլ  
կը տամ, էրկու ձեռք էլ շոր. Են վախ-  
տը կ'իմանամ, որ իմ խաթրաւս չըս  
ըզատուալ:

Պուղին ձիով կ'երթայ, հիւր կը լի-  
նի. մարդասպանն կըսկսի իւր կիները  
չափազանց ծեծել աղախինները նախա-  
տել որդիքը չու։ ններով պինդ պինդ կա-  
պոտել իսկ Պուղին բնաւ ոչ կը խօսի  
և ոչ կըմիջամտի։ Մարդասպանն յե-  
տոյ որդիքը կ'արձակէ և ընտիր ընթրիքով  
իւր հիւրը մեծարելով կ'ասէ.

— Պուղի, ես իմ բոլոր հիւրերը  
այն պատճառաւ սպանած եմ, որ նորա  
միշտ խառնուած են իմ ընտանեկան  
գործին և իմ տան կարգադրութեան։  
Եւ որովհետեւ դու իմ ոչ մի բանիս չը-  
խառնուեցար, ոչ միայն քեզ կազատեմ,  
այլ և քեզ մի լաւ վկայական կը տամ,  
որ դու ինձանից մեծ ընդունելութիւն  
գտած ես քո խոչեմութեամբ։

Հետեւեալ օրն Պուղին երբ ողջամբ,  
վկայականով և ընծաներով կ'վերադառ-  
նայ, Մելիքն իւր խօստացածները շտար:

134.

Պուղին Մելիքից 35 թիւման դոամ  
փոխ առաւ։ Քանի որ Մելիքն դրամը  
կպահանջէր, Պուղին կը պատասխանէր։

— Մելիք, թա որ գինիս ՞ անլու  
օշաման խանին տանը մին գիշեր զո-  
նաղ դեռնաս, սաղ սալամաթ գեաս,  
բենուն հենգ թիւման փուլ էլ կը տամ  
քեզ, իրեք ձեռք էլ շոր։

135.



Մի սկզբունքով անհաստատ, հաս-  
տատամութեամբ թոյլ և բնաւորու-  
թեամբ փոփոխուող մարդ հառարակու-  
թեան մէջ կը ճռոմաքանէր, որին  
Պուղին կը պատասխանէ։

— Մակիչ (Մկրտիչ), Մելիքին կշտին  
աղուես ըմ տեսալ քեզ, խանին կշտին  
կատու, եասաւուլի կշտի մոկնը, թորքի  
կշտի ըլքապատրակ, կնկանգ կշտին ապ-

լան, իլլիկին մաջ ղափլան։ Դիւ կուր-  
կու տանող ջղացի մնան մեծ մեծ խօսող  
ազգասէրներանը, դործով խօսող ազգա-  
սէրներան չըս։ տական, ո լիսան թռիսրիլ  
մի՞նչդր մզմուն ո ու մաս ու առաջ  
այսու ո ու այսու ո ու այսու ու այսու ու այսու

136.

**Մելիքի ազգականից մին,** որ յաճա-  
խակի կերթար, Պարսից Շահերին կը  
մատներ հայ Մելիքները և Նարաբաղի  
հայ ժողովուրդը, կը վրդովէր Մելիք-  
ների միմեանց հետ ունեցած սերտ  
յարաբերութիւնները և կը քանդէր  
նոցա սիրոյ կապերը ճարտար խարդա-  
խութեամբ, ամեն տեղ կը սլարծենար  
իբրև մելիքազուն։ Պուղին մի օր կասէ-  
Ք ։ Օ իւմշիա աղայ, մինակ հայերը  
չըն գիտաս, որ գիւ միլիքի տղայ ըս,  
Շահերն էլ ըն գիտաս, խաներն էլ  
կիւրծիներն էլ։ Ամմայ սուտանսան էլ  
Ըստուծու հրեշտակն ար, Յուղան էլ  
Քրիստոսի շակիրտն ար, Աշառկը, Մե-

Հրուժանն էլ չայոց իշխաններն ին,  
Առւրմակ էրէցն էլ չայոց քչանան ար:  
Նիստու որ քո հօր ընումին, պատուին,  
Փառքին լայլզ գործ չըս գուրծիս, քո  
պարծենալդ Մելիքին ընունաւ՝ ցխոտ  
ա ընես, եղդտուտիս ընտրանց անումբր  
պատիւը, քեզ էլ խըյտուրկիս Հայոց  
Ըզգի մէջ:

137.

Մի երախայ լալազին թախանձանօք  
շատ անդամ կը խնդրէր իւր հօրից, որ  
իրեն ուսում և կըթութիւն տայ վար-  
ժապետաց ձեռքով, հայրն միշտ այս  
խօսքն կը կրկնէր.

— Որդիս, վթագետին տլացուք փու-  
լը քերզ մըհար շորի կը տամ, քերզ  
մըհար ձի կառնիմ, շահաւ կը տամ,  
կը շըտանայ. Տիպու որ մծանաս, հա-  
րուստ կ'ինիս, լաւ կ'ապրիս: Վթագետին  
տուած փուլը կորած ա:

Պուղին, այս խօսակցութեան հան-  
դիպելով, կ'ասէ.

—Ուհան (Յովչաննէս), տղադ քելզանայ խելունք ա խուսէս ուզիս ա կարդի, գիտոթիւն սվերի, խելքաւ հարուտ ինի, պատուաւ հարուստ ինի։ Շատ մարդիկ կան, որ իւրանց գտէտ, նաշի տղոց մըհար փուլ ըն թուղես, ապրանք ըն թուղես, միւլք ըն թուղես։ ամմայ հիպու որ հարերը մռնիս ըն, անխելք որդիքը աման հրատոթիւն փուչցնես ըն, էլլըհայ իւրանք խելքով աղքատ մնաս պատով անպատիւ մնաս, փուլայ, տանայ, տեղայ, միւլքայ, զըրկուիս։ Ամմայ հիպու որ հարերը փուլ ըն խրճիս, իւրանց տղոց ուսում, գիտոթիւն սվրցնիս, մարդ շենիս, իսկի փուլ էլ չըն թուղիս, էլլըհայ ընտրանք իւրեանց մըհար լաւ գործ ըն ճրիս, փուլ տտիս, անում, փառք, պատիւ ձեռք քցիս, մարդի ջէարը ընկնիս։ Ուհան, մարդը, որ ընբառնի մնան մծանայ, ընբառնայ պէթար կ'ինի։ մարդը մարդ շենողը ուսումն ա, խրատն (գաստիարակութիւն) ա։ Թա որ տղիդ մըհար ա-

ուանց ուսումի ձի առնիս, էն ժմանակ  
իրեք ջորիդ կ'ինի, մին ձի:

Ուշանն այնչափ ժլատ մարդ էր,  
մինչև անդամ այս խօսքերն ընդունեց  
ինչպէս գայլի գլխի կարդացուած շա-  
րական:



138.

Մի աշակերտ իւր հօր և իւր վար-  
ժապետի հետ ներկայացաւ Պուղուն և  
ասաց.

—Պուղի ապեր, իմ հար ինձ զոռաւ  
վրժատուն ա դրկիս, հիպու որ գիս չըմ,  
մին լաւ տլամես ա, ընտեհար ինձ թը-  
կելաւ չուրու վրժատուն տնես: Ա վրժա-  
պետն էլ աման ըռւտհանայ բերանս  
բենբակ ա քցիս, շոտըշոռտու ընել տաս:  
Ա այլ եկալ ա իմ գլխիս, որ իւրկիւ-  
նան կերած հացաս մին առի պիծի պա-  
տառ ըրեւաց բմբակին երրայ, Փալախ-

կան \*) ոններս ա քցիս, տրութակ ընես, տւարի մընան չիւնի ճպատաւ բռնշցնես: Օշ ու մետքս էլ գիրին երթայ չինիս: օշ ֆալախային երթայ ա ինիս, մետքս էլ վրժակետին ձեռքումը բռնած ճպատին, կամքս էլ թակին, կրես չըմ թակարդալ, գիրիլ սվերիմ: Ատրայ մըհար էլ վիսես ըմ թա վրժատանը դռնաւը նիմտնիմ: Ինձ ըզատի Պուղի ապեր, դիւ ինիս էն Վատուծը:

Հայրն կ'ասէր.

— Պուղի, աման օր տղաս չուրու վրժատուն ըմ զրկես, չիւգիս դիւս ա գեաս: Վաման օր մեր տան մին ցամաք հրաանիթ ա ինիս: Հիալու որ տղաս վրժատուն չի գիս, թկես ըմ ինքը մին զոլան ա լաց ինիս, մարը մին զոլան: Տղաս սուտունին ձին եր ա ինիս, վրժատուն չի գինաս: Տոնս ոչ հրմննքատոն ա, ոչ էլ սգատոն:

---

(\*) Ֆալախան չին վարժապետաց պատժական գործին էր, որով թշուառ աշակերտաց ոտքերն ամրապնդելով կը ճմլուէին, ծեծելու համար:

Վարժապետն կասէր.  
— Չուրու մունթին երսայ տանրչենդ  
ֆալախայ չի կոտրիս, իրեքհարիւր ճպատ,  
շակիրտը մարդ չի դեռնալ իմ վրժա-  
պետը ինձ ինտի ասվոցքալ: Իմ վրժա-  
պետս ինձ երսայ բեսուն ֆալախայ ա-  
կուտրատալ, Հղեր էլ թալղի ճպատ:  
Էստրայ մըհար լըհայ որ թկիս ըմ, դասը  
լաւ ա ըսես. լըհայ որ թկիս չըմ, դասը  
լաւ շըսես:

Պուղին երեքին ևս կը պատասխանէ.  
— Վրժապետ, ըստրանայ դէնը էլ  
իսկի թակիս ոչ ֆալախան էլ էրի,  
ճպատներն էլ չեւն որ թակը եզանը,  
գիւմաշին, ձիուն, էշին, ջորուն կը տան.  
մարդին աման բան խօսքաւ կ'ինի, ըսե-  
լաւ կինի: Մին տղայ վրժատուն գինա-  
լիս տօնած ա, որ մին էծ տնիս ըն մոր-  
թին, զսապին չետան գիս չի: Տղան  
ըսես ա. «այ էծ, խէ՞ շըս ճելլի գիս,  
քեզ մուրթելու ըն տնես, կրդելու չըն  
տնես: Դիւ լաւ ա որ մին սհաթումը  
կը մորթուիս, կը պրծնիս. մեր վրժա-  
պետը մեղ մին տէօնիւմ ոչ մուրթիս ա

որ ինքն էլ պրծնի մունք էլ ոչ էլ սաղ  
ա թուղիս: Ըներանկ քեզ, այ էծ մին  
սհաման տինժացած կ'ինիս: Ալշենկ,  
վրժապետ, էլ իսկի թակել չըս մուն-  
թերդ, որ օրախ օրախ գեան, կարգին:  
Կատ թկելաւ շակիրտը տասսը տրնու-  
մը էրկու բեն կը սվերի, ֆալախայ, մին  
էլ ճպատ: Թա որ անջուկ օնիս, էս  
չանքը պոլ ա քեզ: Դիւ էլ սևի, էլ  
տղիդ թակիս ոչ պրտական մնաս, թա որ  
էլ տղիդ երբայ ձեռք որբերիս: Դիւ էլ  
պալան կծիմ (սիրեմ քեզ) աման ըռւտ-  
հանայ եր կը կենաս, օրախ օրախ վրժա-  
տուն կը գինիս. թա որ վրժապետը մին էլ  
քեզ թակիւ ինձ կ'ասիս, ես ընտրայ  
տիւանը կանիմ:

Ա արժապետն՝ ոչ եթէ ներքին հա-  
մոզմունքից, այլ Պուղու երկիւղից վար-  
ժարանից հեռացուց պատժական գոր-  
ծին և ճիպոտները. իսկ երախան ամեն  
օր կը յժախէր դպրոց:

Հետեւեալ տարում վարժապետն  
կրկին կը սարքէ ֆալախան և ճիպոտ-  
ները և առաջի դիրքով կըսկսի ծեծը:  
Պուղին Մելիքարանի բակում, նոյն ֆա-  
լախայով կ'ամրապնդէ վարժապետին  
ոտքերը և լաւ կը ծեծէ Մելիքի սպա-  
սաւորաց ձեռօք դպրոցումն գտնուած  
բոլոր ճիպոտներով: «Քանի անգամ որ  
վարժապետն, հարուածներին սաստկու-  
թենիցն ստիպուած, կաղաչէր Պուղուն  
վերջացնել ճիպոտի հարուածները, Պու-  
ղին կը պատասխանէր».

— «Չուրու վրժապետին երթայ տըս-  
նըշենգ ֆալախայ չի կոտրիս, իրեքհա-  
րիւր ճպատ, վրժապետը մարդ չի դեռ-  
նալ»: Հան տղայ, քո ոններիդ կաշին,  
որ գիւմաշի կաշուայ հաստ ա, իսկի դը-  
մնաս չըս, բա խրխորցը ոններին կաշին,  
որ փափուկ, բերակ ըլըկչոչի մորթու-  
մնան ա, հունց ըն դմացալ: Դէ գինի,  
ըստրանայ դէնը էլ դիւ ինիս դիւ-  
ըրախի թխիս ոչ:

Ա՞ի այրի միայնակ մնացած պառաւ գալով և գանգատուելով կ'առէ.

— Ե, Պուղ, քշոնքմ, ախը խալիսին ըրպաւ (սայլով) բռներաւ. փատը իրիս ա, իմ էրկու փատ օնիմ, իրիս չե. հունց անիմ:

— Ե, յան, կրակը ըդքտոթիւն չե սիրիս: Խալիսին փատը, որ իրիս ա, շատ ըն երբայ տաս. թա որ փատ օնիս, շատ երբայ տօ', թա որ օնիս ոչ, էն էրկու փատը ձղանիլ տօ', կ'երի:

Ա՞ի երիտասարդ կը փափակէր վարդապետ լինել, ոչ եթէ ներքին համոզմամբ, այլ պարսից ասպատակութիւններից ազատուելու համար: Ու նախապատիւ կը համարէր նախ Պուղուն խորհուրդ հարցնել և ապա վարդապետ լինիլ: Ե, յս պատճառաւ կը հարցնէ.

Պուղիապեր, քեր, մատաղ, ու-  
զիսըմ, վրդապետ գեռնամ, չի՞նչ քո  
ըսետ: այս այլունն ու այլէ այլունն որ  
զնո՞ւ Առաքի, դիւ ըսդիտաս քո խել-  
քը, քո կրզոթիւնը, քո գիտոթիւնը,  
քո չմըլոթիւնը, ես չի՞նչ պատճառ-  
գեռնամ քեզ:

— Եւթայ ինձ մին բեն ատի:

— Դէ չի՞նչ ասիմ, դիւ խելքի հսած  
ըս, չարն ու բարին գիտաս ըս, օգուտո-  
ու վնասգ ճնանչալ ըս: Արդպտու-  
թիւնը սրվզոթիւն ասիլ ա (զօրակա-  
նոթիւն): պէտում ա մարմնուգ նըշետ  
կուե անիտ, ստունին նըշետ կուե անիտ,  
ըշխարհքի նըշետ կուե անիտ, գժար ա-  
էդ գործը: Ինտի ա ըթւաս, որ դիւ սրտ-  
մնայ ըս իլալչէ թա ըշխարհքաս, (այլ)  
թուրքերան: Ատայ, դիւ որ կրես չըս  
թամինտիւշմանի նըշետ կովիս, եախնիս  
(յաղթես), իրեք տիւշմանի հետ հունց  
ըս կուերնլական, հունց ըս սաղմա-  
մաթ պրծնլական էն իրեքին ձեռքան:  
Աին տիւշմանին եախնիյը հեշտ ա, (չի՞նչ  
իրեք տիւշմանի: Թիւանկդ եղի, դիւլ

լըպարութը շտըցրու, աղըմքդոթիւնդ  
ըշխարհքի նշանց տօ': Լաւ զըչչու-  
զութիւնաւ շէնումս մեռնիս, լաւ անում  
եր անիս, Տիրու վիելտ փախչիս, վանք  
մտնիս, կոտր անում թողիս: Ըրբու-  
թիւնը շիներքումը իստիլաւ չըն ծիես,  
վնքերումը պիթմանաւ. աման տեղ կա-  
րող ըս Տիւգիդ գտենալ: Մարդը՝ որ  
միրտուիս ա, էն օրան սկսած սար-  
վագ\*) գրուիս Քրիստոսին, հու որ շէ-  
նումը կրես չե սրվզոթիւն անի, վան-  
քում իսկի չե կարալ:

Եյս խօսքերով երիտասարդն յետ կը  
կենայ իւր մտադրութիւնից և կ'արիա-  
նայ դիւցազնական եռանդով:

141.

Եռւշի քաղաքի Պարսից բոլոր կար-  
դացողներն հաւաքուած էին իպրահիմ

\*) Սարվագ պարսկական բառ է եւ զօրք կը  
նշանակէ:

Խանի մօտ, որոնք Պուղու խելացիութեան վերայ գմայլած՝ կը ջանային համոզել և թրքացնել: Կարդացողների գրւխաւորն կ'ասէ.

—Պուղի, ափառա որ դու հայ եա. այդ գեղեցկութիւնն, այդ շնորհալի բնաւորութիւնն, այդ բարձր հանձարն, այդ լուսաւորեալ գաղափարն, վսեմ մի տքն, մշտապատրաստ սրախօսութիւնն աւելի մահմետականի կը վայելէին քան թէ քրիստոնէի: Ճատ լաւ կանես, եթէ թուրքանաս. ամենքս քեզ հարիւրական թիւման փող կը տանք և մի մի ձեռքը պատուական հագուստ. խանն ևս քեզ պարգևներ, ընծայներ, կալուածներ, տուն, տան կարտսիներ, հազուագիւտ նժոյգներ, սպասաւորներ նուիրելուց յետոյ, իւր երկրորդն կ'անէ, ապագայում աղդդ, որդիքդ, թոռներդ խանզատայ կը լինին և դու երջանիկ կեանք կը վարես: Ա երջապէս փոխանակ մի ցած հայ մելիքի ծառայլինելու, Ա արաբաղիս թագաւորին երկրորդն կը լինիս և եթէ հաճիս, ամբողջ Ա արաբաղի Մելիքու-

թիւնը ևս խանն պատրաստ է քեզտալ  
միայն թէ թլիատուիս և թուրքանամա-  
կրօնը փոխելով մարդու կատար-  
եալ մարդ չ'ինիր. այլ սիրութ փոխելով:  
Քրիստոնէութիւնից կրօնափոխ եղածն  
ձեզ համար ոչ թուրքութիւն կ'անէ, ոչ  
մահմետականութիւն, ոչ կռապաշտու-  
թիւն և ոչ ասորիութիւն: Ենաղնիւ,  
բնաւասէր, ծոյլ և պորտաբոյժ անձինքն  
կրօնափոխ կը լինին միայն: Վարդոց  
մարմիններից մի կառը մօրթ կտրելով  
և նետելով մարդ չ'արդարանար, այլ  
սրտի թլիատութեամբ և առաքինի  
գործքով: Բոլոր թլիատուածներն գոզ  
և աւազակ են, զորս մեր աչօք միշտ  
տեսած ենք և կը տեսնենք ամեն օր:  
— Պուղիւ կ'առէ խանն, եթէ մեր  
կրօնը ընդունիս, ազջեկս ևս քեզ կնաւու-  
թեան կը տամ Պաղու խոստացած  
ամբողջ նուելների հետ: Ա անզի  
խան, եթէ էդ անեմ: թէ Քրիս-  
տոսի արքայութենից կը զրկուիմ թէ  
թէ Առուջեմատի դրախտից:

վա ամիս ամ հայութ 142. Եղ պահապահութ կ  
նոց տախուն Ս այ (« ձբարարագը » պիտի

Երբ Պուղին Ըւետարանոց կերթար,  
Ծուշւայ Պարսիկներն արդէն զաթիլը  
կը կտրէին, այն Է իւրեանց գլուխները  
թրով, երկսայրով և մեծ դանակով կը  
կոտորէին և մի հայ իբրև եղիդ իւրեանց  
մեջ մանած ելով։

— Ըստայ, Պուղի, Դ լումը (Ծուշիում) Հինչ տեսեր։

— Մելիք, մինակ էս տեսէ. թոր-  
քերը տարենը մին պտարագ ըն ընես,  
ին էլ ժմարարը հայ ա ինիօ։

143.

— Ե Պուղ, ախր ըսօր իրեք մարդ  
եկի՞ն ինձ տանելու, ըստրանցանայ մի-  
նը ասից. « թաղլթեցէ \* ) ըմ, Ստմակուլայ  
ըմ գեաս ». մինը ասից. « Դ լըցէ ըմ,

\* ) Թաղլար մեծ եւ հայաբնակ գիւղէ Վա-  
րանգում

Ըրպստանայ ըմ գեաս»։ Էն մինն էլ  
ասից. «Կողպտեցէ \* ) ըմ; Մսկովայ ըմ  
գեաս»։

—Մելեք, Տի՞նչու մըհար ըս մաթ  
մնացալ ընտրանց Ստամպուլ Ըրպս-  
տան, Մսկով գինալ, գեալին եըրայ:  
Ըշխարհքիս աման ընկիւններում էլ  
Վըրաղցէ կայ: Վըրաղի ժղովուրդը  
զրպէօթիւն շատ ա սիրիս, իւրանց եր-  
կիրը թողած գիս ըն զրպէօթիւն, տա-  
նայ, տեղայ, կնկանայ, խոխայ, բրխայ,  
բրկամայ հռնաս ըն, զարիպ եըրկիրնե-  
րում ըպրես. տուռնի, ձըճռնակի, տոյ-  
տաղի մնան ծովաւ, չորաւ անց կնաս:  
Ես զուշերը էլլըհայ իւրանց վեաթ անը  
մուռնաս շըն, ամառնը գեաս ըն, ձմեռ-  
նը գիս, ամմայ Վըրաղցէք շատ տէօնիւմ  
իւրանց հայրական, մայրական, պապա-  
կան համուզ վէաթանը մուռնաս ըն, էլ  
գինեցած տեղան ետ չըն դռնաս: Հնդա-  
տան մին ձմերուկ ըն կտրալ մաջան մին

\* ) Կուստպատ նոյնպէս հայաբնակ գիւղէ Խա-  
շենում:

Վրբաղցի առ դիւս պրծալը ընտեղ  
տոը կացալ:

144.

Մի քաղաքական խնդրում, զոր ժա-  
մանակի ազգակուլ ձգտումներն քերած  
էին, Մելիքը իւր գոյութիւնը պահպա-  
նելու համար խիստ մխասակար դիրք կը  
բռնէ: Պուղին մօտալուտ վտանգը սուր  
չեռատեսութեամբ նշմարելով կ'ազդա-  
րարէ ասելով.

— Մելիք, դիւ մինակ քո մլքքո-  
թիւնը պհպանելու երօայ ըս մոծես, Հայոց  
Եզրը պհպանելու երօայ իսկի մոծես չըս:

145.

Մելիքն, չը գիտեմ ի՞նչ պատճառաւ  
սաստիկ քարկանալով, 15 Հայ մարդոց  
քիթերը տակից կտրել կը տայ: Քիթն  
կտրուածներից մին էր Աւետարանոցի

Ճիթ ահաննառիւ կինք գալով և լարով  
Պուղուն կը հարցնէ.

— Ա Պուղ, քել մատաղ, ուզիս ըմ,  
մարդիս քեթը տանիմ, ճննչիս չըմ. ըս-  
տեղ տսնը նոգ քեթ կայ, գիտաս չըմ  
թա ո՞րն ա իմ մարդինը. մին եկ նը-  
շանց տօ:

— Ե պէլ քնուծահար, դիւր որ քսան  
տարի մարդիդ նըհետ գիշեր, ցիրեկ ա-  
պրալ ըս, մարդիդ քեթը ճըննչիս չըս,  
ես, որ տարանը մին յետ (մի անգամ)  
ըմ տեսալ հօնց ճնանչիմ: Դէ քթե-  
րը երկար, մին մին ոտ կալ, որան ձր-  
թաւոտ գեայ, քո մարդինն ա, Երկար,  
յղէ իւ:

146.

Մելիքն մի օր վայրիվերոյ բաներ կը  
խօսեր, Պուղին տեսնելով՝ որ այնչափ  
անօգուտ էին այն խօսքերն, մինչեւ ան-  
գամ իբրև անախտան աղբ աղբիւս թա-  
փելու արժանի. կ'երթայ, աղբանոցի

կողովը կառնու և կը վերադառնայ;  
Քանի բառ, զոր Մելիքն կը խօսէր  
Պուղին շուտ շուտ բերանի մծտից հաւա-  
քելով կողովի մէջ կը լցնէր:

— Ատայ, Պուղի, էդ հինչ ըս ընես:

— Մելիք, խօսքերդ էնչանք լաւ ին,  
որ հւըքեցէ, Ճուարանը լցէ, տնես ըմ;  
ըլքըհարն ածիմ:

Յետոյ կողովի տակն նստելով, որ-  
պէս թէ բաւական ձանը էր և անկարող  
էր գիւրաւ վեր կենալ բեռի տակից, կը  
կոչէ. եա: Ա. Կրապետ, նա ԱՌՈՒՇՈՒ սուլ-  
թան Ա. Վանէս (Յովհաննէս) դիւ մին  
զուաթ տառ ինձ, ասելով կը տանէ և  
աղբիւսի վերայ մի փայտով կողովը  
ծեծելով կը մաքրէ. որպէս զի միջում  
խօսք չը մնայ:

Ա Երադարձին Մելիքն Պուղուն շատ  
կը հայհոյէ. վերջինս կասէ.

— Մելիք, ես քշրհանայ իրես լընա-

լիս ըմ քեզ ուշունց տուալ, սրչանք  
կրես ըս ուշունց տօ:

148.

Նոյն օրն ս. Խջմիածնի միաբան-  
ներից մին նուիրակ գալով Մելիքին  
Հիւր կը լինի: Այս ուսեալ և բարի վար-  
դապետն քանի կը խօսի, Պուղին խօս-  
քերը հաւաքելով գեղահատինման կը կմէ.

— Պըլը-Պուղի, Տի՞նչ ընես:

— Մելիք, Հայրը սուրբին ասած խօս-  
քերը ալմաս, մէրճան, լալ ու ճաւա-  
հեր ա, Տըլքես ըմ, սրտումն ամբար ը-  
նես, սով տարին հաճախ կը գեայ  
(պէտք կը լինի):

149.

Ո՞ի մարդ չափազանց հայհոյիչ էր,  
զոր Մելիքն շատ ծեծել տուած էր այլ  
ևս չայհոյելու, սակայն չէր կարողացած  
այդ մոլութիւնը հեռացնել նրանից: Մի

անգամ ևս երկարատեւ հայհոյելու մի-  
ջոցին Պուղին վազեց, տանից մի դա-  
տարկ չուալ առաւ, բերաւ, չուալին բե-  
րանը բացաւ, իբր թէ բոլոր հայհոյու-  
թիւնները շուալի մէջ ամփոփեց, բերա-  
նը ամուր կապեց և տանելով հայհոյչի  
հօր գերեզմանաքարը շրջեց՝ չուալը ամե-  
նայն զգուշութեամբ թափ տուաւ գե-  
րեզմանի վերայ, դարձեալ քարը իւր  
տեղն դրաւ։ Հայհոյին այս տեսնելով  
այլ ևս բնաւ չէր հայհոյէր։

150.

Պարսկաստանից Ա'Ելիքի հիւր եկած  
Շահզատի որդին կը հարցնէ.  
—Պուղի, Հայերն ինչի՞ համար ուղ-  
տի միսը չեն ուտեր։  
—Շահզատայ, Թառբքերն ինչի՞ հա-  
մար խոզի միսը չեն ուտէր։  
—Ուղտն Հաճ կերթայ, Մէգգէ  
կերթայ, կը գայ, այն պատճառաւ ուղ-  
տի միսն սուրբ է ուտելու համար. խո-

դըն ոչ մի տեղ չի գնար, այն այտատձու-  
ռաւ միտն պիղծ է: Իսկ միքանիք այսու  
հայ աշղատայ, Առուչէմետին ոռոք  
գերեզմանն ավկայ է: Եթէ Խոհն թող  
նելու լինիս, ոչ եթէ մինչև Մեղքէ, այ  
մինչև Ամրիկայ կ'երթայ և կը գայ:  
Ուրեմն խողն աւելի սուրբէ ուտելու, քան  
թէ ուղան: Դա ոչ պատճենուց առ պատ  
ճել պատճենու առջին ժամանակ  
կամ առջեւ ու առջեւ առջ օրեա  
առջու պատճեն ու առջ առջ առջ առջ  
151.

— Պուղի, Հայերն ի՞նչ փաստով  
մեր Առուչէմետի մարդարէութիւնը չեն  
ընդունիր և Քրիստոսը Սստուած կը  
դաւանեն:

— Այն փաստով որ ձեր Առարդարէն  
իւր հաւատը թրով, սրով և հիւնի չոմա-  
ղով տարածեց, իսկ Քրիստոս խոնար-  
հաբար քարոզելով՝ և ռանց մարդոց խղ-  
ճի ազատութիւնը բռնաբարելու: Առ-  
նաւանդ թէ ձեր Առարդարէի վկայու-  
թեամբ Քրիստոս արդէն յարութիւն  
առնելով երկինքը համբարձած է: Իսկ

ձեր Մարգարէն, ըստ որում մարդ էր  
միայն, մեռնելուց վերջը թաղուած է  
Մէզգէռմ: Եպա ուրեմն ձեր ո. Մար-  
գարէն իբրև մարդ Քրիստոսի դատաս-  
տանին տակն է: Տեսնենք, եթէ դա-  
տաստանի օրում Ձեր Մարգարէն ար-  
գարացաւ, Հայերն էլ, բոլոր Քրիստո-  
նեացք էլ կընդունին իբրև մարգարէ:

ցմայի վրայ պահ ու այս ամսայ-  
նու պահանջ նաև 152.ոց առաջն միջնորդ

— Պուղի, այսչափ զօրաւոր փաստը,  
զոր գու փիլխսոփայօրէն մէջ բերիր, ոչ  
թէ ես, այլ և մեր բոլոր կարդացող-  
ներն անգամ անկարող են ջրել և հեր-  
քել: Ուրեմն ովք քո անունը խենդ զը-  
րած է:

— Ինձնից չափար անգամ աւելի  
խենդ մարդ մի, որպէս զի իւր խեն-  
դութիւնները՝ իմ խենդ անուան տակ  
սքողէ:

Մէլիքն շառագունեց և զայն թա-  
քուցանելու պատրուակաւ սատոիկ ծի-  
ծաղեց:

Մելիքը շատ և շատ կը ցաւեր որ  
իւր խենդ անուանած անձը մեծ  
բաներ կ'խնդրէր Շահզատայից։ Պու-  
ղին Մելիքի անձնասիրութիւնը յանդի-  
մանելու նպատակաւ կ'ասէ.

— Շնազար ապեր, բա խելի ուր-  
խնաս չըս, որ Հայոց Ազգի խլունք-  
ներին ձեռքաւ քանդուած գործը, պլե-  
րին ձեռքաւ ա շինու իս։

Մելիքն սոյն խօսքերից սաստիկ վի-  
րաւորուելով, իւր սպասաւորները ներս  
կոչելով Տրամայեց Պուղուն քիթը ևս  
կտրել շուտով։ Պուղին անմիջապէս  
ասաց՝

— Այ գեատաներ, մին պատառ կա-  
ցէք. յետոյ խօսքը Մելիքին ուղելով պա-  
տասխանեց։

— Տրացու Շնազար, ինտի ա ըրւաս,

որ շատ կզնւիլադ ըչքերիդ առաջը  
փէարտայ ա քաշուալ (կրքիդ շափա-  
ղանցութիւնն չար նախանձու թանձը  
վարագուրաւ ծածկած է բանականու-  
թեանդ լոյսը), ճշմարտոթիւնը տանաս  
չըս: Ես համ օու անունդ ըմ բրձր-  
ցրալ համ Նզգնըմ փրտկալ, համ մը ըրբո-  
թիւնդ ըմ ըզատալ ըսլանին որխան:  
Ես քու աչքդ հանալ չըմ, քեզ լոթիւն  
ըմ ըրալ փսոթիւն չըմ ըրալ: Մը հենկ  
դիւ, որ իմ էրկու խօսքան նղնալաւ իմ  
քեթս կտրել ըս տաս, որ անմեղ ըմ,  
որ էսչանք քեզ լոթիւն ըմ ըրալ հունց  
իր պրծնական Վրբազի Հային ձեռ-  
քան, որ մէանք շրոթիւն ըս ըրալ որ  
հեսապ չօնի: Կտրելու, կտրելու քու  
քեթդ ա թա որ ես չ'ենի, չուրու մը-  
հենկ քու քեթդ էլին կտրալ Հայերը,  
ընջուկներդ էլ պոօշներդ էլ, լեզուդ էլ  
ոններդ էլ ձեռներդ էլ կՃիպդ էլ  
յագիդ էլ:

այ ովրազ որ պահու ոզ մու նաև  
ա բազու ոչ այինչ այ բանի զուն  
լու որբազ զօնզ բվառուաց բցէ մու նաև

155. Ապաստառը արք առաջ գույք կա-  
տակուց բժիշկ) յատազ և բանակ կի-  
զնել Սպասառորսներն գուրս ելան Ո՞Ելի-  
քարանից՝ օղեն վարունկ բերին Ո՞Ելի-  
քին: Երբ սա վարունկին վերայ աղ կը  
ցանէր ուտելու, Պուղին աղամանը առ-  
նելով շատ աղ ցանեց Ո՞Ելիքի անմաղ  
գլխին:

— Ե շան տղայ, էդ հի՞նչ ըս ընես,  
Էլլըհայ ալլացե՞ր:

— Ո՞Ելիք Պուղին քերզմատաղ խել-  
քըդ ընհամալ ա, աղաւ ըմ ընես որ  
համը տեղը գեայ:

156.

— Ե տայ, Պուղի, ես ինիմ էն Մա-  
քամ, ըսօր սերտս առի Ճիկ քրուքանդ  
ըթեր:

— Աղայ, քա իսկի ժաժան ճրդճրո-  
տած տոն չըս տեսալ որ քնդիս ըն  
նորը մինայ լաւ շինիս: Վու սերտդ էլ  
ժաժան ճրդճրոտուից ըսօր քանդուալ

ա, նորը մինայ շինի սերտդ էլ խելքդ  
էլ մետքդ էլ չիւգիդ էլ կամքդ էլ  
սըթթապտրհանդ էլ: Թռա որ ուշանտայ  
տալու բեն ինի ինձ ձեն տօ:

157.

—Ե, տայ Պուղի, Էն մեռած անծուզ  
ընողին կնկանը սուզը մին ասի, անկուզ  
օնիմ, սերտս մին պատառ բեցուի:

—«Աղջի, քրմատաղ, ըներակ ար Էն  
օրին, որ ծմական գեալիս ար՝ սէզնը,  
զկեռը, մըհատուրը ջուբորը լիկը. լըհայ  
որ բերում ար, խըխոցս ըռաջին որածում,  
հենց ար ինում լըհայ թռարուզու խոշ-  
կեապէար ինի:

«Աղջի, քը մատաղ լըհայ որ իւրկէօ-  
նանց գեալիս ար կացինը քամակը կո-  
խած, ցակատը առաջը կոխած, կեօտակ  
էշը ըռաջկին, շիւշայ շիւշայ ընծուզաւ  
բեռնած, յագին պուլուի պուլուի ընելաւ.

լըհայ որ բերում ար ընծղաբեռնը որո-  
նում, հենց ար ինում լըհայ պէազրկեանի  
թէանպէալէթ ինի:

ա քու ոսկի փրշակիդ մատաղ,  
ա քու ոսկի քրխընիդ մատաղ,  
ա քու ոսկի տրգկեաչիդ մատաղ,  
անծուղ կ'աներ, լըհայ ձրձոնակի

թևեր ինի:

Եղջի, բա՛, ինձ նմանին տէրը տագ  
կանի՛: \*)

---

\*) Հարկէ կը համարիմ այս սուգի միտքը  
պարզել, որպէս զի մեր հեռաւոր եւ սիրելի ըն-  
թերցողք կարդալու ժամանակ ձանձրութիւն  
չգգան, այլ իմաստը ըմբռնելով զգածուին:

Խաչենու գաւառի Աարկաժան գիւղում մի  
ածխագործ կը մեռնի, որի թշուառ կինը այս  
սուգը կ'եղերերգէ իւր շուրջն հաւաքուած լալ-  
կան կանանց մէջ դագաղի մօտ նստած: «Երանի՛  
այն օրին, յորում նա (ննջեցեալն) կը գար ան-  
տառից ջեքերը մրգեղէններով լի, երբ սյն պտուղ-  
ները երախայոցս առաջ կը թափէր, կարծէս թէ-  
քաւրիզից բերուած մրգեղէններ լինէին: Երբ երե-

“Եոյն վայրկենի մի զարդարուած, բայց ամենատղետ քահանայ և գիտուն վարժապետ Մելիքին այցելութեան կը դան: Երբ սոքա Վելիքարանից դուրս կ'ենեն, Վելիքն կը հարցնէ.

— Ես Շրտարայ տէրն ար, կրդելում հունց ա, Պուղի:

— Մելիք, քու օծեալ կարգը վկայինի, թա որ տանը հենգ ձիւկնը բռնող բերիս, չանկեալները սարքին, ես տէրին

կոյեան անտառից կը գար կացինը կռնակի կողմից գոտին անցուցած, ցտկատը առաջի կողմից երկար երկար ածուխով բեռնուած պոչատ էշն յագին. շարժելով իւր առաջին. երբ ածխարեռը կ'իջեցնէր, կարծես թէ յաճառականի թանկագին հակէր լինէին: Ոսկի արուեստիդ մատաղ (լինիմ ես), սուկի հանքիդ (ածխահորն) մատաղ, սուկի գործարանիդ մատաղ. այնպէս ածուխ կ'անէր, որ ծիծեռնակի թեւերի նման գոյնզգոյն կը փայլէին: Ապա ուրեմն քանի որ այսպիսի տէրս, այրս, մեռած է ի՞նչպէս կարող եմ լուել եւ չլալ»

փորը քցին, մին ամիս խռնրխառնի ա-  
սին, կարել շըն թա ըստրայ փորան այի-  
բին մին խաղը գտենան դիւս օնին:

159.

—Պուղի՛ էս վրժապետը հո՞նց ար  
կրգելում:

—Մելիք, շատ լաւ ա. ըստրայ գիտո-  
թիւնը հենց ա լըհայ Սւանայ ծովն ինի,  
թա որ մին տեղան պտառիս, Ծևան  
քաղաքը ջրողող ընելաւ կը կուրծանի.  
տակին մնացած խելքը հարիւր մունթի  
էլ հերիք կանի, քռասուն քչալի խելք  
էլ իւրան բեժին կը մնա:

Ա.Հա Դարաբաղի գաւառացու մի ազնիւ  
կնոջ պատկերն: Քանի՛ գոհ է իւր վիճակից  
ինչպէսի՛ ընտիր նըմանութիւններով կը գովա-  
րանէ իւր հանգուցեալ այրը: Իւր ածխագործ այրը  
ընտիր արուեստաւոր կանուանէ, ածխահորը՝  
ոսկեհանք, ածխաբեռը՝ մետաքսեայ կերպասահա-  
կեր եւ անտառի պարզ պտուղները իբրեւ թան-  
կագին մրգեղէն եւ մարդոյ մահը կըզգայ ինչպէս  
թագաւորի մահ:

Պուղին Շուշխում մի աստիճանաւոր  
կը տեսնէ լաւ զարդարուած, շքանշան-  
ները կախած կը ճեմէր. կ'ասէ՝

— Մելիք, իստինին ջերը հենց կ'ինի  
լըհայ կիւրկեաչ կատուի լպղտած աման  
ինի:

— Ե, տայ, իստինը շատ փուլի տէր  
կ'ինի, բա իսկի տսնան չըս շորերը հունց  
թէամիւղ, զաշէնկ ա:

— Մելիք, բու ազիզ արևը վկայ ինի,  
թա որ որսկան շուներդ ըստրայ ջու-  
րերը քցիս, զշղըրդը կոխիս, խալու գտիր,  
պոյնախ գտիր, սիպտակ գտի՞ր, դիւ  
թառլան զուշդ բեց թողիս, էլելչայ  
մին զարափուլ շըս գտնիլ:

Մի քահանայ այրուած սրտով Մելի-  
քին կը գանգատէր ասելով.

— Գեանջա գինացի մին գործաւ, էր:

կու ամիս մնացի, ըն տեղի տէրտէրները  
ինձ պատուելու համար մին պատարագ  
չի տուին, որ անեմ:

Ա՞լիքն խօսք կ'որոնէր պատասխա-  
նելու և յարմար խօսք չէր գտնէր: Պու-  
զին այս վարանումը նշմարելով յօդնու-  
թեան հասաւ և հարցուց քահանային.

— Ը, տէր, Շուշի քաղաքս եկող դա-  
րիպ տրէրին դիւք պատիւ ընեմ ըք, պը-  
տարագ ընելըք տաս:

— Ձէ, ա Պուզ:

— Դէ դիւք Շունց որ ուրիշներին  
ընես ըք, օրիններն էլ ձեզ ըն ընես: Էլ  
Շի՞նչ իրաւունք օնիս գէնդատ ընելու:

Ա՞լիքն իպրահիմ Խանի տունը  
դնալիս տեսաւ երկու մուրացկան, որոց  
մին հիւանդ ընկողմնած էր՝ իսկ միսն  
հիւանդին հարցըրուց:

— Բատի, մին բթրոկաւ (ալիւրով  
շինուած) կակուզ շորուա անիմ, կոտի՞ս:

— չա. իմ ջանս քերմատաղ կոտիմ:  
իմ պարկի ըլիւրան ըս ընլակա՞ն թա  
քու պարկի ըլիւրան:  
— Քու զարկի ըլիւրան:  
— Դէ՛ երբաս ծածկի՛, ծածկի՛, որ  
սատկիմ:

Պուղին բարկացած ասաց հիւանդին.  
— Ե, հիլիւոր, դիւ էդ ըս մոնիս. Էդ  
ըլիւրին փուլ չըս տուալ բա՛ դիւ, որ  
քու ըլիւրին զիմիշ չըս ընես, մեռնիս,  
էդ ալիւրը հո՞ւ ա ուտըլական: Թա որ  
քու հընկերդ հիւանդինար, իւրան պար-  
կումը ալիւր չ'ինար, քեզ ըղաչանք անար  
թա քու ըլիւրան մին շորուա ըրա,  
օտիմ, սոված սպնլակա՞ն իր: Յետոյ խօս-  
քը ընկերին ուղղելով կ'ասէ.

— Դիւ իւրան պարկան շորուա շինի,  
իւրան տօ՛. կօտի, կօտի. օտիլ չե, լիւ  
կաց սոված մեռնի, ինքն էլ պրծնի,  
դիւ էլ:

163.

Երբ Խանի տունն կը մտնէին, Խանի  
զուարձաբանն թուրք կարդացողներով  
դիմաւորեց Մելիքին: «Նոյն միջոցին շու-  
ներն մի ոչխարի ետեւից ընկած կը  
տանջէին զայն: Խանի զուարձաբանն  
կ'ասէ ծիծաղ դիմօք...»

164.

—Պուղե, Մելիքը շատ կը սիրե՞ս, թէ  
իւր կինը:

—Խան, մարդ կայ, որ Խանը շատ  
կը սիրէ. մարդ կայ, որ Խանին կինը.

165.

—Իմ զուարձաբանն ի՞նչպէս է, կը  
հաւանե՞ս:

—Չեր անուան և համբաւին արժա-  
նաւոր է. փոքր ինչ առաջ իւր շնորհքը  
ցոյց տուաւ ձեզ ոչխարի և շուների սրա-

խօսութեամբ։ Կը նմանի նոր սովորող  
վարսավերայի (սափրիչ) աշակերտի, որ  
մազերը ածիլելու ժամանակ յաճախորդի  
գլխին 48 տեղեց կտրելով՝ բամբակ կը  
փակցնէ։

166.

—Պուղի, քեզ տամ, տար, երկու  
տարի քեզ մօտ պահելով վարպետ զուար-  
ճաբան շինիր և ինձ բեր։

—Խան, մի արջի ձագ տուր, երեք  
աւուր մէջ կարդալ սովորացնեմ և բե-  
րեմ, այնպէս որ դուք ինձնից աւելի  
հաւանէք. իսկ քո զուարճաբանն քառա-  
սուն տարի ևս պահելու լինիմ, դարձեալ  
ոչ ինչ չեմ կարող ուսուցանել և ձեզ  
մօտ ամօթալի կը մնամ։

167.

Խանը, որ անչ'նարին կը կարծէ Պու-  
ղու խոստման կատարելը, Վելեքի զուար-

Ճարսնը պատժելու նպատակաւ իսկոյն  
Հրամայեց արջի ճագը յանձնել նման  
Պուղին զայն առնելով տարաւ, մի օր  
մինչեւ երեկոյ չամիչ կերցուց հետևեալ  
առաւօտ մի թուրքերէն քերական գնեց,  
ամեն թերթի մէջ երկու երկու չամիչ  
դրաւ, թղթերը դարձնելով չամիչները  
կերցուց և մինչեւ երեկոյ այսպիսի կըթ-  
թութեամբ անցուց: Երբ տեսաւ որ  
գաղանն ընտելացաւ, մի անգամ գիրքը  
առանց չամչի դրաւ իւր աշակերտի ա-  
ռաջը, որ չամիչ չգտնելով սաստիկ բար-  
կացաւ ճագն և սկսաւ մըթմըթալով  
թղթատել ինքնին ոտի եղնգով ամբողջ  
քերականը: Երրորդ օրն միանգամ ևս  
չամիչ գնելով, ճագն կերաւ. ապա տա-  
նելով խանիններկայացուց: Չագն ետեի  
եռկու ոտից վերայ կանգնելով, առաջի  
ոտներից մինով քերականը բռնեց, և  
միւսով անշամիչ քերականի թղթերը  
դարձնելով շարունակ մըթմըթաց:  
Պուղին իւր աշակերտի թախթից բռնելով  
տարաւ խանի ձեռքը համբուրել տուաւ:  
Խանն չամակրական ճայնով կոչեց.

— կեցցէ՛ Պուղի, կեցցէ՛ Պուղին։  
Ոյն գովեստը կրկնեցին ներկայ եղող  
թուրք կարթացողներն, խաներն, բէ-  
կերն բաց ի Խանի զուարձաբան Խուր-  
շուտից։

Խանն մի արժանաւոր լնծայօվ պա-  
տուեց զՊուղին։

168.

Մելիքն Պուղու հետ Ամարասու  
գաշտը դնացած էր ճէյրան օրսալու,  
յօդնութենից և ծարաւութենից խստ  
նեղուելով հարցուց։

— Պուղի, ըստեղերք իսկի ջուր կը  
գտնուի՞։

— Մելիք, էս մօտ տեղում մին ջը-  
րաւոր կայ։

Երբ Մելիքն ջուրը խմեց, ջրչորի  
մէջ թքեց ասելով։

— Ծախւէ, մաջեղ ջիւրը չուրանար,  
առի լաւ կ'ինար։

— Մելիք, ասաց Պուղին, խէ՛ թքե-

ցեր էս ջրւորին մաջին. աշխարհը ա, մին  
օր էլլոհա հաճէաթ կը կեայ:

Երկու տարի վերջը դարձեալ սաս-  
տիկ ծարաւած լինելով նոյն ջրից ախոր-  
ժանօք խմեց և կոչեց.

— Ատայ, Պուղի, ամմայ հի՞նչ հա-  
մուղ ջիւր ա, հի՞նչ ցորտ ջիւր ա. զօրմի  
ըստրայ ջրաւոր քնտողին հօրլ:

— Մելիքն ապրած կենայ, գիտաս ը՞ս  
էս որ ջրաւոր ա. էս էն ջրաւորն ա, որ  
մաջին թքեցեր:

Մելիքն իւր սխալմունքը զգալով  
բնաւ չիօսնց:

169.

Մի մարդ՝ ամեն Պուղին տեսած  
Ժամանակ, միշտ կ'առէր

— Ե՛լս Եդամ, ան Ադամ:

— Ե, Խաչի (Խաչատուր), Ադամը  
քեզ հի՞նչ աըրալ որ մշանէք ան Եդամ  
ըս ըսես:

— Պուղի, քեզ մատադ, դէ որ Ադամ

պտուղը կերած, խաբուած չ'ինար, մունք  
իստի չըչարմունք չ'ինք քաշիլ:

Պուղին մարդը տարաւ, լաւ հագուս-  
տներ հագցուց, իւր կնոջ հետ Մելիքի  
այգում դրաւ և այս պատուէրը տուաւ.

— Ես աման ծառ պարը կերէք, ծա-  
ղիկները քաղեցէք, վըլեցէք. ամմայ էս  
ոեխը ծածկած ղզանին մուտանաք ոչ  
զափաղը եր չ'օնիք. թա որ զափաղը  
եր օնիք, ձեզ դիւս ըմ ընլական, շորերդ  
հանիմ: Անկան էլ ասալ ըմ, ձեր օտիլը,  
խմիլը, գենալը բոլորն էլ տլական ա:  
Ես ա ըսես ըմ ձեզ. հինչ սհաթ որ  
զտղանին մուտացալ ըք, խռեկըմ տլա-  
կան ձեզ ձեր հին շորերաւը:

Հազիւ թէ Մելիքի դրախտանման  
այգում երեք օր կը մնայ այս մարդն,  
կինն սաստիկ կը նեղէ զինքը ասելով.

— Ե, մարդ, էն զազանը լիկը ոսկի  
պէտում ա ինի. վախիլ մի՛, եկ գինինք,  
դիւս օնինք հրուստանանք. հո՞ւ ա գիտա-  
կան էս զիշերին կէսումը: Դէ՛, երկաց,  
գինինք:

Ա երջապէս մարդն կնոջ հնազան-

դելով կ'երթան, կաթսայի փակը վեր  
առածին պէս մի մուկն դուս ելնելով  
կը փախչի. Արթուն պահապաններն  
տեսնելով կերթան և Պուղուն կը պատ-  
մեն. Պուղին մարդը կանչելով կասէ.

— Խաչի, զազանին ռեխը խէ՞ քեցեր.  
բա ես քերզ ըսեցէ՞ ոչ որ չ'բենաս:

— Պուղի, քեր մատաղ, կնեկս ինձ  
խաբից:

— Ըդամայ էլ իւրան Եւայ կնեկը  
խաբից: «Դէ շորերդ հանի՛, էլլըհայ քու  
քեօհնայ շորերդ գեց, գինի շակաւ փատ  
կրէ՛: Էլ ըստրանայ գէնը դիւ ինիս դիւ  
ասիս ոչ «ա՛խ Վդամ, ա՛խ Վդամ:»

Հնդկաստանից մի մարդ գալով Մե-  
լիքին հիւր եղաւ և այնչափ գովեց Հնդ-  
կաստանի քարեղէնների և ակնեղէն-  
ների չափազանց աժան լինելը մինչեւ  
անգամ Մելիքից 1000 թուման (1200 ո.)  
դրամ առաւ և Վետարանոցից հեռա-

Նալով խոստացաւ Հնդկաստան հասածին պէս, անմիջապէս զրկել ԱԵլիքին 1000 թումանին արժողութեամբ ադամանդ, յակինթ, զմրուխտ և ուրիշ թանկագին և պատուական ակունքներ:

ԱԵլիքն կը հրամայէ Պուղուն, որ գիւղե յիմար մարդոց անունները գրէ և ցուցակը իրեն ներկայացնէ: ԱԵլիք Շահնազարն երբ ցուցակը կըստանայ, կը տեսնէ որ իւր անունն ցուցակի սկզբի տողում գրուած, զայրացած կ'ասէ.

— Ե լակուտ, Պուղի, իմ անումն խէ՞ էս յիմարներին ջէարկիւմը գիրաւը, էն էլ առի թուղթին ճկատին:

— ԱԵլիք, ընտրայ մըհար որ քերզանայ առի յիմար մարդ չի կայ մեր շէնումը:

— Ե, տայ խէ՞:

— Ծնտրայ մըհար որ գիւ քու չի ճնանշած Հնդաստանցի մարդին հզեր թիւման փուլ տուէր:

— Ետայ պալքի զրկիս ա:

— ԱԵլիք, չիպու որ բերի, քու անումդ կը ջնջիմ: ընտրայ անումը կը գիւ-

թիմ: (Այս ինքննա քեզնից աւելի խենդ  
և յիմար պէտք է լինի, եթէ իւր կողոպ-  
տած դրամները ակնեղենների տալով  
յետ գոկէ. այդ յոյսը կտրիր):

171. †

Պուղու մեծ որդին, Երիտասարդա-  
կան բուռն եռանդէ մզուած, կերթայ  
մի բարձրադիր և ամուր քարայրի մէջ  
կը մտնէ Ճգնելու: Երբ տարած ուտե-  
լիքն բոլորովին կըսպառուին, կըսկսի  
կովերի հորթեր գողանալ և ուտել նոյն-  
պէս բացօթեայ տեղ վարուած խաշխաշ,  
բակլայ, սիսեռ և ծառոց պտուղներ:  
Մի օր կը յայտնուին սորա գողութիւն-  
ներն և բնակարանն: Պուղին գնալով  
քարայրի առաջ կը կանգնի և իւր որ-  
դու անունը տալով կը կոչէ.

— Եիտիս, ւիտիս (Աւետիս):

Կը պատասխանէ Եիտիսն քարայրի  
խորից ահարկու ճայնով և պատկառելի  
եղանակով.

— Ո՞վ ես դու, պիղծ հողեղէն, որ  
համարձակիս մերձենսալ ՚ի քարայրն իմ  
սուրբ ՚ի բաց հեռացիր այդի. ապա թէ  
ոչ, նետք Աստուծոյ և հրեղէն սուրբ  
հրեշտակաց Կորին ի վայր կործանես-  
ցեն զքեզ ի քթթել ական:

— Ե, շան տղայ, դիւ հի՞պ հրեղէն  
գեռէր. թա որ էրկու ամսումը մարդ  
հրեղէն գեռնար, ես մը հենկ աստուծ  
ի գեռալ: Հինչ քան ճգնարոթիւն ըթէր,  
պոլ ա. իրեսդ պարզ, վարձքդ կատար,  
ամէակդ Եըրուսաղամ, Հիզտիսպուզտի  
ճգնաւորին օրհնոթիւնը քերզ երրայ  
ինի: Դէ, որեկ ըտեղան, էլ Ըւտրնոցումը  
(Ըւետարանոց) տանայ (Հորթ) չըս թո-  
ղալ, խոզի կեօճի չըս թողալ բեկլայ,  
խաշիտշ չըս թողալ նոխուտ, հիւեռնը  
չըս թողալ լոխ էլ գիւղացալ ըս,  
կերալ. տէրերը աման օր Վլիքին արզ  
ըն ընես, գինգըտաւորները էնչանք շը-  
տացալ ըն, որ Վլքարանին դռնատակը  
մաշտալ ա:

Որդին կիջնի և հօրը հետ գլխակոր  
տուն կերթայ:

Այի մարդ Պուղոց թախանձագին  
կը խնդրէր, որ բարեկենդանի պատճա-  
ռաւ մի հնարք մտածէ Մելիքից մի  
նուէր ընդունելու, որպէս զի իւր որդի-  
քը, գոնէ, բարեկենդանին առանց կերա-  
կուրի շմնան։ Պուղին կ'ասէ՝

— Ետայ, Շաղար, շատ վախտ ա, որ  
շէնումն արջ չըն պարածալ, եկ քեզ արջ  
շինիմ, տանիմ, Մլիքին առաջը պարա-  
ծիմ, շատ զատ (բան) կը տայ։

— Դէ լաւ, Պուղի կը դեռնամ։

Սոյն մարդն մի քանի օրից յետոյ  
կերթայ զՊուղին Անելիքարանում կը  
գտնէ և բարձր ձայնով կ'ասէ։

— Ե, Պուղ, կնեկս ըսես ա, «ա մարդ։  
արջ մի՛ դեռնար, անումդ արջ կը մնայ,  
պախրայ (եղջերու) դեռ»։ Ալչենկ, քեզ  
մատաղ, Պուղի, պախրայ կը դեռնամ։

— Ե, սարսաղ քնու ծահար, էս ա մին  
շեքէթ ա, որ ես քեզդ մըհար արջի թէտ-  
տարիք ըմ տեսալ։ Ալչենկ հի՞նչ տե-  
ղան գտենամ ես քու պիսրըմորթին,

պօղերը, կճղակները, տմակը, կճիպը:

Մելիքն, որ այս խօսակցութիւնը լսած էր, հրամայեց Պուղուն, որ անմիջապէս նոյն մարդը արջ շնչած իւր մօտ բերէ: Պուղին այս հրամանը կատարելով այնշափ լաւ կը խաղցնէ նոյն արջանման մարդը, որով Մելիքն շատ զուարձանալով կը շնորհէ մի կարաս գինի, մի ոչխար, կէս չուալ բրինձ և բաւականին արդար իւղ:

173.

X  
Մի ծերունի մարդ հրաւիրուած էր Մելիքարան: Շարեկենդանի խնձոյքում երբ սա իւր կարողութիւնից աւելի կը խըմէր, Պուղին ասաց:

— Եպէր գինին ծերոց գաւազան ա: Խմի՛, քեր մատաղ, խմի՛, տեսնանք վերջը հո՞ւնց կը դեռնայ: Հեսապ խմիլը չի, հեսապ պահիլն ա:

«Օերունին խնձոյքից դուրս եկաւ և դէսուղէն ծռուելով դէպի իւր տունն

ուղղեցիւր գողդոջուն քայլերն և ծռուելով ընկաւ ջրաւազանի մէջ։ Պուղին գոչեց։

Ապեր, գինին ծերոց աւազան ա, լեղ տօ՛, քեր մատաղ, լեղ տօ, որ խելքը տեղը գեայ։

Երբ հանելով մի քարի վերայ կանգնեցրին, որ հագուստն ցամաքի, օգնողներն չ'կարողանալով երկար պահել քարին վերայնս տեցուցին արբածը։ Օռարձաբանն գոչեց։

— Ապեր, գինին ծերոց պալրզան ա. կկղի, որ մին պատառ տինչանաս։

Երբ արբեալն ործկալով սիրտը դարձուց, Պուղին գոչեց։

— Ապեր, գինին ծերոց վզվզան ա. շտրզունի տօ՛, քեր մատաղ, շտրզունի տօ՛, որ սիրտդ հնգստանայ . . . :

Մելիքն, առանց Պուղու դիմութեան, մի աղքատ կարծուած արբեցո-

զի սղորմութիւն կը տայ, որ տանելով  
և նրանով օղի կը դնէ և չափազանց  
խմելով կարբենայ, մի մարդոյ զլխին  
զարնելով կը ջախջախէ, միսին բազու-  
կը կը կոտրէ, մի այլ մարդոյ մատները  
և ձեռքի դաստակը կը փշտէ և վերջա-  
պէս իւր տունն համարելով իւր կնոջ գը-  
լուխը կը ճղէ: Բոլոր վիրաւորուածներն  
Մելիքարան կը դիմեն և կը գանգատին:

Երբ Պողին ստուգելով կ'իմանայ,  
որ եղեռնագործն այս բոլոր չարութիւն-  
ները գործած է շնորհիւ Անկարի տուած  
ողորմութեան, կ'ասէ.

—Աղայ, ըսօր մին պտարագ ըս ընել  
տուալ, մին պտարագ ըս ընել տուալ  
քա հօր հիւգիւն մըհար, որ չուրու դտա-  
տանի օրը ձեր օխտը պորտին, եօթն  
մասն ննջօցելոց բւական ա:

=Ա տայ ևս հի՞նչ չորթիւն ըմ  
ըսալ ողբմոթիւն ըմ տուալ բա ողբ-  
մոթիւն տալը մեղք ա:

— Ողբմոթիւն տալ էլ կայ, ողբմոթիւն տալ էլ: Ողբմոթիւնը հիպու որ լաւ տեղի տաս, վարձք ա. Հիպու որ ընարժան տեղի տաս, մեղք ա: Ողորմոթիւն տալու ժմանակ պէտումա մարդ զգուշանայ, ինտի ըղքատի տայ, որ ձեռքը ընկածը մինակ չ'ուտես, տնես ա խրան խխոցընըհետ ուտիս, ըրխոցը մըհար շոր ընես հացի տաս, պհպնես: Ինտի ըխքատի ողորմոթիւն տալ պէտք չի, որ ձեռքը ընկեած փուլը տնես ա ըրադի տաս, գինու տաս, լկլկուրես, հրբիս, կրտաղած գեազան դռնաս, անմեղ մարդի, կնկան, խոխի, ըրխի մեսը ուտիս, ուկեռը փշրիս, գտստընների մըհար գըլխըցւոթիւն սրբես: Մելիք, թա որ անջուկ օնիս, թա որ իմացզոթիւն օնիս էս քարոզը, էս շանք խրատն էլ քեզ պօլ ա:

Մի աղքատ Մելիքից ողորմութիւն  
կը խնդրէր, Պուղին կասէ.

— Եղայ, Էս ողբմութեան արժանի  
ա, ըստրայ շատ տօ:

Նոյն օրն մի ուրիշ աղքատ ևս աղիո-  
ղորմ ձայնով և սրտաշարժ եղանա-  
կով ողորմութիւն կը խնդրէր Ա'ելիքից,  
Հագուստներն հազար տեղից պատո-  
տուած, կարկատած, աղտոտ և ցեխոտ:  
Ա'ելիքի գութն շատ կը շարժուի և սո-  
վորականից աւելի առատ ողորմութիւն  
տալ կուզէ: Երբ Ա'ելիքն գրամք հանած  
աղքատին կը տար, Պուզին կ'ասէ.

— Ա'ելիք, հէալայ տալ մի՛, մին պա-  
տառ հմբերի. յետոյ խօսքը մուրացկա-  
նին ուղղելով կ'ասէ.

— Ես հլեւոր, տանաս ըս էս մին թիւ-  
ման փուլը, էս քեզ ըմ տլական: Եմ-  
մայ ես թումաս ըռըբեալին աղգան ըմ,  
աման խօսքի հւատալ չըմ, պէտում ա-  
ռաջ իմ աչքաւս շորերդ լոխ էլ տես-  
նամ, շոռկեամ, թա որ քըզանում փուլ  
չի դիւս եկը, էս փուլը քեզ ըմ տլական:

— Ես խեղճ, ողորմելի մարդ եմ, ան-  
տէր անտերունջ մուրացկան եմ յո՞ւստ  
կ'եղնի իմ փող:

— Գեօտիզ ետ լքաւ. ես գիտաս ըմ,  
որ դիւ շատ փուլ օնիս, ա հլիւոք:

Գօտին կ'արձակուի և մի կամար կերևի,  
որն լի ոսկի էր: Օճէ և ժլատ և  
ագահ մուրացկանն շատ կը դիմադրէր,  
սակայն Պուղին կամարը կ'արձակէ, ոս-  
կիների մի մասն եկեղեցւոյն կը տայ, մի  
մասն շինի աղքատ գիւղացիներին և  
ամենափոքր մասը Ղեռնդեանց վանքի  
աղքատ միաբաններին: Խսկ մուրացկանը  
ծեծելով շինից կը վոնտէ և Յմարասի  
Ա. Կաթողիկոսին կոնդակը, որ մուրաց-  
կանին տրուած էր միայն Ղարաբաղի  
գաւառն շրջելու իրրեւ ամենախեղճ և  
գթութեան կարօտ, կառնէ և մի արժա-  
նաւոր աղքատի կը տայ որ շրջելով  
իւր թշուառ ընտանիքը սնուցանել կա-  
րողանայ:

— Ետայ, Պուղի, ես ինիմ Տիգա-  
ֆայտ, դիւ Սղբմուն իմասունան խել-

քաւ անց ըս կացալ: Ա տայ, դիւ ոամ-  
տար ի՞ր, փալչե ի՞ր մրգարա (մարգարէ)  
ի՞ր. ա տայ, հի՞նչայ իմացեր, որ էս խա-  
ռող հիլիւորը փուլ օնի:

— Երկու չուալ ցորէն տօ՛, էս թա-  
գուն փեշակը քերզ սվրցնիմ:

— Պուղի, իրեք չուալ ցորէն ըմ տը-  
լական քերզ: դէ՛ ասի:

— Ա ելիք, հիպու որ աղքատ ըս տս-  
նաս, իրեսին մին լաւ եշի՛, մին լաւ դն-  
տղի՛, թա որ աչքերը կրմրոտած ինին,  
իրեսը ծռուած ինի, մին պատառ էլ ձեռ-  
քերը գուղտղաս ինի, գիտա՛ որ էն մար-  
դը հարբող ա, ողբմոթիւն չի տաս: Հի-  
պու որ տեսնաս իրեսը լաւ, մազերը լաւ  
ոտկացած, իրեսը օրախ, թիւքը քաղցր,  
գիտա՛ որ փուլ օնի, բեն չի տաս ըն-  
տրայ, խբեբայ ա: Զիւն որ մարդուս ի-  
րեսը (դէմքը) սրտին պատկերն ա. փուլ  
ունըցողին սերտը ուրախ կ'ինի. որչանք  
օղի թա իւրան ուրխոթիւնը ծածկի,  
ըղքատի տօն գենայ, խեղճ խեղճ ողբմո-  
թիւն օղի, էլլօհայ կարալ չի իրեսին ուր-  
խոթիւնը ծածկի, պատճառը որ սրտի

ուրխոթիւնը իրեսին ելքայ կըքեւայ, ճար  
չինիլ: Հիպու որ տեսնաս ըղքատին իրես  
տրտում, տխուր, մազերը քնձմնած, ցեց  
ցեց տնկուած, էրկու ամսաւ թուռա-  
ջիւր չի տեսած սուխտրթերի մնան  
թուրմոշկած, գիտա որ աղքատ ա, ողք-  
մոթիւն տօ': Չիւն որ թա՛ ուրխոթիւն  
թատրտմոթիւն սրտան իրեսն ըն փխչիս,  
պարզ ըրուաս: Աղքատ մարդին կ'օղիս  
լաւ շորեր գեց տաս, զբդարիս, էլլըհայ  
իրեսին ելքայ կըքուայ սրտին տրտմո-  
թիւնը:

178.

Կոյն բօպէին երկու աշուղներ կը  
գան, յորոց առաջինն կը հարցնէ.

— Ե, Պուդ, սազիս սիմերը լոխ էլ  
կտրուալ ին, էլ սիմ չի կար, որ սազիս  
ելքայ ընի: Յղքցաւը գինալիս մին մե-  
ռած մարդ տեսայ, ճղմազինքը դիւս  
կալայ, սիմ շինեցի սազիս ելքայ ըրի-  
մըհենկ հինչ հաւա օղում եմածեմ, մինակ

մին հաւայ ա ածում: «Տո՛ւր ինձ, տո՛ւր  
ինձ, տո՛ւր ինձ». Էս ա սիմերիս ածած  
հաւան:

—Մեռած մարդը մըքաւո՞ւր ա, թա  
առանց մրուք:

—Արքաւոր ար, ա Պուղ, քեզ մա-  
տաղ:

—Բա՛ հսկացէ. Էդ մեռնողը եայ տէօվ-  
րիշ ա իլալ, եայ զուրտօղլի, եայ աշուղ:  
իստի մարդիկը միշտ ինքօնիլն ըն սվե-  
րած, տալը սվերած չըն, ընտրայ մըհար  
մռնելանը ետը էլլըհայ ըսես ա. «Ինձ  
տօ՛, ինձ տօ՛, ինձ տօ՛». սաղ ժմանակը  
ծակ աշքը կուշտացալ չի, ուզիս ա մռնե-  
լանը ետն էլ էլլըհայ ինքօնի:

—Իմ սազին սիմերն էլ էր կտո-  
րուել կ'ասէ միւսն, ես էլ մին անմըուք  
մեռած մարդի աղինքները հանեցի, սա-  
զիս վերայ քաշեցի: Այժմ ինչ եղանակ  
որ ուզում եմ ածել, միմիայն այս եղա-  
նակն է չ'նչում: «Դէ՛ առ, դէ՛ առ, դէ՛ առ»:

— Աւստայ, էդ մեռնողը ըռչաթ ա  
իլալ, Շահը ասալ ա. Ոսկիդ տօ', ա-  
սալ ա. «Դէ' առ». Խանը ասալ ա. Ոս-  
կիդ տօ'. ասալ ա. Դէ առ, Մելիքն ա-  
սալ ա, փուլ տօ', ասալ ա. Դէ' առ,  
նուիրակները ասալ ըն նուէրք տօ', ա-  
սալ ա. Դէ առ. տէրերը ասալ ըն տօ',  
տուալ ա, տէօվթիշ, զուրտօղլի, աշուղ,  
աղքատ օգալ ըն, տուալ ա, կնեկը, խո-  
խեքը շոր ըն օգալ տուալ ա, վրժա-  
պետը ըմական ա օգալ, քովխան, գի-  
ղիրը, եասաւուխները ձիւ, հաւ, ճոտ,  
գեարի, տէրման, հաց, կերակուր ըն օգալ  
լոխին էլ տուալ ա:

Երկու կոյր աշուղներ ևս կը գան,  
կ'երգեն Մելիքն նրանց իւր պարտիզում  
կերակուր, գինի և օղի կը մեծարէ: Ու-  
տելու ժամանակ կերակուրները մի-  
մեանցից կը յափշտակէին և գաղտուկ  
գողանալու միջոցին կը թափէին: Ա՞բ-

ջապէս այն տեղն հասաւ, որ միմիայն  
Հագուստները ծիւ ծիւ պատառեցին,  
քիթ, երես, ճակատ իւրեանց սուր ե-  
ղունպներով վերաւորեցին ՀայՀոյելով:  
— Ե, տայ, Պուղի, էս շան տղայ քո-  
ռերը խէ՞ իստի ըն ինիս:

— Մելիք, տսնըհենգ շոն մին տեղ  
սերաւ մին ըմանում լակ կը լակին, ամ-  
մայ էրկու քոռ մին տեղ կարել չըն սե-  
րաւ հաց ուտիլ: Ըստրանց պէտում ա  
ճոկ ճոկ տեղ նստըցնիս, ճոկ ճոկ հաց  
տաս, որ իստի մինմնու խեղտին ոչ:

181.

— Մելիք, Մրասայ վանքումը մին  
քոռ տեսէ, աման օր մես ար ուզես էր-  
կեան ուտուսումը և էլ տարած կերակու-  
րը հւնիս չ'ար ըսես ար, «Խրեկ ա, խրեկ  
էս ինձ հի՞նչ անի կուշտնլական չըմ»:  
Մին օր Կիթղկոսը մին գեառնը սաղ  
խրաւիլ տուաւ փոռնումը, մին մեծ սի-  
նու մաջ դրաւ իւրան ձեռքաւը, զարկից

և ասից. «Տեսնենք այժմ ի՞նչ պատճառ  
պէտք է հնարէ մեր կոյր միաբանը»:  
Հիպու որ քուը ձրբերաւը դփդփից առա-  
ջը գրուած կերակուրը, ասից. «Առ էս-  
քանը որ մինակ ինձ համար են բերած,  
արդեօք իւրանք որքան կերած կը լինին,  
իւրեանց բաժինն քանի՛ ոչխար եղած  
կը լինի»: Տմնա՞ս ըս, աղայ, քուերին  
խսեաթը էս ա, իստի ա ինիս:

182.

Մի՛ ամենայն անդամներով կատա-  
րեալ պնդակազմ, ուժեղ բարձրահա-  
սակ և յաղթանդամ մուրացիկ սրտա-  
շարժ խօսքերով ողորմութիւն կը հայ-  
ցեր Պուղուց, որ պատասխանեց.

— Իսկ հմանչո՞ւմ էլ ըս, որ ողբմո-  
թիւն ըս ուզիս: Ոտքդ սաղ, ձեռքդ սաղ,  
աչքդ սաղ, նէառի մնան տղամարդ ըս,  
համօթ չի՛ քերզ մըհարս որ ուզուզո-  
թիւն ըս ընես: Դիւ ծլութիւնաւ թլը-  
նես ըս ժղուվրդան խեղճ ըղքտներին

քեժինը, ընտրանց հալալ իրաւունքը գիւղնաս ըս, հրլմթիւնաւ (անիրաւաքար) լփիս, ճքիս: Հու որ քերզ ողբմոթիւն ա տուալ, քեզ թամպէալութիւն սվրցրալ շատ մեծ մեղք ա գործալ: Ես քերզ մնանին ողբմոթիւն չըմ տալ էս սհաթիս էս շէնաս դիւս եկ, գինի ըստրայ դէնը լաւ ըշխատի, դիւ էլ կեր քու ըշխտանքան, ըզքտներին էլ տօ', որ համ Յատուծու ըռաջին պարզերես ինիս, համ մարդոց, համ էլ խղճմտանքդ հանգիստ ինի:

Մարդն / սկոյն գնաց և հեռացաւ շինիցն:

183.

Պուղինիւր փոքրիկ թուը կը սիրէք գուրգուրանօք գգուելով, փոքրիկ մանուկը ժպտելով «Պատու, պատու» անորոշ ձայներ կը հանէո բերանից: Պուղին կը պատասխանէ ծիծաղելով:

—Ա լակուտ, դեռ հայերէնը սվերալ չըս, ուուսերէնըս խուսի՞ս:

Արիանգամ Մելիքն շատ դրամ կը  
համրէր, ոսկին, արծաթն զատ զատ դր-  
րած, Պուղին երկու բուռն ոսկի առնե-  
լով դարձեալ գնաց իւր սովորական տե-  
ղը նստաւ:

— Ե, տայ, պել ըս, թա գիֆ:

— Թա որ պել չըմ; Մելիք, Տի՞նչու  
մըչար ըս Պըլը-Պուղի ըսես ինձ: Դէ  
պելը իւրան պլոթիւնը պէտում ա անի  
էլ Տի:

— Ե, տայ, սրսաղուանս, թա գլխիդ  
ձի քացի ա տուալ: Դէ փուլերը բեր,  
Ճելի ըրա, բեն օնիմ: Տեսապ ըմ տես-  
նում: մըչենկ հզեր մարդ կը գեայ:

— Եղայ, ժմանակս փսացալ ա, մին-  
մու ձեռքան ինք ըն ունես, գիւղնաս,  
տնես, ուտես: Դէ դիւ էլ ինտի Տեսապ  
ըրա, որ փուլդ գիւղացեն, տարեն: Էլ  
խօսիլ մի:

— Ա, տայ, չըկոտեկ, օրը կերսօրին,  
Մլըքարանում գիւղոթիւն կը նի:

— Մելիք, ես ինիմ քու օծեալ կար-

գը, մեծ մեծ գիւղոթիւնները, պատուաւոր գիւղոթիւնները լոխ էլ իստի օրը կերսօրին ըն ինիս իստի տուններում, Շահի տուններումը, դիւանիսաններումը, Խներին Խանլղներումը, վնքերումը։ Մլիքարաններումը, տուններումը։

Մելիքն այլ ևս չխօսեց և ոսկիներն մնացին Պուղու ափում։ Քանզի կաշառք էին։

+ № 185.

Մելիքն մի ամենածոյլ աղջիկ ունէր, տանող շլինելու պատճառաւ մեծացած՝ որ և տան մնացած էր։ Պուղին ասաց։ — Մելիք, էս աղջիկը իմ Կրըպետիս մըհար ուղիս ըմ, տաս ը՞ս։

— Ե, տայ, տուէ, Աստուծ շնուրհաւոր անի՛. ամմայ, իմ աղջիկը գիտաս ըս որ շատ ա թամպէալ, մըշանք թամպէալ ա, որ տասն օր հաց չի տաս, եր չի կենալ թա տաշտան հաց ինքօնի՛ օտի։

— Ա ելիք, ես քու չիւրզատ աղջեկը  
ինտի մին քեւհնցնիմ, ինտի մին քեւհ-  
նցնիմ, որ ասիս, չենց ինի ալըհայ ճե-  
րան ինի:

Ճիւրզատի նազելի հասակն, դէմքի  
բոլորակ և գեղեցիկ գծագրութիւնն ըս-  
քանչելի էին: Պսակին և տուն տարին:  
Պուղին երկու օր հարսին բնաւ կերա-  
կուր չ'տուաւ. վասն զի քանիցս որ սեղա-  
նի կը հրաւիրէին, նա ծոյլութեան պատ-  
ճառաւ միշտ անշարժ կը մնար իւր տէ-  
ղը: Երրորդ օրն կերակուրի ամանը հար-  
սից փոքր ինչ չեռի գնել տուաւ, հարսն  
սաստիկ անօթութիւնից ստիպեալ սողո-  
լով կերակուրը առաւ և կերաւ: Եյսպէս  
չետզչետէ կերակուրը հարսից աւելի չե-  
ռու թողնելով, հարսն սովորեցաւ նստած  
տեղից շարժուիլ և սկեսրի չետ հաց  
ուտել: Պուղին բրդի կծիկը հարսին կը  
տար և կը պատուիրէր ասելով:

— Հիւրզատ զուզիս, որ գամ, տես-  
նամ կծկալ ըս, հաց ըմ տլական քերզ,  
թա որ գեամ, տեսնամ կծկած ոչ, հաց  
չըմ տլական:

Ա երջապէս հարսն նկատելով որ  
անգործ մնալով անօթի, քաղցած և  
ծարաւ ես կը մնայ, կը նուազի, օրէցօր  
կրկնապատկէց իւր աշխատութիւնը ա-  
կամայից ստիպեալ և այսպիսի կրթու-  
թեամբ եղաւ ժիր, աշխատասէր և գոր-  
ծունեայ:

.186

Մի քանի ամսից յետոյ Մելիքն ե-  
կաւ իւր աղջեկը տեսնելու: Հիւրզատն  
բրդաթելի կծիկները բերելով իւր հօր  
տուաւ, որ զարմացած հարցուց.

Հիւրզատ, աղջեկս, էս կծեկները  
Տի՞նչի մըհար բերեր, ինձ տուէր:

— Եպեր, բերալ ըմ, որ կծեկ անիս:

— Ե, աղջեկ, իսէ:

— Ապեր, ըստեղի ատէաթը մեր տան  
ըտէաթին մնան չի. մեր տանը կ'օգիս  
ըշխատիս, կօզիս ոչ, հաց կ'օտիս. ամ-  
մայ ըստրանց տանը ատէաթը էս ա,  
թա որ ըշխատիս, կ'օտիս, թա որ ըշ-

խատիս ոչ, առի մին պիծի պատառ էլ  
հացըն տալ որ օտիս: Եայ պէտում արեն  
շանիս, սոված մեռնիս, եայ պէտում ա  
ըշխատիս, օտիս, ապրիս: Ածեկները ըն-  
տրայ մըհար բերէ: Դէ՛ զիրաւ տօ՛, զի-  
րաւ տօ՛, որ հաց տան օտիս:

✓ 187.

Պուղու դրացին կ'ամուսնացնէ իւր  
որդին. նորեկ հարսն իւր վեցամսեայ շր-  
ջանը\*) արդէն շատունց լրացուցածէր  
և աղքիւրից ջուր բերելու կը դժկամա-  
կէր ծուլութեան պատճառաւ: Մի ա-  
ռաւօտ սկեսուրն և սկեսրայրն սափորը  
միմեանցից կը յափըշտակէին քաշքշե-  
լով: Այ կ'ասէր, ես պէտք է զնամ

\*) Այն ժամանակուայ նորեկ հարսներն  
ստիպուած էին սովորութիւնը յարգելու համար  
վեց սմիս տանից դուրս չ'գալ եւ եթէ տունն  
էլ մարդ գալու լինէր, առագաստում կը թագ-  
չէին, որպէս զի չտեսնուէին եւ չերեւէին մար-  
դոց:

ջուր բերելու աղբիւրից, նա կ'ասէք, ես  
պէտք է գնամ, որպէսզի հարսն ամաչէ,  
պատկառի և ինըն սափորը առնելով  
ջուրի գնայ: Աակայն վերջինս փոխանակ  
պատուելու իւր մեծերը և կատարելու  
իւր պարտաւորութիւնը լրեաբար կ'ասէ.

— Հի՞նչ ըք իւրիւր ռեխ կրծկոր-  
ծում, չոփ (վեճակ) քցեցէք, ձղանայ  
մինը ըռւարհանայ գեցէք ջուր բրելու,  
մինը իւրիւկիւնը:

Պուղուն կինն, որդիքն, հարսներն  
ամբողջ մեռածէին, իւր տունը պար-  
տէզը և այգին ծախելով և դրամները  
մի փոքր խուրջե մէջ դնելով գիւղեց  
յաւիտեան կը բաժանէք: Դիւղեց գուրա  
եկած ժամանակ տեմնողներն կը հար-  
ցնեն.

— Պուղե, էդ հի՞նչ ա շլակէնդ:

— Տունս, բաղս, բաղչաս:


Պուղին Շօշու գիւղում հիւ անդ էր  
իւր խորին ծերութեան մէջ: Բոլոր քա-  
հանայթ և ժողովուրդն հաւաքուած էին  
իւր անկողնու շուրջն և կարեկցաբար  
կը հարցնէին.

—Պուղի ապեր, սերտդ հի՞նչ առ-  
զես, քերզ մատաղ, ասի, որ բերինք, օ-  
տիս, մեզ օրչնիս:

—Զեզ կեապիւտը (երկինքը) օրչնի,  
էն Աստուծը օրչնի, որ ձեռնանը երը  
ձեռք չի կայ (բացի նրանից ուրիշ Աս-  
տուած և ուրիշ բարձր ձեռք չկան):  
Զըզանայ ուզես ըմ դրախտի խնձոր,  
ընմհական ջիւր, Ըստուծու հաց, Քրիս-  
տոսի օրչնած հացը, զինին, ձըզանայ  
սրբութիւն ըմ ուզես, որ ճաշակուիմ,  
գինամ Քրիստոսի կոշտ: Իմ մարմինս  
էլ էն որ ձեզ ասալ ըմ, էն կրանումը  
(քարայր) թղեցէք, անումը դրէք Պըլլ-  
Պուղու կարան:

Պուղին մեռաւ և մեծ հանդիսով

և պատուաւոր յուղարկաւորութեամբ  
ամփոփուեցաւ Շօշու և Արկաթալու  
գիւղերի մէջ եղած քարայրում:  
«Յիշատակն Արդարոց օրհնութեամբ  
եղիցի»:



զիստ Ելաբանքայրակ, զատ ուստի և  
այս Ելաբանք չ այց է ապահովելու  
Ապահովություն, հայր Չի գեղը մի  
իրավ Ելաբանք զարդարել պահանջման:

: Ելաբանք

Ելաբանք

# ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ա, Է.

Աղառլու, Հիւանդ:

Ալաթ, արօր:

Ախը, բայց, սակայն:

Ածիլ, նուագել, լցնել:

Ակը տալ, այցելել:

Ամէակ, աշխատութիւն:

Ամմայ, բայց, սակայն:

Այան, մայր, մեծ մայր:

Անիլ, անել:

Անձուղ, ածուխ:

Անձաղ, հազիւթէ:

Անկուջ, ականջ:

Աչքը բռնել, հաւնիլ:

Ապեր, հայր:

Ա Պուղ, Պուղի:

Առի, աւելի:

Առի խրեկ, աւելի սակաւ:

Առի ճիլիզ, բոլորովին:

Առի', ասա՛:

Ասուիլ չի կեալ, դժուար ին է ասել:

Աստուծ, Աստուած:

Ատայ, այ տղայ:

Արազ, երազ:

Աքեր, քոյր, ո՛վ քոյր:

Բ

Բարան, բերան:  
Բացրի, բարձր:  
Բեն, բան, գործ:  
Բերիլ, բերել:  
Բիւն, բոյն:  
Բնցնել, գործածիլ:  
Բրակիլ, բարակիլ:

Գ

Գեալ, գալ:  
Գեաղան, գաղան:  
Գեամա, գալիս է:  
Գեառնը, գառն:  
Գեասպար պուք անիլ, սաստիկ վախից փախչել:  
Գեատայ, ծառայ:  
Գենալ, հագնիլ, դգենուլ:  
Գենդէատ, գանդատ:  
Գեօլ, գոլ:  
Գեօդնուկ, գորս:  
Գեօլութիւն, գիւղութիւն, գոլութիւն:  
Գիզեր, գիւղակետի օգնական:  
Գլթէօլ դգալ:  
Գլշեր, գիշեր:  
Գլշրհանայ, քշրհանայ, առաւօտեան:  
Գիզել, ախորժանօք ուտել:  
Գիւղանալ, գողանալ:  
Գիւմ, գոմ անասնոց:  
Գիւմաշ, գոմէշ:

Գիտալ՝ գիտել:

Գիտկան, գիտուն:

**Պ**

Գեռնալ՝ գառնալ:

Գէ՛ օ՛ն (գործի՛ր, խօսի՛ր ևայլն)

Գէ՛, ուրեմն:

Գէ որ իտի ա, քանի որ այդպէս է:

Գիւ, գու:

Գիւ ինիս գիւ, այս քեզ իրատ:

Գիւ ինիս էն Աստուծը, Աստուած սիրես:

Գիւս օնիլ հանել:

Գնտղել, նկատել, նշմարել զննել:

**Ը**

Եայ, կամ:

Եանշաղ, շատախօս:

Եարաղ, զէնք:

Եասաւուլ, ելսուուլ, հարկահան, սպասաւոր  
քաղ, պաշտօնէից:

Եըրայ, վերայ:

Եիժիս ըմ, կ'արժեմ:

Եկէ, եկի:

Եսուես, ինքնին, ես ինձ:

Ես ինիմ էն Աստուծը, Աստուած վկայ:

Երինիլ հեծնել վեր ելնել:

Եր կաց, վեր կաց:

Ետը, ետքը, յետոյ:

Ետըհետը, յետոյ, վերջը:

Ետ տալ, յետ տալ:

Եօխայ, բարակ լօշ հաց:

**Զ**

Զատ, իր, բան:  
 Զարպազան, գնդանոթ:  
 Զերթուն, արթուն:  
 Զիւթնանալ, զարթնուլ:  
 Զկեռ, զղեար:  
 Զուռնայ, շեփոր:  
 Զոզոան, խիստ թթուն:  
 Զորպայ, քաջ, ուժեղ.

**Է**

Էգուց, վաղը:  
 Էլլըհայ, կրկին, դարձեալ:  
 Էլլեկ, հասարակութիւն, ժողովուրդ:  
 Էդ, այդ:  
 Էդչանք, այդչափ:  
 Էն, այն:  
 Էնչանք, այնչափ:  
 Էն տիւնեայ, միւս աշխարհն, երկինք:  
 Էս ա հրես, ահաւասիկ:  
 Էս, այս:

Էրիւ այրել:  
 Էրկեան, երկար:  
 Էրկու, երկու:

**Ը**

Ըղբայ, դորա:  
 Ըլպաստրակ, նապաստակ:  
 Ըխուէ՛ օ՛խ:

ԸՀԸՐ՝ ա՛շաւասի՛կ  
ԸՂՐՄԾՀԻւղի, ողորմածաշօդի:  
ԸՄ, եմ:  
ԸՆԵՐԱ՛Կ, երանի՛  
ԸՆԻԾԻԼ, անիծել:  
ԸՆԼԱԿԱՆ ըմ, պէտք է անեմ:  
ԸՆԼԱԿԱՆ ընք, պէտք է անենք:  
ԸՆԼԱԿԱՆ ըք, պէտք է անէք:  
ԸՆՀԱՄԻԼ, անհամիլ:  
ԸՆՃԱՆԱՅ, ինճանից:  
ԸՆՏԵՀՄԸ, վերջը:  
ԸՆՏԵՂ, այն տեղ:  
ԸՆՏԻՒՐ մըշար, նորա համար:  
ԸՆՏՐԱՅ, նորա:  
ԸՆՑՆԻԼ, անցնիլ:  
ԸՆՔ, ենք:  
ԸՆԱՁԻՆ, առաջին, առաջք:  
ԸՆՀԱԹ, հարկատու:  
ԸՆՑՆԱԿ, անդրանիկ:  
ԸՆՑՆՈՐԴ, առաջնորդ:  
ԸՆԱՌԱՆԱՅ, առաւօտեան:  
ԸԱ, ես (բայ):  
ԸՍՏՐԱՅ, սորա:  
ԸՍՏԵՂ, այս տեղ:  
ԸՍՏՈՒԾԱՆԱՅ, Աստուածանից:  
ԸՍՏՐԱՆԱՅ դէնը, այսուհետեւ:  
ԸՍՈԲ, այսօր:  
ԸՄԵՂ, այդտեղ:  
ԸՐԿԵԱԼ, երկիլ:

Ըրեիլ, Երեիլ:

Ըրեքան, Երեքեան:

Ըրէ, արարի, արի:

Ըրըծելու, արածելու:

Թա

Թա, թէ:

Թա որ, եթէ:

Թազալամիշ անիլ նորոգել:

Թազնիլ նստել (գործ է ածուռում անսուրբ  
կենդանեաց համար):

Թակել, ծեծել:

Թայ, բեռան մի հակը, խուրճի մի աչքը:

Թառլեան, բաղէ թռչունը:

Թավար, շահէն թռչունն:

Թէանպէալէթ, վաճառականի բեռներ:

Թթո, թթու:

Թիւլ անիլ թողուլ:

Թիւնդ, սաստիկ, խիստ:

Թիւքը քաղցը, մազերը սարքին:

Թկըմըհակ ինիլ մէկղմէկ ծեծել փայտուլ:

Թոխը, փորիչ, մուրճ:

Թոխիլ վայրի վերոյ ճոռոմարանել:

Թոխսը, թուխս, թռչնոց թուխս նստիլն:

Թող թող անիլ դէսուդէն նետել:

Թումի, բլուր:

Թոռ, անձրև:

Թրեք, ազք անասնոց:

Թփլէհարիլ շարժել, թոթուել:

**Ճ**

Ժաժ, շարժ, երկրաշարժ:

Ժմանակ, ժամանակ:

**՚**

Ի, էի:

Իժիս լմ; կ'արժեմ:

Իլած, չիալծ, եղած, չեղած:

Իլաւ, ծնաւ, եղաւ:

Իլիմ իլիմ փախչել, շարունակ փախչել:

Իմնաս չե, չէ իմանում:

Ին, զին, սատանայ:

Ինիլ լինիլ:

Ինիս, ինի, լինիմ; լինիս, լինի:

Ինձ ու ինձ, ինքնին, իւրովի:

Ինքն իւրան, ինքնին:

Ինքկալ, առ, ընդունիր:

Ինքօնիլ յինքն առնուլ, գնել:

Ինտի, այնպէս:

Ինտինին, այնպիսւոյն:

Իշել, լոյս, լուսաւորութիւն:

Իսկի, բնաւ, ամենեին:

Իստի, այդպէս:

Իստինին, այսպիսւոյն:

Իտի, այդպէս:

Իրես, երես:

Իրիգնակ, արեգակ:

Իւիլ, աւելի:

Իւրան, իւր:

Իւրան իւրան, ինքնին, ինքն իրեն:

Իւրիւկին, երեկոյ:  
Իւրկիւնան, երեկոյեան:  
Իւրկիւնանց, երեկոյից քիչ անցած է:

**L**

Լաշին, կուրծքը լայն թռչուն, թշնամի կոռւնկ-  
ներին:

Լաւ ա, լաւ է:  
Լեփիլ լափել:  
Լըհայ, նոյնանման, յարենման:  
Լըհայ, երբոր:  
Լըհայ, այնպէս:  
Լըպատիլ ծեփել:  
Լիկը լիկը, լի, լի:  
Լինկ, սիդ ջրաղացի:  
Լիւզիւ, լեզու:  
Լիւզտալ, լիզել:  
Լիւկաց, թո՛ղ, թողտուր:  
Լիւսահիւգի, լուսահոգի:  
Լոխ, բոլորը, ամենը:  
Լողտիլ անյագաբար լիզել:  
Լոկ, օձաձև կարմիր սողուն:

**Խ**

Խալխ, հասարակութիւն:  
Խալլու, որսական շուն:  
Խղակոթ, պարանոց:  
Խղատակ, պարանոցի ետևի կողմը:  
Խէ՞, ինչի՞:  
Խընըրհովթիւն, խոնարհովթիւն:

Խլեզնը, մողէզ:  
Խխոց, երեխայոց:  
Խոխայ, երեխայ:  
Խոխերք, երեխաներ:  
Խոշկեապէար, մրգեղէն:  
Խուտըդիզեր, խուտաղէզեր:  
Խռնըխաթիշ անել, խառնել, խռշտորել:  
Խստուվանիլ, խոստուվանել:  
Խտետ, գիրկ, գոգ:  
Խտել տալ գրկել տալ:  
Խրեկ, սակաւ, քիչ:  
Խրկանալ սակաւանալ քիչնալ.

❖

Ծեփիլ զարնել:

❖

Կալալ ըմի գնել եմ:  
Կարդիլ կարդալ:  
Կարիլ կարողանալ կարել:  
Կատար, գլխի գագաթն:  
Կեափ, զուարձարանութիւն:  
Կեռեք, ատամ, ակոայ:  
Կեօտակ, պօչատ, ագին կարձ:  
Կղնուիլ բարկանալ:  
Կիւրկեահ, ագահ:  
Կըման, զատ, քեզնից զատ:  
Կըծըկեծի անիլ, կայծակել փայլակել:  
Կըսօր, կէսօր:  
Կտարիլ կատարել:

Ածիլ, խածնել:  
Ակզան, կկղելու տեղ,  
Կողե՛ ինի, կողե՛ ոչ, թէ՛ լինի, թէ՛ չլինի,  
Կոլ տալ, լել, կլանել,  
Կոնդաւ անիլ, գլխաւ անել, գլուխը շարժել,  
Կոշտ, կուշտ:  
Կոշտ, կշտի, մօտ, մոտի:  
Կոչ ածիլ կուացնել, ծռել,  
Կոտըր, կոտրուած, վատանուն:  
Կորայ, կրիայ:  
Կուրծնես, կը կործանի:  
Կոկարէնք, եռոտանի:  
Կտրուտես, կոտրատել, ջարդել,  
Կրկտորիլ, կարկատել:



Հագի, ագի, պօչ:  
Հազ անիլ, ախորժել:  
Հալի հալպէաթ, անմիջապէս:  
Հախ, դին, իրաւունք, առնելիք:  
Համբայ, գեղօրէից մէջ նախապատիւ մարդ:  
Հայաթ, տան առաջքը, բակ:  
Հար, հայր:  
Հարբիլ, արբիլ, դինովեալ:  
Հաւայ, եղանակ, օդ:  
Հաւայի, աննպատակ արձակուած գնտակ:  
Հետ, մի անգամ, քանիցս:  
Հետան, ետեից:  
Հղեր, հաղար:  
Հըշերին, հայոց:

Հընչայ, հնչա՞ն, ինչեց:  
Հընպարել, համբել, հաշուել:  
Հընցնիլ, անցնել:  
Հիլի, հայելի:  
Հի՞նչ, ի՞նչ:  
Հինչ ալլիմիլլաթ, ի՞նչ կենդանի:  
Հի՞նչ, քանթէ:  
Հի՞նչ տեղ, ո՞ւր ի՞նչ տեղ:  
Հիւգի, հոգի:  
Հիւշտ, հիւշտ անիլ, ձուկերը դեպի ուռկան  
քշելու համար երկար ճիպով քարերի  
տակ խառնել:  
Հորագ, ուրագ:  
Հո՞ր, ո՞ւր, ինչի՞ համար:  
Հո՞ւ, ով:  
Հո՞նց, ի՞նչպէս:  
Հսնելաւ ա, հասնելու վերայ է:  
Հրեան, դրացի:  
Հրըմայիլ, հրամայել:  
Հրկըշօթիւն, ընկերութիւն:

❖

Զեն անիլ, կանչել  
Զըձեռնակ, ծիծեռնակ:  
Զթաւոտ, ծիթահոտ:  
Զիւկնը, ձուկն:  
Զղանիլ, շերտել, կացնով մանրցնել  
Զէօղի, ձօղ, երկար փայտ:

Ղ

Ղանլու, մարդասպան:  
 Ղէաշէանկ, գեղեցիկ, կոկիկ:  
 Ղաւալ չէփորահար, նուագածու:  
 Ղէյը, եղունգ:  
 Ղնջղիլ, ատամները ահացուցիչ ձեռվ ցոյց տալ:  
 Ղնջղած, նոյն է:  
 Ղշղըրդանիլ, խրախուսել:  
 Ղոլ, կողմ:  
 Ղոնաղ, հիւր:  
 Ղորդ, ճշմարիտ:  
 Ղուղղուն, արծիւ:  
 Ղրպէօթիւն, օտարութիւն:

Ճ

Ճանավար, գաղան:  
 Ճեանձ, ճանձ:  
 Ճանձաւ անիլ, ճանձերի խայթերից նեղուած  
                           գլուխը շարժել:  
 Ճելլի՛, ճելլի՛ ճելլի՛, շուտ շուտ:  
 Ճիլիլ խրեկ, ամենաքիչ:  
 Ճին, ատամ գաղանների:  
 Ճիւչիւտ, հրէայ:  
 Ճկոիլ, բեռան ծանրութիւնից ընկճիլ:  
 Ճկտամաջ, ճակատամէջ:  
 Ճղղալ գոռալ:  
 Ճողապ տալ, դիմադարձութիւն անել:

**Մ**

Մաթ մնալ զարմանալ:  
Մաջ, մէջ:  
Մար, մայր:  
Մարտիմաղար, վնասակար:  
Մեկալ միւս:  
Մենսո ընկեաւ, միտքս ընկաւ:  
Մես, միս:  
Մըշալ գաւառ:  
Մըշասուր, վայրենի վարդենւոյ պտուղ:  
Մըշէկանց դէնը, այսուհետեւ:  
Մըշեկ, այժմ; հիմի:  
Մընան, մնան, նման:  
Մընկեամ, միթէ:  
Մըջըներան, նոցա միջեց:  
Մրգրէ, մարգարէ:  
Մին կռան, մի սկսելով:  
Մին մընու, միեանց:  
Մինմուանայ, միմեանցից:  
Միւսափիր, հիւր:  
Միւլք, կալուած:  
Մողիդ, ամենափոքր ձուկն:  
Մոլ, մուխ, ծուխ:  
Մոկնը, մուկն:  
Մունթ, աշակերտ քահանայի, վարժապետի:  
Մունք, մէնք:  
Մղաւոր, մեղաւոր:  
Մշանք, այսչափ, այդչափ ևն:

Մոլքշոթիւն, հայհոյութիւն մեռելները հայ-  
հցել:

Մրգոթիւն, մարգութիւն:

Մրհաւ, փասեան:

Մրջեմնը, մրջիւն:

**Յ**

Յղե, ճանապարհ:

Յղե ինիլ, ճանապարհ լնկնիլ

Յղէ ի'լ, ճանապարհ լնկի'ր:

**Կ**

Կաղլ արա՛, պատմի՛ր:

Կաշի, անգրագէտ:

Կէառ, ամենամեծ ուղար:

Կըհար, նախաճաշիկ:

Կըհետ, հետը:

Կիկացած, վառուած:

Կիկեալ, դպճել:

Կիկցնել, վառել:

Կիհսի՛, հասի՛ր:

Կի՛ մըտ, մտի՛ր:

Կի քսուիլ, նրան քսուիլ լնդ այն քսուիլ:

Կոխտայ, գլխակապ ձիու և էշի:

Կոր մինայ, նորից:

Կշանց տալ, ցոյց տալ:

**Շ**

Շալվսը, վարտիկ:

Շէրէթ, շարաթ:

Շիւշայ շիւշայ, ողջ ողջ ածուխ:

Ըլլէօր, սալոր:

Ծհատ վկայ:

Ծհար, քաղաք:

Ծմիշմիալի, յորդահոս:

Ծոռգեալ որոնել:

Ծոռ տալ դարձնել պրանել:

Ծոռտըշոտու անիլ ամեն կողմն դարձնել:

**Պ**

Ոննը անիլ կանգնեցնել:

Ոննը ծանտր, յղի, ծնանիլն մօտ:

Ոսան անիլ չափաղանց վախնալ:

Ոտ կալ հոտ առ, հոտ քաշ'ր:

Ոտ կենալ կանգնիլ:

Որածել թափել հեղուլ:

Որբերիլ վար իջեցնել:

Որ ասի թա թիսի, երր որ զարկէ:

Ա՞չչանք, ի՞նչքան: Որչա՞նք, որքա՞ն:

Որ չըմ ըրալ դեռ ածիլած չեմ:

Որ տալ բնեռել:

Ուլալուշ անիլ ոռնալն դայլերի:

Ունպրումն, կեանքումն:

Ուշունցատու, հայհայիւ:

Ուստայ, վարպետ:

**Զ**

Զաղալ, աղուէսանման կենդանի որ խաղող-ները կապականէ:

Զէանկէալ, կարթ ձկնորսի:

Հիւլ ձիու, էշե ձածկոց:

Հղան, հաւու ձագերը դողցող թռչունն։  
Հոմաղ, հովուական ձեռնափայտ։  
Հուրու, մինչև։  
Հիւրուկիւն, մինչև երեկոյ։  
Հոփ, բարակ չոր ճիւղ։

¶

Պահ տալ, ՚ի պահու տալ, յանձնել։  
Պայթալ, անասնաբոյժ։  
Պայաթի, տխուր եղանակով երգ։  
Պար, պտուղ։  
Պէազրգեան, վաճառական։  
Պէթար, աւելի վատ։  
Պէտխոյ, բնաւորութիւն վատ։  
Պէյնը, ուղեղ։  
Պըյապուռ, պէյսրաթանել, անպատուել։  
Պիծի, փոքր։  
Պիծի պատառ, աւելի փոքր, քիչ։  
Պլերին, խենդերին։  
Պլրկատար, խենդ գլուխ։  
Պլոթիւն, խենդութիւն։  
Պո՛, պո՛, պո՛, զարմացական նշան երկիւղի ևն։  
Պուանչել, պառաչել։  
Պրիշակ, աւերակ։  
Պրծնելաւ ըմ, կը վերջացնեմ։  
Պրընպարան անիլ, դէս ու դէն շրջել։  
Պօղ, եղջեւր։  
Պօղ պօղ անիլ, եղջեւր ածել։  
Պօղ չի՞, բաւական չէ՞։

¶

Զանկը ընկնիլ ձեռքը ընկնիլ:

Զէարկ, շարք:

Զըռուկուտիմեր, ջրի եղերքը բուսած կանաչեղէն

¶

Ուամուէար, գաղտնագէտ:

Ուազին, առաջին:

Ուրքնալ, Առաքեալ:

Ուեխ, կղակ, բերան:

Ուուշ վաթ, կաշառք:

¶

Սալթանաթ, մեծ պատրաստութիւն:

Սելուսուս սաստիկ անձրեւ:

Սերտ, սիրտ:

Սէզնը, սեզնի ծառի պտուղն:

Սիրեմիը, ծառոց կեղենի ներսի նուրբ շերտն:

Սուվերիլ, կամ սվերիլ, ուսանիլ:

Սուխտրաթեր, սխտորի տերեւ:

Սուհը խորհուրդ անիլ, խորհիլ:

Սուլծանալ, անոթենալ:

Սուտանայ, սատանայ:

Ստեղծուղ, ստեղծող:

Սրտմայ ինիլ, որեիցէ բանից զզուիլ, գանիլ:

¶

Վար, ցանք:

Վարիլ ըմ տլական, ցանել կըտամ:

Վիսես ըմ, կը վախնամ:

Վրպթալ ցաւի սաստկութիւնից լալ:

**Տ**

Տալու, կռնակ:

Տազ անիլ, լոել:

Տարի, տընան, տընում, տարի, տարուան, տա-  
րուայ մէջ:

Տատիլ, շահիլ:

Տէամ դնել, փիլաւն քամելից յետոյ մաղմադ  
կրակի վերայ դնել:

Տէարտ, ցաւ, հոդ:

Տեռնը, տիրոջը:

Տէրման, յարդ:

Տէօվ, մօտացածին ամենամեծ գաղան:

Տէանկեասար, շատախօսութեամբ գլուխցաւցնել:

Տըլական ըմ, պէտքէ տամ:

Տիէր, վերև:

Տլսմել, լաւ ծեծել:

Տնազ անիլ, ծաղրիլ:

Տնամաջ, տան մէջ, կաչ, կարասի:

Տնջոթիւն: հանգստութիւն:

Տոյտաղ, արագիլ թռչունն:

Տունտ, նստոյ տեղին:

Տուռնայ, կռունկ:

Տսնաս ըմ, կը տեսնեմ:

Տվրընին, երեկոյեան տաւարների եկած ժա-  
մանակ:

Տըռւթակ, անխնայ ծեծել:

Տըտըքէշ, ամենի համար հոդս անոդ:

Տօ՛, տո՛ւր:

Տօն, հագուստ:

**P**

Թիւկիւն, երեկոյ:

**S**

Ցեց օնիլ, ագին ցցել:

**H**

Կըռըւեռ, ետև ետև գնալ:

**Φ**

Փատ, փայտ:

Փըլըփալի, թաւալ գլոր:

Փըյատայ, չետիոտն, ոտքով գնալ:

Փըյալայ, գաւաթ, թաս:

Փոլ ածիլ փուլ ածիլ փլցնել:

Փոխս շընկնիլ չփոխուել:

Փոռնը, փուռն:

Փուշտեսակ, փոշետեսակ մեղք:

**Φ**

Քա հօր, քո հօր:

Քաշի, հոտ ան:

Քաւթառ, զառամեալ պառաւ:

Քեանդ խուտա, (գիւղի աստուած) իշխան:

Քեաքլիկ, գեղագանգուր:

Քեշեայ, երանիթէ:

Քեօվիսայ, գիւղապետ:

Քէօհնայ, հնացած, հին:

Քէօմէակ, օգնական, օգնութիւն:

Քլոլիլ արջեց, շանից վիրաւորուիլ:

Քոն ինիլ քնանալ:

Գ ը, քունը տանիլ:

Քո ռամեխ, ձիու մաշուած բեեռ:

Քշոնըմ քո շունն եմ, ձև խոնարհութեան:

Քշրհանայ կամ գշրհանայ, առաւօտեան:

Քչուել, կեղկիլ:

Քրուքանդ անիլ քարուքանդ անել աւերել

¶

Օժազ, սենեակ:

Օժ, ուժ, ոյժ:

Օյին, փորձանք:

Օնիլ զնել առնել, ունենալ


Օշ ուշքը, ուշաթափ:


Օրիշ, ուրիշ:

Օտիլ ուտել:



ՀՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՎՀՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ  
ԱԿԱԴԵՄԻԿԱ





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0185783

A 62885  
hP